

ԱՐԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

ՀԱՅԵՐԻ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ՕՍՄԱՆԵԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

9(56)
Փ-31

3080

ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

1996

Աւետիս Փափազեան
Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում
Երեւան, Լոս Անջելես, 1995, 116 էջ:

Գրքում պատմական եւ վաւերագրական աղբիւրների հիման վրայ լուսաբանւում են դարերի ընթացքում Օսմանեան կայսրութեան ծանր լծի տակ հեծող հայ ժողովրդի իրաւական վիճակը, նրա կրած տառապանքներն ու անլուր կեղեքումները, իսկ այնուհետեւ 20-րդ դարի նախաշեմին Ապտուլ Համիտեան կառավարութեան բռնատիրութեան եւ երիտթուրքերի կառավարութեան կողմից դաժանօրէն կազմակերպուած արեւմտահայերի զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները, որոնց զոհ գնացին մօտ մէկուկէս միլիոն անմեղ հայեր:

Վերջում տրւում է 1919-1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի կառավարութեան յանցագործ պարագլուխների դատավարութեան ամփոփ նկարագրութիւնը. ինչպէս նաեւ համաշխարհային առաջադէմ մտաւորականութեան եւ քաղաքական գործիչների տեսակէտներից եւ գնահատականներից հատուածներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս հայերի ցեղասպանութեան մասին:

Նախատեսուած է ընթերցող լայն շրջանակների համար:

Նուիրում եմ հօրս,
հասարակական անխոնջ գործիչ
Լուսահոգի Համբարձում Յակոբի Փափազեանին
եւ մօրս Մարի Փափազեանին.
հօրեղբօրս՝ թրքական բանակի սպայ
Աւետիս (Հաւուշ) Յակոբի Փափազեանին,
որը 1915 թ. իր ձիու վրայ դաւադրաբար սպանուեց
թիկունքից նոյն թրքական բանակի հրամանատարութեան
կողմից, ինչպէս նաեւ նոյնպէս դաւադրաբար եւ
անողոքօրէն զանգուածային ձեւով գնդակահարուած
թրքական բանակի հայ զինուորների, սպաների եւ բոլոր
մեր անմեղ զոհերի պայծառ յիշատակին:

Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելըսի վարչութիւնը
իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ
Տէր եւ Տիկին Մարտիրոս եւ Ռիթա Իսկէնտէրեաններուն
որոնց մեկենասութեամբ լոյս կը տեսնէ այս հատորը:

ԵՂԵՌՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐԺԷՔԱՒՈՐ ՀԱՏՈՐ ՄԸ

Հայոց Մեծ Եղեռնի 80-ամեակին առիթով, հայ պատմագրութիւնը չհարստացաւ բազմաթիւ նոր հրատարակութիւններով: Հատուկենտ հրատարակութիւնները չէին ներկայացներ որակական յաւելում մը՝ կատարուած նախորդ աշխատութիւններուն վրայ: Խորքին մէջ, անցեալին, պատմագիտական աշխատանքներուն առիւծի բաժինը կը պատկանէր հայրենի պատմագէտներուն, ակադեմական շրջանակներուն, որոնք առաւելագոյնս կ'օգտագործէին ընձեռուած հնարաւորութիւնները:

Համակարգի մը փլուզումէն ետք, երբ ամէն ինչ վերադասաւորում մը ունեցաւ, Հայաստանի պատմաբաններուն առջեւ այլեւս նոյն հնարաւորութիւնները չկային թէ՛ նիւթերու պատրաստութեան եւ թէ՛ հրատարակութեան իմաստով: Ահա թէ ինչու, 80-ամեակը նշուեցաւ ժլատ հրատարակութիւններով:

Թերեւս բացառութիւն մը կը կազմէր Լոս Անճելըս հաստատուած հայրենի պատմաբան, Փրոֆ. Աւետիս Հ. Փափազեանի աշխատասիրութիւնը, որ 1994-ի վերջաւորութենէն մինչեւ 1995-ի Մարտ ամիսը լոյս տեսաւ «Նոր Օր»ի յաջորդական թիւերուն մէջ, արժանանալու համար հատորի մը վերածուելու բախտին:

Փրոֆ. Աւետիս Փափազեանը այն եզակի մասնագէտն է, որ ի վիճակի է վերծանելու Օսմանեան ժամանակաշրջանի արաբատառ վաւերաթուղթերն ու պաշտօնական այլ փաստաթուղթերը, որոնք դուրս մնացած են պատմաբաններու հասողութենէն: Ան, այս հատորին մէջ կ'օգտագործէ նման վաւերաթուղթեր, բազմապատկելով երկասիրութեան արժէքը: Ան է, որ 1989-ին, առաջին անգամ ըլլալով, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի միջոցաւ լոյս ընծայեց «Հայերի Ցեղասպանութիւնը ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերի» հատորը, որ արաբատառ պաշտօնական արձանագրութիւններու հիման վրայ կու տար դատական այն ամբողջ նիստերը, որոնք կատարուած էին 1919-ին Կոստանդնուպոլսոյ մէջ: Թրքական դատարանը, 1919-ին կը դատապարտէր հայոց մեծ եղեռնագործութեան թուրք պատասխանատուները, սակայն, մինչեւ այսօր համաշխարհային հանրութիւնը չէ ըսած դատապարտութեան իր խօսքը, ինչպէս կը նշէ փրոֆեսէօրը:

Այս հատորը լոյս կը տեսնէ այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ ցեղասպանութեան հարցին շուրջ նոր զարգացումներ կ'արձանագրուին՝ արտաքին եւ ներքին ճակատներու վրայ:

Արտաքին ճակատի վրայ ամենամեծ զարգացումը Ռուսաստանի Պետական Տումային որոշումն էր: Եղեռնի 80-ամեայ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով մեծ պետութիւն մը կը ճանչնար ցեղասպանութեան իրողութիւնը եւ այսպիսով կ'արդիւնաւորուէր տասնամեակներ ամբողջ հայութեան թափած անսահման ճիգը: Թէ՝ այլ պետութիւններ

պիտի ունենա՞ն համապատասխան քաջութիւն մը, ատիկա ցոյց պիտի տայ ժամանակը։

Ներքին ճակատի վրայ հայ-թուրք յարաբերութիւններու մէջ արձանագրուած ձնհալն է, թէեւ գործնական գետնի վրայ շօշափելի արդիւնքներ չկան։ Հայոց Երրորդ Հանրապետութեան գոյատեւումէն ետք, Հայաստանի պետութիւնը կ'ուզէ տնտեսական յարաբերութիւններու մէջ սահմանափակել հայ-թուրք յարաբերութիւնները, սպասելով աւելի բարենպաստ պայմաններու՝ արծարծելու համար ցեղասպանութեան հարցը։ Սակայն, արտասահմանի հայութեան աշխատանքները՝ ճանաչում եւ դատապարտութիւն ապահովելու ցեղասպանութեան, չեն կրնար նուազիլ, պետական գործնապաշտ քաղաքականութեան առջեւ։ Ընդհակառակը, անոնք պէտք է բազմապատկուին ցոյց տալու համար, որ հայոց ցեղասպանութեան հարցը չէ ժամանցուած, չի ժամանցուիր եւ պիտի չժամանցուի՝ մինչեւ արդա՛ր հատուցում։

Աւետիս Փափազեանի օսմանեան-արաբատառ փաստաթուղթերը կը յուշեն, որ տակաւին չեն սպառած բոլոր նիւթերը եւ արխիւային գաղտնի դարաններուն մէջ փականքի տակ կը մնան այնպիսի վաւերաթուղթեր, որոնց բացայայտումը պիտի հանդիսանար լաւագոյն պատասխանը, պատմական իրողութիւններն ու ճշմարտութիւնները խեղաթիւրելու թրքական պետութեան քաղաքականութեան։ Հայ պատմագէտները պէտք է լոյս աշխարհ բերեն նաեւ եւրոպական այլ երկիրներու արխիւները՝ որպէսզի միանգամընդմիշտ լռեցնեն ցեղասպանութեան «պատմութեան հայկական վարկած»ի կաշառուած պատմաբանները։

Փրոֆ. Աւետիս Փափազեան մեր սեղանին կը դնէ արժէքաւոր ուսումնասիրութիւն մը, ուր շարադրուած է ցեղասպանութեան հիմքը՝ փիլիսոփայութիւնը, եւ ապա, օսմանեան վաւերագիրներով ապացուցուած անոր անհերքելի իրողութիւնը։ Պատմաբանը կ'օգտագործէ անյայտ մնացած փաստաթուղթեր, որոնք նոր լոյս կը սփռեն ցեղասպանութեան վրայ։ Սակայն, ցաւալին այն է, որ նման հրատարակութիւններ պիտի ունենան սահմանափակ տպաքանակ, մինչ, իր իսկ «Հայերի Ցեղասպանութիւնը Ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերի» հատորը Երեւանի մէջ լոյս տեսած էր... 75,000 օրինակով։

Տարուէ-տարի, մինչ այս աշխարհէն կը մեկնին Մեծ Եղեռնէն վերջին վերապրածները, ցեղասպանութեան նուիրուած հատորները պիտի ունենա՞ն իրենց նոր ընթերցողները։ Հարց մը, որ ոչ միայն կը խռովէ, այլեւ կը տագնապեցնէ մեր հոգիները։ Բայց տակաւին մխիթարական է տեսնել, որ կան նման հրատարակութիւններ հովանաւորող միութիւններ, հաւատաւոր մեկենասներ եւ նաեւ... անխոնջ պատմաբաններ՝ Աւետիս Փափազեանի նման։

ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆ
«Նոր Օր»ի Խմբագիր

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Լրացաւ հայոց Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցը:

80 տարի անցաւ այդ ահաւոր եղեռնային օրերից, երբ երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութիւնը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջեւ: Նիւթական հսկայական կորստի հետ մէկտեղ հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից Արեւմտեան Հայաստանից:

Ամայացաւ մի երկիր, որի շինարար ժողովուրդը դարերի ընթացքում իր քրտնաջան աշխատանքով մշակել էր հողը, բարիք ստեղծել, կառուցել տուն-տեղ, եկեղեցիներ, վանքեր, յուշարձաններ եւ կերտել համաշխարհային քաղաքակրթութեան արժանի մշակոյթ եւ գրականութիւն:

Եւ այդպէս 80 տարի շարունակ, ամէն տարի Ապրիլի 24-ին լինի հայրենիքում եւ կամ աշխարհի բոլոր անկիւններում ուր դառը նահատագրի բերումով սփռուած են տարաբախտ հայ ժողովուրդի զաւակները, իւրովի նշում եւ յարգում են Մեծ Եղեռնի ընթացքում զոհուած մեր քիւրաւոր նահատակների յիշատակը:

Բնականաբար, միւս կողմից բուռն բողոքներով իրենց զայրոյթն ու ցասումն են արտայայտում 20-րդ դարի սկզբին թուրքական կառավարութեան կողմից մտայղացուած եւ գործադրուած այդ ահաւոր արարքի դէմ: Տեւապէս պայքար է գնում, որպէսզի միջազգային թատերաբեմում պաշտօնապէս ճանաչուի հայկական ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում ստանայ նրա հողային պահանջատիրութիւնը:

Դժբախտաբար թեւակոխում ենք 21-րդ դար, բայց դեռեւս չի ճանաչուած մարդկութեան դէմ ուղղուած այդ ծանրագոյն յանցագործութիւնը:

Այո՛, այսօր թուրքերը յամառօրէն հրաժարուելով ընդունել հայերի ցեղասպանութիւնը, չեն էլ ցանկանում գոնէ օրինակ վերցնել իրենց վաղեմի բարեկամ Գերմանիայից:

Ցայտնի է, որ նացիստական Գերմանիան Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում դաժան սպանդ կատարեց հրեաների, լեհերի եւ նուաճուած եւրոպական այլ երկրների ժողովուրդների նկատմամբ:

Եւ ահա 1994 թ. Օգոստոսի 1-ին Գերմանիայի նախագահ Ռոման Հերցոկը, աշխարհում քաղաքակիրթ պետութեան վայել ձեւով նացիստական Գերմանիայի՝ լեհ ժողովրդի հանդէպ գործադրուած ոճրագործութեան 50-րդ տարեդարձի առթիւ Վարշավայի մէջ խոնարհելով նահատակուած ըմբոստութեան մարտիկների յուշարձանի առջեւ, ծաղկեպսակ դնելով ներողութիւն խնդրեց գերմանացիների՝ լեհ ժողովրդին պատճառած տառապանքների համար: Իր ժամանակին ասպետական

նման խոհեմ քայլ էր կատարել դաշնակցային Գերմանիայի նախագահ Քոնրատ Ադենաուերը հրեաների նկատմամբ կատարուած ցեղասպանութեան համար եւ պարտաւորութիւն ստանձնել Իսրայէլի պետութեան բարգաւաճման համար տալ դրամական փոխհատուցում:

Իսկ Թուրքիան, ոչ միայն շատ հեռու է քաղաքակիրթ աշխարհին վայել ներողութիւն խնդրելու այս ձեւից, այլ յանախ միջազգային հասարակական կարծիքը ապակողմնորոշելու միտումներով հանդէս է գալիս հայերի ցեղասպանութիւնը հերքելու եւ ուրանալու յայտարարութիւններով: Ի միջայլոց թուրք պաշտօնատար անձերից միայն Թուրքիայի նախկին նախագահ՝ Թուրկութ Էօզալն էր, որ անուղղակիօրէն «ընդունեց» հայերի ցեղասպանութիւնը: Բայց նա էլ այդ յայտարարութիւնը արեց թուրքավարի, մատ թափ տալով եւ հայերին կրկին կոտորածի ենթարկելու սպառնալիքով: Այսպէս, 1993 թ. Ապրիլին իր մահուանից մէկ շաբաթ առաջ նա յայտարարեց, որ «Հայաստանը դեռեւս դաս չի վերցրել Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից նրան հասցուած պատժամիջոցից»: (Տես «Ասպարէզ», Ապրիլ 24, 1993 թ.):

Եւ իրօք, եթէ բացենք այս յայտարարութեան չակերտները կը ստացուի այն, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում թուրքերը պատժել են հայերին, իսկ «պատժելը» համայն աշխարհին յայտնի է, թէ ինչ դաժանութիւններ եղան եւ ինչ նպատակ էր հետապնդում այն:

Իսկ իրականում ինչպէ՞ս կարող է Թուրքիայի նման մի պետութիւն ճանաչի հայերի ցեղասպանութիւնը, երբ այս վերջին տարիների ընթացքում այդ նոյն յանցագործ արարքը կատարւում է քիւրտ ժողովրդի նկատմամբ:

Այսօր քիւրտ ժողովուրդը արդարացի պայքար է մղում իր ազգային իրաւունքների եւ ինքնորոշման համար: Մինչդեռ զինուորական դաժան ճնշումներով բռնաբարւում են քրտերի մարդկային իրաւունքները: Իրականացւում է քիւրտ խաղաղ բնակչութեան բռնի տեղահանման, ոչնչացման եւ նրանց բնակավայրերը հողին հաւասարեցնելու նենգ քաղաքականութիւն:

Այո՛, պատմութիւնը կրկնւում է. այն ինչ կատարուեց դարասկզբին հայերի հանդէպ, այս անգամ նոյն վայրագութիւններով կիրառւում է քրտերի նկատմամբ:

Այսօր համայն հայութեան յուզող հարցերից մէկն էլ Արցախի յետագայ կարգավիճակն է:

Ահա 7 տարի է ինչ Արցախի հերոսական ժողովուրդը արդարացի պայքարում է ազատ ու անկախ տեսնելու իր հայրենի հողը, հակառակ, որ շարունակւում է անմարդկային շրջափակումը, զրկելով նրան արտաքին օգնութիւնից: Այնուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լիայոյս, հերոսաբար պայքարում է իր ազգային ինքնորոշման համար:

Բոլոր դէպքերում կեանքը ցոյց տուեց, որ Արցախի հիմնահարցի վերջնական լուծման խնդրում մեծ նշանակութիւն ունի մեր ժողովրդի համերաշխութիւնը, իր բազուկի ուժին ապաւինելու եւ միայն միասնական եւ սերտ համագործակցութեամբ հասնելու մեր սուրբ նպատակին:

Այո՛ ելքը մէկն է: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետութիւնը, սփիւռքի համայն հայութեան հետ միասնաբար պայքարելու է, որպէսզի ցեղասպանութիւնը ճանաչուի եւ ընդունուի միջազգային հանրութեան, պետութիւնների եւ յատկապէս թուրքական պետութեան կողմից:

Սոյն գրքում ամփոփուած են հայոց մեծ եղեռնի պատմութեանը վերաբերող վերջին տարիների ընթացքում Երեւանում եւ թէ Լոս Անճելըսում կատարած մեր գիտական ուսումնասիրութիւնները: Լինելով միջնադարի մասնագէտ, պատմական եւ վաւերագրական աղբիւրների հիման վրայ աշխատել ենք լուսաբանել նաեւ Արեւմտահայերի իրաւական վիճակին վերաբերեալ մի շարք հարցեր, այդ թուում եւ դարերի ընթացքում Օսմանեան կայսրութեան ծանր լուծի տակ հեծող հայ ժողովրդի կրած տառապանքներն ու անլուր կեղեքումները: Իսկ այնուհետեւ տրւում է 20-րդ դարի նախաշեմին Ապտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանում եւ յետոյ երիտթուրքերի կողմից դաժանօրէն կազմակերպուած արեւմտահայերի զանգուածային ջարդերը, որին ինչպէս յայտնի է զոհ գնացին մօտ մէկուկէս միլիոն անմեղ մարդիկ:

Աշխատութեան մէջ հիմնականում օգտագործել ենք թուրքական պատմագրական եւ վաւերագրական նիւթեր, յատկապէս, տուեալ ժամանակուայ թուրք պետական գործիչների յուշագրութիւններում հայերի հալածանքներին վերաբերող նկարագրութիւններն ու նրանց տեսակէտները:

Որպէս ինքնուս ստեղծագործող, մեր ազատ ժամերին զբաղուել ենք նաեւ նկարչական գործերով: Գրքի վերջում բերուած են մասամբ պատմական հողի վրայ, մեր մտայղացմամբ պղնձի վրայ կատարուած մի շարք դրուագանդակների փոքրօ-պատճենները: Դրանց մի մասը ցուցադրուել է Երեւանի ժողովրդական ստեղծագործութիւնների Տուն-Թանգարանում: Մասնակցել ենք նաեւ մի շարք ցուցահանդէսների եւ արժանացել պարգեւների:

ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՖԵՐՄԱՆՆԵՐԻ

(16-18-րդ դդ.)

Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող ոչ մահմետական ժողովուրդներն աչխարհիկ եւ հոգեւոր «արտօնութիւններ» ստացան Սուլթան Մեհմետ 2-րդի (1451-1481) գահակալութեան շրջանում: Այլադաւան հպատակներին աչխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւն տալով սուլթան Մեհմետ 2-ը եւ նրա յաջորդները ջանում էին համայնքների համակարգը ծառայեցնել իրենց նպատակներին: Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակութիւնը հպատակներին հլու հնազանդ եւ օտար պետութիւնների ազդեցութիւնից հեռու պահելու համար: Հարսանիքը, ապահարզանը, գոյքային եւ կենցաղային վէճերը լուծւում էին տուեալ համայնքի կրօնական օրէնքներով: Նրանց միջոցով գանձւում էին տարբեր տեսակի հարկեր թէ՛ պետութեան օգտին եւ թէ՛ տուեալ պատրիարքութեան համար:

Սուլթան Մեհմետ 2-ի եւ նրա անմիջական յաջորդների ֆերմանները, որոնք վերաբերում էին յոյն եւ հայ պատրիարքների «առանձնաշնորհումներին», չեն պահպանուել: Այդ ֆերմանները չեն յայտնաբերուել ո՛չ յոյն, ո՛չ հայ պատրիարքարաններում եւ ո՛չ էլ Օսմանեան կայսրութեան արխիւներում: Շատ հաւանական է, որ դրանք ոչնչացել են Կ. Պոլսում բռնկուած հրդեհներից: Միայն յետագայ պատմագիրներն են արձանագրում այն փաստը, որ Մեհմետ 2-ը Կ. Պոլիսը գրաւելուց յետոյ յոյն եւ հայ համայնքների համար յատուկ ֆերմանով հաստատել է պատրիարքարաններ:

Հայ համայնքի (Ermeni milleti) պատրիարքութիւնը յատուկ հրովարտակով հաստատուել է 1461 թ., այն ժամանակ, երբ Մեհմետ 2-ը, Պուրսայի Յովակիմ եպիսկոպոսին տեղափոխելով Կ. Պոլիս, նշանակեց պատրիարք: Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Յովակիմ եպիսկոպոսով չէ, որ սկսւում է հայոց պատրիարքութեան գոյութիւնը Կ.

Պոլսում։ Փաստերը վկայում են, որ Կ. Պոլսում հայկական հոգեւոր առաջնորդութիւն է եղել դեռեւս բիւզանդական կայսրութեան օրօք։ 1360 թ. Կ. Պոլսում հայերն ունէին Ս. Սարգիս եկեղեցին եւ նրա շուրջը համախմբուած հայկական համայնք։

Մեզ հասած ամենահին սուլթանական հրովարտակը, որը հաստատում է հայոց պատրիարքութեան իրաւունքներն ու պարտականութիւնները Օսմանեան կայսրութեան սահմաններում, 1764 թ. Յունիսի 3-ին Գրիգոր Պասմաճեանին (1764-1773 թթ.) շնորհուած Պերաթն է, որն առաջին անգամ հայատառ թուրքերէնով հրատարակել է Ա. Պէրպէրեանը։[1] 1774 թ. Յունուարի 22-ին սուլթան Ապտուլ Համիտ Առաջինը (1774-1789) համանման Պերաթ է շնորհել նաեւ Զաքարիա պատրիարքին (1773-1781), որի հայերէն թարգմանութիւնը՝ «Ազգիս հայոց վարդապետի պատրիարքութեան Խաթթի շերիֆի հայկական թարգմանեալ օրինակն է» վերնագրով հրապարակուած է «Դիւան հայոց պատմութեան» մէջ։[2]

Վերջին շրջանում Թուրքիայում կատարուած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ Ստամպուլի «Մինիստրների Խորհրդի» եւ «Թոփքափու պալատ»ի արխիւներից բացի մեծ թուով դաֆթարներ պահպանուել են նաեւ «Քեամիլ Քեփէջիի անձնական հաւաքածուում»։ Թուրք պատմաբան Եավուզ Էրջանի տուեալներով այս հաւաքածուում ամենահնագոյնը 2539 համարի տակ գտնուող Տաֆթարում ամփոփուած 1517 թ. Եավուզ սուլթան Սելիմի (1512-1520) կողմից Երուսաղէմի հայ պատրիարք Սարգիս Գ-ին տրուած հրովարտակն է։[3]

Ընդհանրապէս, համայնքների կողմից ընտրուած կրօնական առաջնորդը հաստատւում էր կայսերական յատուկ պերաթով, ուր սովորաբար կրկնւում էին նախորդ սուլթանների կողմից տրուած հրամանները։ Այս մասին սուլթան Ապտուլ Համիտ Առաջինի կողմից շնորհուած ֆերմանում կարդում ենք՝ «Զի բոլոր եւ համանգամայն ֆերմանք եւ հրամանագիրք առ նախնեօք մեծազօր արքայից, կրկին եւ վերստին նորոգիցի եւ հաստատիցի ընդ որս եւ հրամայեցաւ ի տէրութենէ նորոգիլ եւ ֆերմանքն մեծի Պոլսույս»։[4] Այնուհետեւ պերաթում նշւում էին համայնքի կրօնական առաջնորդի վարչական իրաւունքները իր հօտի նկատմամբ, ինչպէս նաեւ կրօնական ծիսակատարութիւնները, որոնք իւրայատուկ էին տուեալ համայնքին։ Այդ բոլորը, ինչպէս նշւում էր հրամանագրերում, չպէտք է հակասէին շարիաթի դոգմաներին։ Այդ բարձր պերաթները շաղախուած էին լինում կեղծ խօսքերով եւ փքուն խոստումներով, որոնց մեծ մասը, բնականաբար, չէր գործադրւում կեանքում։

Հայոց պատրիարքութեանը շնորհուած պերաթների բովանդակութիւնը ցոյց է տալիս, որ հայ համայնքի կողմից առաջադրուած իւրաքանչիւր նոր պատրիարք պարտաւոր էր 100 հազար ակչէ[5] միանուագ նուիրել սուլթանական գանձարանին, որպէսզի ձեռք բերէր իր պաշտօնին նշանակուելու պերաթը։ Այնուհետեւ պատրիարքը պարտաւոր էր հայ համայնքից հաւաքել «Միրի մուկաթաա» հարկը (100-1400 հազար ակչէ) եւ յանձնել կառավարութեանը։ Այս հանգամանքը խիստ շահագրգռում էր

սուլթաններին յաճախակի փոփոխելու պատրիարքներին, որպէսզի ամէն մի նորընտիր պատրիարքից կորզէր 100 հազար ակչէ։ Յովակիմից սկսած մինչեւ Յակոբ եպիսկոպոս Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին հերթականօրէն բազմել են մօտ 82 անձնաւորութիւններ։ Վերջին հարիւրամեակում դրամի աւելի շատ կարիք զգացող սուլթանները առանց պատճառի փոխել են սրանց, երբեմն նոյն մարդուն երկու անգամ նշանակելու արտօնութիւն տուել եւ ամէն անգամ էլ ստացել սահմանուած հարկագումարը։ Փաստերը ցոյց են տալիս, որ սուլթանները ժամանակի ընթացքում բարձրացրել են պատրիարքութեան գինը։ 1657 թ. Թովմաս Պերիացին մեծ վէզիր Քէօփրիլու Մեհմետ փաշայից պատրիարքութեան հրովարտակ է ձեռք բերել վճարելով 400·000 ակչէ։[6] Պատրիարքները միաժամանակ պարտաւոր էին նոր վէզիրին տալ 500 ղուրուշ, վէզիր-փոխանորդին՝ 250 ղուրուշ, չաւուշ պաշուն՝ 200 ղուրուշ։[7] Մի խօսքով, հայ հոգեւորականութիւնը Օսմանեան կենտրոնական կառավարութեան համար եկամտի կարեւոր աղբիւր էր։

Կ. Պոլսի հայ համայնքին եւ ոչ մահմետական այլ հպատակներին վերաբերող թուրքական պաշտօնական ֆերմանները հիմնականում ամփոփուած են թուրք պատմաբան Ահմետ Ռեֆիկի «Ստամպուլի XVI դարի կեանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածուում։[8] Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վաւերագրերը վերցուած են Ստամպուլի պետական արխիւից։ Իւրաքանչիւրին՝ ըստ բովանդակութեան, տրուած է համապատասխան վերնագիր։ Իսկ ֆերմանների վերջում նշուած տարեթուերը ցոյց են տալիս, որ դրանք հրապարակուել են սուլթան Սուլէյման I-ի (1520-1566), սուլթան Սելիմ II-ի (1566-1574) եւ սուլթան Մուրատ III-ի (1574-1595) ժամանակաշրջանում։ Սուլթանական այս հրովարտակները բովանդակում են եկեղեցիների եւ այլ բարեպաշտական շինութիւնների քանդման, դաւանափոխութեան, կրօնական ծիսակատարութիւնների եւ քրիստոնեայ բնակչութեան ազգային տարազի հարցում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերեալ եւ այլ բնոյթի նիւթեր։

Սուլթանական այս հրովարտակներից իմանում ենք, որ սուլթան Սելիմ I-ի ժամանակ Կ. Պոլսի եկեղեցիներից շատերը քանդուել են։[9] Իսկ սուլթան Սուլէյմանի գահակալութեան շրջանում, Կ. Պոլսի կաղին ուղղուած յատուկ ֆերմանով քանդուել է Սուլու-Մանաստրի (Ս. Գէորգ) հայկական եկեղեցուն կից կառուցուած շինութիւնն ու սահմանափակումներ են դրուել կրօնական ծիսակատարութիւնների վրայ. «Իմ բարձր հրամանագիրը առնելուդ պէս քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինութիւնը։ Միեւնոյն ժամանակ թոյլ չտաս իրենց հնագոյն եկեղեցիներում ծնծղայ խփելու, բարձր ձայնով երգելու եւ գինի խմելու։ Պէտք եղածի պէս զգուշացրու յիշեալ վանքի քահանաներին, որ եթէ այսուհետեւ շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ որեւէ շինութիւն կառուցեն, նոյնպէս ենթարկուելու է քանդման։[10]

Հարկ է նշել, որ հայկական եւ թուրքական պատմագրական

աղբիւրներում եւս եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձեւափոխման փաստերը շատ են։ Ցայտնի է, որ Կ. Պոլսի գրաւման յաջորդ օրը, Ս. Սոֆիա տաճարը վերածուեց մզկիթի։ Նոյն ճակատագրին արժանացան նաեւ Ս. Առաքելների տաճարը եւ այլ եկեղեցիներ։ Սուլթանական հրովարտակով արգելուեց նաեւ նոր եկեղեցիների կառուցումը։

Այս չարաբաստիկ երեւոյթը շարունակուեց նաեւ յետագայ դարերում ոչ միայն Կ. Պոլսում, այլեւ պատմական Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում։ Այս կապակցութեամբ 16-րդ դարի ժամանակագիր Յովհաննիսիկ Ծարեցին նշել է. «Իսկ ՌԼԲ (1583) թուականին, դարձեալ հրաման եղեւ ի Մուրատ Խոնդկեարէն զօրապետաց եւ զօրաց իւրոց՝ ելանել ի վերայ Ցէրեւանայ եւ առնուլ զնա։ Եւ եկին իսկ եւ աւերեցին, եւ բազում եկեղեցիք քակեալ, զքարինս ի շինումն բերդին տանէին, որ եւ կամեցան զմեծ եկեղեցին, որ Ցերկու երեսի ասի, եւս քակել»։[11]

Մի այլ ժամանակագիր Էրզրումի բերդում կատարուած աւերածութիւնների մասին յայտնել է հետեւեալը. «...Բազում եկեղեցիք, զորն երեւին եւ զորն արարեալ են մզկիթ եւ զորն քակեալ կան։ Եւ է գերեզման սրբոյն Սահակայ եւ Ցօսեփայ, որ այժմ եկեղեցին անարատ եւ է ի ձեռս անհաւատից»։ «Եկեղեցիք բազումք, որ այժմ է ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամպարանոյք եւ զորն քակեալ եւ քայքայեալ են այժմոյս չեն երեւիլ»։[12]

Իսկ 17-րդ դարի թուրք հանրայայտ ճանապարհորդ Էվլիա Չելեպին Կարսում եկեղեցիները մզկիթի վերածելու մասին արձանագրել է հետեւեալը. «Կարսում գտնուող «Սուլէյման էֆէնտի» մզկիթը մուսուլմանական հաւատի ոճով կառուցուած, շքեղ արտաքինով լաւ սրբավայր է։ (Նախկինում) այն քրիստոնէական եկեղեցի է եղել եւ ձեւափոխուել է մզկիթի։ «Հիւսէյն Քեղխուտա» մզկիթը նախապէս եղել է քրիստոնէական հոյակապ մի տաճար, որը կոչուել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանական հրամանագիրով այն եւս ձեւափոխուել է մզկիթի եւ այդպէս փրկուել անհաւատների ձեռքից»։[13]

Սուլթանական ֆերմաններից իմանում ենք, որ նոյնիսկ նախկին եկեղեցիների վերանորոգման համար անհրաժեշտ էր դիմել կայսերական տիւանին եւ յատուկ թոյլտուութիւն ստանալ։ Մահմետականներից կազմուած յանձնաժողովը ստուգում, արձանագրում էր վերանորոգման ենթակայ կէտերը եւ այնուհետեւ տալիս էր արտօնութիւնը այն պայմանով, որ նորոգումը կատարուէր նախկին շինութեան նիւթով եւ միեւնոյն չափսերով։ Այս մասին եկեղեցիների նորոգման վերաբերեալ սուլթան Ապտուլ Համիտ Առաջինի հրովարտակում (22 Յունուար 1774 թ.) ասուած է. «Նախապէս ուր ուրեք եւ իցէ քաղաքի մօլայն եւ այլք կարդացօղք եւ տաճիկք մեծամեծք, գնացեալ աչօք իւրեանց տեսցեն եւ քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահասու լիցին, երկայնութիւնն եւ լայնութիւնն այնը եկեղեցւոյն ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի եւ ոչ պակաս՝ զննիցեն՝ տեսցեն եւ վկայեսցեն եւ ի գիրս աւանդեսցեն հէօճէթիւ, ապա յետ այնը՝ հրամայեցեալ է զաւերեալ տեղիս նորոգել եւ

չինել ոչ աւելի եւ ոչ պակաս, մի լիցին ձեռնամուխ բայայք, զի մի յետոյ վնասիցին»։[14]

Եկեղեցիների ստուգման վերաբերեալ սուլթան Ապտուլ Համիտ Առաջինի ֆերմանում նշուած է, թէ ինչպէս մի շարք մոլեռանդ թուրքեր իրենց չարամիտ նպատակներով օգտագործել են եկեղեցիների վերանորոգման առիթը եւ անտեղի բողոքներ ներկայացրել կառավարական պաշտօնատար անձանց եւ մահմետական հոգեւորականութեանը։ Սրանք օգտագործելով առիթը, իրենց հերթին անարգել գործադրել են հայ բայայի նկատմամբ իրենց թշնամանքի ու ատելութեան կիրքը. «Այլեւ յոմանս քաղաքս եւ գիւղս, եւ յայլս նահանգս ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ եւ կամ վնասս հասուցանելոյ մաքառին ընդ խղճալի հայոց ազգին եւ երթեալ առ մօլլայն, առ վոյվոտայն եւ առ մեծամեծ անձինս բառնալով՝ դրդեն զնոսա ի բարկութիւն, զի կամ տուգանօք վնաս հասուցեն եւ կամ զնորոգեցեալ տեղիսն քայքայեսցեն, մեծամեծքն տէրութեան իմոյ, հաւատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց, եւ լինին վրէժխնդիրք խղճալի բայային, զի կրկին տուգանք եւ փող առցեն, եւ զծարավս ագահութեանց յագեցուցեն, եւ եթէ ոչ տայք զտուգանս ասեն բայային ի բանտ եւ ի տանջանս մատնեմք զձեզ, որով երկուցեալ վշտացուցանեն զազգն հայոց, եւ նոքա ոչ կարացեալ տանին զայսպիսի նեղութիւնն, թողումն զտեղիս եւ զտունս եւ փակողին անտի, լինելով ցիր ու ցան եւ ոմանք եւս ի բանտ արգելեալք եւ խոշտանգեանլք ախ վայութեամբ գրաւեն զկեանս իւրեանց»։[15] Այնուհետեւ սուլթանական ֆերմանում նշուում է, թէ ինչպէս նոր պաշտօնի անցած կատիները, մոլլաները, հարստանալու տենչով համակուած, զանազան որոգայթներ են հիւսում եւ տուգանքներով, կաշառակերութեամբ նեղում եւ վշտացնում հայ բայային։

Փաստերը ցոյց են տալիս, որ XVII-XVIII դդ. ընթացքում եւս այս կամ այն պատրուակով հիմնայատակ քանդել են մեծ թուով եկեղեցիներ։ Բերենք մի օրինակ Թոքաթին վերաբերող թուրքական վաւերագրերից. «1720 թ. Հոկտեմբերին Թոքաթում Քառասուն (մանկանց) եկեղեցին ընդարձակելու համար երբ կառավարութիւնից թոյլտուութիւն է ձեռք բերուում, մահմետական բնակչութիւնը գազազելով (22 շեվալ, Կիրակի օրը), եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ աղմուկ աղաղակ բարձրացնելով, յարձակւում են, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում»։[16] Այս իրադարձութիւնը արձանագրուած է նաեւ հայկական աղբիւրներում։ Թոքաթում պահուող «Պատկերահանի Աւետարան» կոչուած մի ձեռագիր յիշատակարանում նշուած է. «Ֆերման բերին զսուրբ քառասնից եկեղեցին նորոգելու, առին հրաման եւ նորոգեցին մինչեւ ոչ թամամիլն ժողովեցան Թոխաթու այլազգիքն ամենայն զրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունք եւ քակեցին»։[17]

Աստուածատուր, Յովհան եւ Առաքել ակնեցիների ժամանակագրութեան մէջ (XVIII դար) Ակնում եւ շրջակայքում եկեղեցիների քանդման մասին խօսելիս նշուում է հետեւեալը. «Դարձեալ թուին ՌՄԼԲ (1783) որ

մտաք Ստամպօլ Տաճիկներն արդուհալ էին տուեր թագաւորին, թէ Զոպի Մուստաֆան նոր ժամ է չինել տուեր. թագաւորն ալ խափուճիպաշին թային արաւ, թէ «գնա տես թէ սուտ է, թէ իրաւ»: Մեծ պասին իքինճի (երկրորդ) Կիրակին (Մարտի 12-ին) խափուճիպաշին եկաւ, ելաւ ժամուն վրայ. Տաճիկները ոտք կոխեցին, թէ ժամ է պարիսպ չէ: Խափուճին ալ մնացածն ալ քակել տուաւ, քարն աստիս անդին տէվը ընել տուաւ: Շատ ստակ գնաց թէ խափուճուն, թէ խատուն, իլամին, կարծեմ թէ ճ(100) քեսէ ստակ գնաց, պատն ալ մնաց այնպէս երեսի վրայ»:[18]

17-րդ դարի հայ ականաւոր հրապարակախօս եւ պատմագիր Երեմիա Քէօմուրճեանը եւս սրտի կսկիծով տալիս է թուրք տիրակալների կողմից քրիստոնեայ եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու նկարագրութիւնները, ինչպէս նաեւ ժողովրդի դառը բողոքը. «Ցայն ժամ եւ սուգ առնոյր երկրին եւ ողբայր երկիր վասն դիպուածոյ մերում թշուառութեան, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ ահագին եւ արեւ ծածկեցաւ եւ հողս սաստկագին յոյժ յոյժ մինչեւ ամենայն սեռից միանգամայն յարտասուս յարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն եւ փոչոյն, որ բարձրանայր յերկրէ, եւ ծովն ալէօքն փրփրայր եւ բարձրանայր ընդ պարիսպն եւ անձրեւ գայր»:[19]

Շարիաթը քրիստոնեաներին զրկում էր բազմաթիւ ազատութիւններից: Քրիստոնեան իրաւունք չունէր մահմետական թաղամասերում բնակութիւն հաստատելու: 1809 թ. մեծ վէզիր Եուսուֆ Զիա փաշան (1809-1811 թթ.) Թոքաթից անցնելու ընթացքում երբ տեղեկանում է, որ մահմետական տներում քրիստոնեայ վարձակալներ են ապրում, հրամայում է նման մարդկանց անմիջապէս հեռացնել մահմետական թաղերից, փաստարկելով, որ այդ երեւոյթը հակառակ է շարիաթի սկզբունքներին:[20] Այս կարգը մի անգամ եւս յիշեցնում է 1872 թ. սուլթան Ապտուլ Ազիզի (1861-1876) արձակած հրամանագրով եւ չէյխ ուլ-իսլամի հաստատած ֆեթուայով: Այս հրամանագրում շատ պարզ ասւում է, որ «այսուհետեւ մուսուլմանական թաղամասերում գտնուող տներում ըստ օրէնքի պիտի բնակուեն միայն մահմետականները»:[21]

Խտրականութիւն է եղել նաեւ բնակարանների կառուցման չափերի խնդրում: Այս կապակցութեամբ թուրք տարեգիր Շանի Զատեն գրել է. «...Հնուց ի վեր ընդունուած կարգով մուսուլմանների չէնքերի երկարութիւնը 12 արշին էր, իսկ բայաներինը՝ 10 արշին, աւելին արգելուած էր: Բայաների դասի չէնքերի համար ընդամէնը 10 արշին յատկացուած լինելով, այն հողամասը (արսա), որի վրայ կառուցւում էր չէնքը, շատ էր նեղ, չէնքերի միջեւ ընկած տարածութիւնը նոյնպէս նեղ էր, իսկ չէնքերը ցածր էին»:[22]

Մահմետական հոգեւոր եւ աշխարհիկ վերնախաւի համար սկզբունքային հարց էր այլահաւատ հպատակների մահմետականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամէն տեսակի բռնութիւն: Օսմանեան պետութեան կողմից նուաճուած երկրներում տեղի բնակչութեանը մահմետականացնելու ուղղութեամբ խիստ եւ համատարած միջոցներ են ձեռնարկուել: Առաջին հերթին աւատատէրերից պահանջուել է հաւատափոխ լինել, հակառակ դէպքում սպառնացել են նրանց հողերը բռնագրաւել: Բազմաթիւ փաստեր կան, որոնք վկայում են հայ աւատատէրերի բռնի մահմետականացման եւ հրաժարուողների հողերի յափշտակման մասին:

Ա. Ժելեազկովեան, պալքեանեան երկրներում բռնի մահմետականացման քաղաքականութեան մասին խօսելիս, յենուելով թուրքական ֆերմանների ու այլ վաւերագրական նիւթերի վրայ նշում է, որ նոյնիսկ քաղաքային բնակչութեան ամենացածր խաւը դիմել է հաւատափոխութեան, նախ, որպէսզի ազատուի ծանր հարկապահանջութիւնից եւ երկրորդ ստանայ մահմետականութիւնը ընդունողի համար սահմանուած նուէրներն ու դրամական բարձր պարգեւը: Իր հետազօտութեան վերջում Ա. Ժելեազկովան, ընդհանրացնելով, նշել է այն կարեւոր գործօնները, որոնք նպաստում էին մահմետականութեան բռնի տարածման քաղաքականութեանը: Դրանք են. սրբազան պատերազմների (ճիհատ) ընթացքում մահմետական կրօնի մոլեռանդութեան սաստկացումը, գերեվարութիւնը, մանկաժողովը եւ ծանր հարկապահանջութիւնը:[23]

Թուրք պատմաբան Հ. Թիւնճերի հրապարակած թուրքական միջնադարեան կանոնադրութիւններում եւս պարզ նշւում է, որ մահմետականութիւնը ընդունելու դէպքում քրիստոնեան ազատւում էր իսպենջի հարկ վճարելուց. «Ոչ մահմետական բայայից սիփահին իսպենջի հարկ է գանձում: Յետագայում եթէ ոչ մահմետականը դաւանափոխ լինելով մահմետականութիւն ընդունի, սիփահին իրաւասու չէ նրանից իսպենջ գանձելու: Միմիայն բեննաքի հարկ կարող է գանձել: Այս մասին գոյութիւն ունի կայսերական ֆերման»:[24] Իսկ նրանց համար, ովքեր հրաժարւում էին մահմետականութիւնից եւ ձգտում էին կրկին վերադառնալ իրենց նախկին հաւատին, սահմանւում էր խիստ պատիժ: Բանտային խոշտանգումներից կարող էր ազատուել նա, ով վերջնականապէս կը վերադառնար դէպի մահմետականութիւնը:

Ահա թէ ինչ է գրում այդ մասին միջնադարի հայ ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին. «Տաճիկք մեծ վարձք համարելով զքրիստոնէից ուրանալ զՔրիստոս եւ ի Մահմեդի օրէնս եւ ի կրօնս դառնալ, զիաչ եւ զեկեղեցի բեկանել եւ խորտակել եւ հաւատացեալք, որ ոչ հաւանին Մահմեդի եւ չար կրօնից նորին, ազգի-ազգի տանջանօք չարչարեն եւ հրով այրեն եւ համարեն պաշտօն աստուծոյ մատուցանել»:[25]

Իսկ Մուշից Կ. Պոլիս ուղարկուած մի բողոքագրում ասւում է. «Խլաթա մէջ հայ կին մը սաստիկ ծեծելով թեւն ու գլուխը ջարդեցին զորով տաճիկցնելու համար»:[26]

Զանգուածային բռնի մահմետականացման լաւագոյն օրինակ կարող է հանդիսանալ Համշենի բնակչութեան հաւատափոխութիւնը: Համշենահայերը՝ բուն Համշենում, Գարատէրէի շրջանում եւ Ճորոխի հովտում մահմետականութիւն են ընդունել տասնամեակներ տեւած յամառ պայքարից յետոյ: Համշենի հայութեան կողմից մահմետականութիւնը բռնի ընդունելու եւ թրքանալու մասին կարեւոր տեղեկութիւն է տալիս Ղ.

Ինճիճեանը. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայք էին, այլ ի յելս ԺԷ դարուն եւ ի սկիզբն ԺԸ երրորդին առ հասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան...»:[27] 19-րդ դարի վերջին տասնամեակներին արդէն այդ շրջաններում մահմետականութիւնն ըստ ամենայնի զանգուածային տարածում էր ստացել:[28]

Մահմետականների եւ ոչ մահմետականների միջեւ խտրականութիւն կար սովորական կենցաղային հարցերում: Քրիստոնեան չէր կարող իր ցանկացած ձեւով հարսանիք կատարել ու յուղարկաւորութիւն անել պատշաճ ծիսակատարութեամբ: Չէր կարող նաեւ մահմետականին յատուկ զգեստներ եւ կօշիկներ կրել եւ ձի նստել նրա ներկայութեամբ: Անդրադառնալով մահմետական թուրքերի իրաւական դրութեանը, Կ. Մարքսը գրել է. «Սոցիալական ինչպիսի դրութեան մէջ էլ լինի, թուրքը պատկանում է արտօնեալ կրօնին եւ ազգութեան: Միայն նա իրաւունք ունի զէնք կրելու եւ ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնեան պարտաւոր է ամենացածր խաւին պատկանող մահմետականին ճանապարհ զիջելու»:[29]

Հասարակական անբարոյ երեւոյթների եւ քրէական յանցագործութիւնների մասին սուլթան Սելիմ Առաջինի (1512-1520) ժամանակ կազմուած օրէնքի մէջ նոյնպէս նկատւում են խտրականութեան փաստեր: Քրէական յանցագործութիւններին վերաբերող յօդուածների վերջում նշւում է, որ «եթէ վերոյիշեալները տեղի ունենան անհաւատների (քրիստոնեաների) հետ, կամ արտօնեալ իրաւունքներից օգտուող (օտարականների) հետ, թող որ հարկը նրանցից գանձուի կրկնակի չափով»:[30]

17-րդ դարի սկզբներին Թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում ճանապարհորդած Սիմէոն Լեհացին եւս մանրամասն նկարագրում է այն հարստահարութիւններն ու ճնշումները, որոնց ենթակայ էր սուլթանական բռնապետութեան տակ հեծող հայ ժողովուրդը: Սիմէոն Լեհացին կենցաղային խտրականութեան մասին խօսելիս նշել է, որ գաւառական քրիստոնեաները զրկուած էին լաւ չուխա հագնելու կամ մեծ տուն ու այգի ունենալու իրաւունքից: Նրանց արգելուած էր անգամ ձի, ջորի կամ էշ հեծնելը: Հակառակ պարագային պէտք է «ուլախ» կոչուած դրամական տուգանք վճարէին:[31]

Ահա թուրքերէն մի փաստաթուղթ (թեզքերէ), որը տրուած է եղել Կարնեցի երեւելի սարաֆ (լումայափոխ) Մահտեսի Մանուկ Աստուածատրեանին (Ալահվերտի ամիրա): «Օսմանեան պետութեան բարձր պաշտօնատներում իր մատուցած ծառայութիւններով համբաւ ձեռք բերած, սարաֆների դասակարգին պատկանող յիշեալ (անձնաւորութիւնը) հիւանդ եւ ծեր լինելու պատճառով սոյն թեզքերէն տրուեց: Մահմետականի ձի նստելու կերպին չնմանուելու պայմանով»:[32]

Թուրքական ֆերմանները միանգամայն հաստատում են, որ հրեայի, յոյնի, հայի հագած տարազը թանկարժէք կերպասից կամ ոտնամանը արժէքաւոր կաշուից չպէտք է լինէին: Թուրքերը գլխապանի գոյնից եւ ձեւից պէտք է ճանաչէին, թէ մարդիկ որ կրօնի կամ ինչ դիրքի են պատկանում:

Հէնց այս մասին էլ 1577 թ. սուլթան Մուրատ 3-րդը Ստամպուլի կատիին անում է հետեւեալ կարգադրութիւնը. «Այսուհետեւ հրեաների եւ քրիստոնեաների հագած չուխաները, իշքարլատները,[33] խալաթները չպէտք է պատրաստուած լինեն ատլասից, կամկայից[34] եւ այլ մետաքսեայ գործուածքներից: Ֆերաջէները[35] նոյնպէս չպէտք է մետաքսից լինեն, այլ աստառացու կտորից: Դիւլբենտը (չղարշ) նոյնպէս բարակ եւ նուրբ տեսակի չի լինելու եւ իրենց գլխի փաթթոցներն էլ՝ ոչ այնքան շքեղ: Մի խօսքով, չպէտք է իրենց արտաքինով եւ շարժուձեւերով նմանուեն մահմետականներին... Նրանք ովքեր չեն հնազանդուի եւ կը վարուեն հակառակ իմ բարձր հրամանին, ենթարկուելու են պատժի: Անհնազանդներին կալանքի տակ առնելով կը բանտարկես եւ կը տեղեկացնես»:[36] Ոչ մահմետականներին վերաբերող այս սահմանափակումները հաստատւում են նաեւ տուեալ ժամանակաշրջանի հայկական աղբիւրներով: 16-րդ դարի մի ժամանակագրութեան մէջ արձանագրուած է. «Եւ ի ՌԻԹ (1580) թուին հայոց նեղացեալ Մուրատ խոնդքեարն ի հրէից եւ ի քրիստոնէից համարձակութենէն եւ վերացոյց զփակիղն ի գլխոց նոցա, եւ սաստիկ եասախ արար եւ սահմանեաց զսեւ գտակ դնելն, բայց ի տեղիս կաշառս ետուն եւ առին զհրաման դնել զփակիղ, յետ ԺԸ ամի (1598 թ.) ապա Կոստանդինուպօլիս. եւ այլ բազում քաղաքք մնացին գտակով»:[37]

Երեմիա Քէօմուրճեանը իր օրագրութեան մէջ նշում է. «իսկ յայգուցն մունետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ եասաղ արարին զփակեղս քրիստոնէից զիայտ եւ զկապուտն զի բնաւ մի երեւեսցի: Եւ ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս եդին գտակ ի գլուխս եւ զալփաղ եւ զհանդերձս ի վատ եւ ի տգեղ ամենեւիմբ»:[38]

Յետագայ դարերում եւս արգելուած է եղել ազգային տարազի ազատ կրումը. այդ է վկայում 18-րդ դարի թուրք պատմագիր Վասըֆը: Նա իր տարեգրութեան մէջ 1757 թ. դէպքերը շարադրելիս, «բոյաների հագուստի կանոնի» տակ նշում է յոյն, հայ եւ հրեայ համայնքների սահմանափակմանը վերաբերող սուլթանական հրամանագրի մասին:[39] Տարօրինակ է, որ ժամանակակից թուրք պատմաբան Եավուզ Էրջանը տարազի խնդրում գոյութիւն ունեցող այդ խտրականութիւնը փորձում է մեկնաբանել տնտեսական դժուարութիւնների հողի վրայ:[40] Մինչդեռ փաստերը ցոյց են տալիս, որ խտրականութիւն է եղել կենցաղային ամենապարզ հարցերում եւս: Օրինակ, միջնադարեան կանոններից մէկում կարդում ենք. «(Բաղնիքում) միեւնոյն սրբիչը քրիստոնեային եւ մահմետականին տալը արգելուած է: Քրիստոնեաներին տրուող սրբիչները պէտք է նշանով առանձնացուած լինեն: Վարսաւիրները միեւնոյն ածելիով չեն կարող մահմետականի եւ քրիստոնեայի գլուխը ածիլել»:[41] Մի խօսքով, շարիաթի դոգմաները չէին կարող հաւասարութիւն դնել մահմետականի եւ ոչ մահմետականի միջեւ: Զնայած քրիստոնեան էլ միեւնոյն պետութեան հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկուէր ու հարկատու լինէր մահմետականին:

Արեւմտեան Հայաստանում մանկաժողովի (տեւշիրմէ) կիրառման քաղաքականութիւնը եւս կատարեալ մի պատուհաս էր հայ ժողովրդի

համար։ Արեւմտեան Հայաստանի նահանգներում մանկաժողովը սկսել է կիրառուել 1519 թ.։ Այդ մասին Անանուն Սեբաստացին իր ժամանակագրութեան մէջ նշում է հետեւեալը. «Ի թուին ՋԿԸ (1519) բարկութիւնն Աստծոյ սաստկացաւ եւ սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»։[42] Վկայութիւն կայ նաեւ այն մասին, որ հայերից մանկահաւաք կատարուել է դեռեւս 1464 թ.։ Մի ձեռագիր յիշատակարանում ասուած է հետեւեալը. «...Իսկ անօրէն արքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկուսն եւ երեր Ըստամբոլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկացն եւ երեր զթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրէն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն»։[43]

Մանկաժողովին վերաբերող պատմագիտական եւ յատկապէս վաւերագրային նիւթերը Ստամպուլի արխիւներից հաւաքել եւ երկու հատորով հրատարակել է թուրք պատմաբան Թ. Ուզունչարշըլը։[44] Հրապարակուած հրովարտակներից իմանում ենք, որ մանկաժողովը տեղի է ունեցել իւրաքանչիւր երկու կամ հինգ տարին մէկ անգամ։ Մանկաժողովի պաշտօնին նշանակուած վերակացուն սուլթանական ֆերմանը ձեռքին շրջում էր իրեն յատկացուած կատիւթիւններում (վարչական միաւոր) եւ հաւաքագրում ութից քսան տարեկան ֆիզիքապէս առողջ եւ ամրակազմ քրիստոնեայ տղաներին։ Այնուհետեւ պահակների հսկողութեան ներքոյ տղաներին բերում էին Ստամպուլ եւ յատուկ գրանցման տաֆթարներով ներկայացնում ենիչերիների աղային։ Այստեղ փոխելով նրանց հագուստները, հագցնում էին գեղին գոյնի տոլմա,[45] իսկ վրայից էլ կարմիր ապա։[46] Մանկաժողովի ենթարկուած իւրաքանչիւր խմբին, Ստամպուլ հասնելուց յետոյ, տրւում էր երկու-երեք օր հանգիստ։ Այնուհետեւ փոխում էին նրանց անունները, կատարում մահմետական հաւատը ընդունելու երդման արարողութիւն եւ ապա ենթարկում թլփատման։ Պարզւում է, որ մանկաժողովի ենթարկուած տղաների հագուստն ու ճանապարհածախսը, «կուլ ակչեսի» (ստրուկի ակչէ) անուան տակ, գանձել են նրանց բնակավայրերից, 80 կամ 100 ակչէիի սահմաններում։ Փաստերը վկայում են, որ այս գումարը 17-րդ դարում հասել է մինչեւ 600 ակչէի։[47]

Վերոյիշեալ արարողութիւնից յետոյ յատուկ զօրանոցային պայմաններում տղաներին դաստիարակում էին մոլեռանդ մուսուլմանական ոգով եւ դարձնում ենիչերի։ Մանկաժողովին վերաբերող հրովարտակներից տեղեկանում ենք նաեւ, որ զինուորական ծառայութեան փոխարէն յաճախ տղաներին որպէս ձրի աշխատուժ աշխատացրել են նաւաշինարաններում, անտառներում, շինարարութեան վրայ եւ այլուր։ Իսկ գեղեցիկ, վայելչակազմ տղաներին օգտագործել են պալատական զանազան աշխատանքներում։[48]

Մանկաժողովի ընթացքում երեխաներին ծնողներից բաժանելու տխուր պատկերը, որը զուգակցւում էր թուրք պաշտօնեաների գործադրած վայրագութիւններով, մի կատարեալ ողբերգութիւն էր։ Ծանր զրկանքներից եւ յատկապէս հաւատափոխութիւնից խոյս տալու նպատակով յաճախ տղաները փորձել են փախուստ տալ կամ էլ ծնողները կաշառքի ուժով ամէն կերպ ձգտել են ազատել իրենց երեխաներին այդ

չարաբաստիկ աղէտից։ Այսուհանդերձ այդպիսիների նկատմամբ ձեռնարկուել են կտրուկ միջոցներ եւ յայտնաբերուածներին կրկին վերադարձրել են ենիչերների աղային։ Այս մասին Կեսարիոյ պէյին ուղղուած սուլթանական հրովարտակներից մէկում ասուած է. «Արդ, հրամայում եմ, երբ իմ բարձր ֆերմանը տեղ հասնի, հետամուտ եղիր այս գործին եւ իմ բարձր հրամանով տեւշիրմէի ենթարկուած այն տղաներին, որոնք փախուստի դիմելով հաւատափոխ են եղել, հաւաքիր, անունները գրելով տաֆթար կազմիր եւ վստահելի անձանց հետ ու զարկիր Ստամպուլ։ Նրանց հսկող անձանց կարգադրիր, որ ճանապարհին խիստ ուշադիր լինեն»։[49]

Ի. Ուզունչարշըլը ընդունում է, որ պալքանեան ժողովուրդներից բացի հայերն ու վրացիները եւս ենթարկուել են մանկաժողովի։ Նոյնիսկ բերում է մի քանի օրինակներ, որտեղ ցոյց է տրւում, թէ տեւշիրմէի ենթարկուած հայ պատանիները յետագայում հասել են բարձր պաշտօնների։ Պարզւում է, որ 16-րդ դարի հանրայայտ ճարտարապետ Խոջա Սինանը նոյնպէս տեւշիրմէով հաւաքագրուած երեխաներից է։ «Հանրայայտ ճարտարապետ Սինանը,- գրում է Ի. Ուզունչարշըլը,- սուլթան Սելիմ Ահեղի ժամանակ Կեսարիայից առաջին անգամ մանկաժողովի ենթարկուած երեխաներից էր»։[50] Սակայն Ի. Ուզունչարշըլը ճարտարապետ Սինանի մասին խօսելիս ստոյգ չի նշում նրա ազգութիւնը։ Փաստերը ապացուցում են, որ Սինանը ազգութեամբ եղել է հայ։ Այդ հաստատւում է Թուրքիայի մինիստրների խորհրդի արխիւում պահուող մի վաւերագրից։[51] Այս վաւերագրի հիման վրայ Բարս Թուղլաջը (Բարսեղ Թուղլաջեանը) նշում է հետեւեալը. «Խոջա Սինանը, որը 16-րդ դարում օսմանեան ճարտարապետական արուեստի զարգացման գործում իր խոր ազդեցութիւնն է ունեցել, ծագումով եղել է հայ»։[52]

Եավուզ Էրջանը, աղաւաղելով փաստերը, աշխատում է ժխտել պատմաբանների կողմից ընդունուած այն թէզը, որ տեւշիրմէն, իբր, պատմականօրէն մեծ դեր չի խաղացել քրիստոնեաների զանգուածաբար մահմետականացնելու եւ թուրքացնելու խնդրում։[53] Եավուզ Էրջանը, յամենայնդէպս, պէտք է որ ծանօթ լինէր Ի. Ուզունչարշըլի արձանագրած հետեւեալ փաստին. «Ելլտրրում Բայազէտից յետոյ հպատակ քրիստոնեայ երեխաներին մանկաժողովի ենթարկելու համար կազմուել է մի օրէնք։ Այս նոր օրէնքով Ռումելիի բոլոր ոչ մահմետական ժողովուրդները աստիճանաբար պիտի մահմետականացուէին։ Իսկ մահմետականացուած այդ զինուորների քանակով հզօրանալու էր թուրքական բանակը»։[54]

Իրօք որ, զինուոր հաւաքագրելու այս եղանակով օսմանցիները նախ կրկնապատկում էին իրենց զինուորների քանակը եւ միեւնոյն ժամանակ աշխատում էին մէջտեղից վերացնել քրիստոնեաների ամենաառնական տարրերին։ Այս նոյն միտքը հաստատում է նաեւ անգլիացի հանրայայտ պատմաբան Հ.Ա. Գիպպընսը, նշելով, որ պալքանեան ժողովուրդների շրջանում բանակի համար զինուոր հաւաքագրելը իրենց համար առաւել մի ծանր հարուած էր, քան հարեմի համար աղջիկների հաւաքը, որովհետեւ

ընտրում եւ հաւաքում էին ամենավայելչակազմ եւ ուժեղ պատանիներին։[55]

Անկասկած մանկաժողովը մի հզօր միջոց էր թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքականութեան իրականացման ճանապարհին։ Այստեղ տեղին է յիշատակել 16-րդ դարի թուրք պատմագիր Մուսթաֆա Սելանիկի էֆէնտիի եզրակացութիւնները տեւշիրմէի մասին։ Նա իր «Պատմութեան» մէջ գրել է. «Ժամանակի իշխողները տղաների տեւշիրմէի գործում անխիղճ են եղել եւ նուէրի անուան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել, ինչպէս գայլն է յարձակւում ոչխարի հօտի վրայ, այնպէս էլ նրանք ագահօրէն յարձակուել են երկրի բայաների վրայ։ Հարուստ բայաներից խլել են անթիւ անհամար հարստութիւն, իսկ աղքատ բայաներից՝ նրանց զաւակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»[56]

Հարկ է նշել, որ 16-17 դարերում նուաճողական քաղաքականութեան հետեւանքով տեղի ունեցած երկարատեւ պատերազմական գործողութիւնները Թուրքիայի եւ Իրանի միջեւ աւերիչ հետեւանքներ ունեցան յատկապէս Հայաստանի համար։

Տուեալ ժամանակաշրջանի հայ պատմիչները, ժամանակագիրներն ու յիշատակարանների հեղինակները, ամենայն իրաւամբ, խիստ մռայլ գոյներով են նկարագրում հայ ժողովրդի վիճակը թուրքական եւ պարսկական տիրապետութեան տակ։ Այդ ժամանակաշրջանը հայկական աղբիւրներում բնորոշւում է որպէս «վրդովման» ու «ալեկոծման» շրջան։ Բերենք մի հատուած Յովհաննէս Արճիշեցու տարեգրութիւնից (16-րդ դ.), որտեղ հեղինակը ականատեսի աչքով նկարագրել է 1531-1534 թթ. թուրքերի եւ պարսիկների միջեւ տեղի ունեցած պատերազմները Վանայ լճի շրջակայ գաւառներում. «Աւաղ զիմ հոգիս հայրք եւ եղբայրք, թէ քանի չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս եւ ի վրդովմանս,- գրել է Յովհաննէս Արճիշեցին,- քանի քաղաք եւ գաւառ աւերեցան եւ քանի վանօրայք եւ եկեղեցիք քակտեցան, քանի մեծատունք աղքատացան, եւ վաճառականք թալանեցան, քանի քրիստոնեայք գերի վարեցան, եւ անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան եւ չեմ կարնար գրել չարիքն, զոր վերին աշխարհն քաշեց եւս առաւել ծովու բոլորս։[57] Իսկ Ա. Դաւրիժեցին այսպէս է պատկերում այդ պատերազմները. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ, եթէ Սարդարն՝ որ եկն յարեմտից, եւ թէ շահն՝ որ ի կողմս արեւելից՝ թէ որքան աւերումն ու քանդումն եղեւ աշխարհի, թէ ի գալն եւ թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն...»։[58]

Գանձուող բազմաթիւ հարկերի պատճառով բայայի վիճակը այնքան էր ծանրացել, որ գիւղերից ցիր ու ցան լինելով՝ սկսել էին փախչել այս ու այն կողմ։ Տուեալ ժամանակաշրջանի թուրքերէն մի անանուն ուղերձում, որն ուղղուած է սուլթան Մուստաֆա 2-րդին (1695-1703), կարդում ենք. «Իմ տիրակալ, Ձեզ համար շատ կարեւորութիւն ունեցող բայայի վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հաւաքուող հարկերը։ Միեւնոյն ժամանակ բարձր հրաման արձակէք Օսմանեան կայսրութիւնում հաշուառում անցկացնելու մասին։ Պէյլերպէյիներին եւ սանջակպէյիներին կայսերական յանձնարարական տուէք, որպէսզի այսուհետեւ բայայից չգանձուեն կաֆթան պայայի, սելամիյէյի եւ նալ պահայի հարկերը,[59] քանի որ բայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է»[60]

Ոչ մահմեդական բնակչութիւնից գանձուող ամենածանր հարկերից մէկը գլխահարկն էր (ջիզիէն)։ Ամենածանր հարկ լինելով հանդերձ, այն երբեք կայուն չափ չի ունեցել։ Թէեւ թուրքական կանուններում, որպէս օրէնք, ընդունուած է եղել 25 ակչէ գումար, սակայն այն ունեցել է խիստ փոփոխական բնոյթ եւ տարբեր ժամանակներում հասել է մինչեւ 240 ակչէի։ Նախ գլխահարկի հաւաքման ընթացքում պաշտօնեաները գործադրել են կոպիտ կամայականութիւններ, իսկ պատերազմների ընթացքում պետութեան կողմից ապօրինի գլխահարկ է գանձուել տարին 2 անգամ։ Յակոբ Կարնեցին եւս անդրադարձել է Օսմանեան կայսրութեան կենտրոնական եւ տեղական իշխանութիւնների հարկային ծանր քաղաքականութեանը։ Նա իր ինքնագիր յիշատակարաններում ահա թէ ինչ է գրում. «Ով եղբայրք, յորժամ հանդիպիք ի յայս թղթիս մի մեղայ-դրէք գրիս, զի տաճիկք խիստ կու նեղացընին հարկապահանջութեան եւ խիստ տրտմեալ էի եւ իբր զերազի գրեցի»։[61]

Երկարատեւ այդ պատերազմների ընթացքում հայերի եւ միւս քրիստոնեայ բնակչութեան համար աղէտալի հետեւանքներ է ունեցել նաեւ խաղաղ բնակչութեան գերեվարութիւնը եւ նրանց՝ որպէս ստրուկների վաճառքը Կ. Պոլսում եւ այլ մեծ քաղաքներում։ Էվլիա Չելեբիի տուեալներով ստրուկների առեւտրով զբաղուող վաճառականների թիւը միայն Կ. Պոլսում եղել է մօտ 2000, «որոնք Կովկասից, Վրաստանից եւ Ղրիմից իբրեւ նուիրական պատերազմի ապրանք ստրուկներ են բերել եւ վաճառել»։[62]

Միջնադարի հայ պատմիչ Սիմէոն Տիգրանակերտցին ահա թէ ինչպէս է նկարագրում քրիստոնեաների գերեվարման տխուր պատկերը. «Ի թուականիս հայոց ՌԻԹ (1580)... բազում զօրս առաքեաց (սուլթան Մուրատը-Ա.Փ.) ի Պարսկաստան... եւ աւերեցին զբազում երկիր՝ եւ զամենեսեանսն սուր սուսերի մաշեցին. եւ ի քրիստոնէից բազում եւ անթիւ գերի վարեցին... զոմանս սրոյ ճարակ տուին, եւ զբազումս գերեցին, զայր եւ զկին, զմեծ եւ զփոքր, զաղջկունս եւ զանմեղ տղայս ի քրիստոնէից, եւ այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճառել զդառնութիւն եւ զնեղութիւն ժամանակիս...»։[63]

Սիմէոն Լեհացին եւս ականատեսի աչքով նկարագրել է եւ տուել Կ. Պոլսի (Եսիր պազարում» հայ գերիների վաճառահանման սրտաճմլիկ պատկերը. «Որք ծերք են եւ պառաւք նստել են։ Իսկ զաղջուկնս եւ զմանկունս, զտղայս եւ զաղուորերես կանայս տէլլալնին առեալ ի ձեռս զնոսա՝ չուրջ ածէին եւ ծախէին որպէս զձի եւ զջորի. եւ զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօյտանի՝ իբրեւ զոչխարս ի փարախի։ Իսկ զնօղքն եկեալ բանային զերեսս եւ զծոցս կոյս աղջկանց եւ զամենայն մարմինս նոցա չօշափէին յոտաց մինչեւ ի գլուխ, զի մի փոս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին։ Եւ նոքա լուռ եւ անմռունչ կային, եւ զորս հաճէին՝ գնէին, եւ

որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քվերաց եւ յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»:[64]

Հայ կրօնական առաջնորդներն ու հեղինակութիւն վայելող անձինք անտարբեր չեն մնացել եւ ամէն կերպ պայքարել են՝ կանխելու եւ վերջ տալու հայ բնակչութեան գերեվարութեան ողբերգական երեւոյթին: Ցակոբ Կարնեցին վկայում է, որ 1630 թ. կաթողիկոսի, ինչպէս նաեւ Էրզրումի հայ մեծահարուստ վաճառականների ջանքերով, դրամի ուժով ազատել են մեծ թուով հայ գերիներ եւ ուղարկել իրենց նախկին բնակավայրերը,[65] իսկ 1724 թ. (հաւանաբար Օգոստոս ամսին) հայոց Կոլոտ պատրիարքը բողոք է յայտնել մեծ վեզիր Իբրահիմ փաշային, նկատի ունենալով, որ Կովկասի կողմերից մեծ թուով հայ գերիներ են բերուած Կ. Պոլսում վաճառելու համար:[66] Հայերը ինչպէս նաեւ միւս ոչ մահմետական բնակիչները Կ. Պոլսում յաճախ ձգտել են գնել իրենց ազգակից ստրուկներին եւ պահել իրենց տներում: Սակայն 16-րդ դարում արձակուած սուլթանական հրովարտակներում նկատում ենք որ Կ. Պոլսի ոչ մահմետական հարուստներին խստիւ կերպով արգելուել է ստրուկ գնելը: Օրինակ, 1560 թ. սուլթան Սուլէյմանի արձակած մի ֆերմանում կարդում ենք. «Այսուհետեւ հրեաների եւ քրիստոնեաների մօտ գերիները ծառայութիւն չպէտք է անեն, ազատ արձակուած գերիները յանձնուելու են մահմետականներին, իսկ գերի համարուողները վաճառուելու են նոյնպէս մահմետականներին»:[67]

Բնորոշ է, որ 17-րդ դարի թուրք պատմագիր Կոչի պէյը իր ժամանակին խիստ քննադատութեան է ենթարկել օսմանեան Թուրքիայում ժողովրդական զանգուածներին ճնշող եւ շահագործող շրջանների չարաշահումներն ու բռնութիւնները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինութիւնները, երկրում ստեղծուած անապահովութիւնը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի եւ այլ զօրամասերի սանձարձակութիւնները:[68]

Հայ ժողովուրդի ծանր դրութեան մասին տեղին է յիշատակել նաեւ 1584 թ. Ազարիա Կաթողիկոսի կատարած հետեւեալ դառը եզրայանգումը. «Եմք իբրեւ զմի այգի առանց պարսպի եւ պահնորդի ցրուեալք աստ եւ անդ, եւ եմք զետ ոչխար ի մէջ գայլոց եւ որպէս զգառ ինք ի մէջ արիւծոյ, եւ ամենեքին եմք գերի ի ներքոյ անողորմ տէրանց, որք վասն ամենայն օր տանջեն եւ չարչարեն զմեզ ագահութեամբ եւ ոչ կշտանան բնաւ զի տնանկ եւ աղքատ եմք եւ ոչ կարեմք շարժել քայլ մի առանց երկիւղի մեծ փորձանաց»:[69]

Հակառակ այս բոլորին արդի թուրք պատմաբանները պնդում են, որ թուրքերը իբրեւ թէ, տեւական խաղաղ ու մարդասիրական քաղաքականութիւն են վարել նուաճած ժողովուրդների նկատմամբ: Այստեղ բաւարարուենք բերելով մէկ օրինակ թուրք պատմաբան Եըլմազ Օզթիւնայի գրքից. նա պնդում է, որ «թուրքերը իրենց գրաւած հողերը բերում էին խաղաղութիւն եւ հանգստութիւն, բացարձակ կարգ ու կանոն, բնակչութիւնը ձեռք էր բերում հանգստութեան հետ կապուած բոլոր բարիքները, որ նա մոռացել էր դարերի ընթացքում»:[70]

Մինչդեռ վերեւում բերուած փաստերը վճռականօրէն հերքում են ժամանակակից թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների այն պնդումները, թէ իբր Օսմանեան սուլթանները հանդուրժողական քաղաքականութիւն են վարել հպատակ ազգերի նկատմամբ, թէ քրիստոնեայ ժողովուրդները ունեցել են արտօնութիւններ եւ չեն ենթարկուել ազգային ու կրօնական ճնշման ու հալածանքների:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ա. Պէրպէրեան, Հայոց Պատմութիւն, Կ. Պոլիս, 1871, էջ 227-233:
2. Մանր մատենագիրք, ԺԵ-ԺԹ դդ., գիրք Ժ. հրատ. Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 219-228:
3. "Belleten", 1984, No. 188, s. 1120.
4. Մանր Մատենագիրք, էջ 248:
5. Թուրքական արծաթեայ դրամ:
6. Մ. Զուլալեան, Արեւմտեան Հայաստանը XVI-XVIII դդ., Երեւան, 1980, էջ 232:
7. Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. 5, 2-րդ մաս, Վենետիկ, 1804, էջ 117:
8. Ahmet Refik, On Altinci asirda Istanbul hayati (1553-1591), 2-ci, basim, Istanbul, 1935.
9. *Նոյն տեղում*, էջ 45:
10. *Նոյն տեղում*, էջ 27:
11. *Մանր ժամանակագրութիւններ*, XIII-XVIII դդ., կազմեց Վ.Ա. Ցակոբեան, հ. 2, Երեւան, 1956, էջ 244:
12. Նոյն տեղում, էջ 563, 564:
13. Էվլիա Զելեպի, Ուղեգրութիւն, 3-րդ հատ. Մոսկուա, 1983, էջ 197 (ռուսերէն):
14. Մանր մատենագիրք, էջ 250-251:
15. Նոյն տեղում էջ 251:
16. H.T. Cinlioglu. Tokat tarihi, 2-ci Kisim, 1950, s. 34-35.
17. Մանր մատենագիրք, էջ 378:
18. Մանր ժամանակագրութիւններ, հ. 2, էջ 473:
19. Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմուրճեանի, Երուսաղէմ, 1939, էջ 386:
20. Հ. Զինլիօղլու, նշ. աշխ., 3-րդ մաս, էջ 55:
21. Dustur, Tertip-i evvel, Istanbul, 1300, c. 4, S. 375 (արաբատառ):
22. Թուրքական աղբիւրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի միւս ժողովուրդների մասին, հ. Բ., կազմեց Ա.Խ. Սաֆրաստեան, Երեւան, 1964, էջ 250:
23. Ա. Ժելեազկովա, պալանեան թերակղզու վրայ իսլամի տարածման մի քանի գործօնների մասին, 15-18-րդ դդ.: Տե՛ս Օսմանեան կայսրութիւն, յօդուածների ժողովածու, Մոսկուա, 1986, էջ 113-115, (ռուսերէն):
24. H. Tuncer, Osmanli Imparatorlugunda toprak hukuku; Ankara, 1962, s. 77
25. Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրութիւն Երուսաղէմ, էջ 467-468:
26. Մանր մատենագիրք, էջ 493:
27. Ղ. Ինճիճեան, նշ. աշխ., էջ 396:
28. Լ. Խաչիկեան, էջեր համշենահայ պատմութիւնից,- «Բանբեր Երեւանի համալսարանի» 1969, No. 2, էջ 138:
29. Կ. Մարքս եւ Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 9, Մոսկուա, 1957, էջ 6:

30· Սուլթան Սելիմ I-ի օրէնսգիրքը· բնագրի հրապարակումը, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնը Ա· Ս· Թվերիթինովայի, Մոսկուա, 1969, էջ 35, (ռուսերէն):
31· Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, 1931, էջ 193–194:
32· «Բազմավէպ», 1934, No. 1, էջ 31:
33· Իտալերէն skarlato բառից: Կարմրագոյն վենետիկեան չուխա:
34· Մետաքսէ գունաւոր գործուածք:
35· Լայն թեւերով ծածկոցանման հագուստ, որի մէջ փաթաթւում էին մահմետական կանայք:
36· Ս· Ռեֆիկ, նշ· աշխ·, էջ 51:
37· Մանր ժամանակագրութիւններ, հ· 2, էջ 516:
38· Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմուրճեանի, էջ 400:
39· Թուրքական աղբիւրներ, հատ· Ա· էջ 215:
40· Belleten, 1984, No. 188, s. 1142.
41· Հ· Թիւնջեր, նշ· աշխ·, էջ 62:
42· Մանր ժամանակագրութիւններ, հատ· 1, Երեւան, 1951, էջ 169:
43· ԺԵ· դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ·Ս· Խաչիկեան, մասն Բ·, Երեւան, 1956, էջ 302:
44· I.H. Uzuncarsili, Osmanli devleti teskilatindan kapukulu ocaklari, Ankara, C.I. 1943, c. 2, 1944.
45· Արտահագուստ (թուրքերէն փաթաթել բառից), այդպէս է կոչուել, որովհետեւ փէշի ծայրերը փաթաթուելով մտցուել են մէջքի մէջ: Հագուստի վերին մասը մինչեւ գօտկատեղը կոճկուել է, թեւերը եղել են լայն, բազուկների մօտ՝ նեղ:
46· Կոշտ բրդեայ կտորից վերարկու:
47· Ի· Ուզունչարշըլը, նշ· աշխ·, հ· 1, էջ 18:
48· Նոյն տեղում, էջ 126:
49· Նոյն տեղում:
50· Նոյն տեղում, էջ 20:
51· Basbakanlik arsivi, muhimme defterleri serisi. No. 123, s. 240. Pars Tuglaci, Osmanli mimarliginda batilasma donemi ve Balyan ailesi. Istanbul, 1981, s. 1.
52· Նոյն տեղում:
53· Belleten, 1984, No. 188, s. 1137.
54· Ի· Ուզունչարշըլը, նշ· աշխ·, հատ· 1, էջ 13:
55· H.A. Gibbons, Osmanli Imparatorlugunun kurulusu, Istanbul, 1928, s. 100 (արաբատառ):
56· Թուրքական աղբիւրներ, հ· Բ·, էջ 137:
57· Մանր ժամանակագրութիւններ, հ· 2, էջ 231:
58· Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ· Վաղարշապատ, 1896, էջ 78:
59· Անօրինական գանձուող հարկեր:
60· Belleten, 1969, No. 129, s. 24-34.
61· Մանր ժամանակագրութիւններ, հ· 2, էջ 584:
62· Թուրքական աղբիւրներ, հ· Գ·, էջ 36:
63· Հ· Մանանդեան, Հ· Աճառեան, հայոց նոր վկաները (1155–1843)· Վաղարշապատ, 1903, էջ 413–414:
64· Սիմէոն Լեհացի, նշ· աշխ·, էջ 18–19:
65· Մանր ժամանակագրութիւններ, հ· 2, էջ 566:
66· Գ· Բամպուճեան, Յովհաննէս պատրիարք Կոլոտ եւ իր աշակերտները, Ստամպուլ, 1984, էջ 43:
67· Ա· Ռեֆիկ, նշ· աշխ·, էջ 43–44:
68· Թուրքական աղբիւրներ, հ· Բ· էջ 230:
69· Ա· Պալճեան, Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1978, էջ 309:
70· Yilmaz Oztuna, Baslangistan zamanimiza Kadar Turkiye tarihi, c. 3, Istanbul, 1964, s. 12.

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱՊՏՈՒԼ ՀԱՄԻՏԻ ԲՌՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

3080

Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանի հայահալած քաղաքականութեան եւ հայերի կոտորածների մասին կան բազմաթիւ հրատարակութիւններ հայրենի եւ թէ օտարազգի պատմաբանների, պետական գործիչների եւ ականատեսների կողմից: Մենք այս գլխում կ'աշխատենք այս հարցը մասամբ մեկնաբանել տուեալ ժամանակուայ թուրք գործիչների աշխատութիւնների եւ յուշագրութիւնների հիման վրայ եւ այնուհետեւ հարցի էութիւնը բացայայտելու համար կը բերենք փաստացի ապացոյցներ եւրոպական դիւանագիտական զեկուցագրերից եւ ականատեսների վկայութիւններից, որոնք լիովին հաստատում են 19-րդ դարի վերջին քառորդում հայերի նկատմամբ կատարուած բռնութիւնները: Իրօք որ տուեալ ժամանակուայ թուրք պետական եւ մշակութային գործիչների յուշագրութիւններում արեւմտահայութեան վիճակին վերաբերեալ կան ուշադրութեան արժանի տեսակէտներ եւ նկարագրութիւններ: Դրանց մեծ մասը շարադրուած են օսմաներէն լեզուով եւ մինչ այսօր մատչելի չեն եղել հայ ընթերցողին: Այդ հրատարակութիւններում մեծ տեղ է յատկացուած Արեւմտեան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կէսից ծաւալուած հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին, ինչպէս նաեւ հայկական հարցի, Օսմանեան կայսրութեան եւ մեծ պետութիւնների դիրքորոշման խնդրի շուրջ: Չնայած նրանց տեսակէտների արատաւորութեանը, դէպքերի նկարագրման ընթացքում ունեցած շահադիտական կողմին, նրանց յուշերում եւ մենագրութիւններում պարունակւում են զգալի չափով կոնկրետ նիւթեր:

Այսպէս 1878 թ· Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային ու կրօնական հալածանքները, կեանքի ու գոյքի անապահովութիւնը,

հարկային ծանր լուծն ու գաւառային պաշտօնեաների չարաշահումներն աւելի մեծ չափերի հասան։ «Խիստ հսկողութեան տակ առնուեցին հայ պաշտօնեաները եւ հայկական հրատարակութիւնները։ Այդ պահից սովորական երեւոյթ դարձաւ աքսորը։ Կուսակալների կողմից քննութեան առնուեցին հայոց եկեղեցիների եւ դպրոցների մասին տրուած հրովարտակները։ Վերջին տարիների ընթացքում փակուեցին այն հայկական դպրոցները, որոնք բացուել էին ոչ թէ հրովարտակով, այլ միայն կառավարութեան թոյլտուութեամբ։ Խստութիւններ ու բռնութիւններ գործադրուեցին նաեւ հարկերի գանձման հարցում»,–[1] գրում է թուրք գործիչ Օսման Նուրին։ Հրահանգ տրուեց մամուլի գրաքննչական վարչութեանը՝ արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմութեանը եւ աշխարհագրութեանը վերաբերող անունների յիշատակումը։[2] Բնականաբար այս բոլորը նախաձեռնւում եւ հրահանգւում էր սուլթան Ապտուլ Համիտի կողմից։ Այդ լիովին հաստատւում է նաեւ թուրք պատմաբան Զուհուրի Տանիշմանի բազմահատորանոց գրքի 13-րդ հատորում բերուած նիւթերից, որը նուիրուած է Ապտուլ Համիտի իշխանութեան ժամանակաշրջանին։

Իմիջիայլոց թուրք պատմագրութեան մէջ վերջին ժամանակները ամէն կերպ աշխատում են փառաբանել արիւնարբու սուլթան Ապտուլ Համիտ 2-ին, որպէս Թուրքիայի պատմութեան մէջ «մեծ» դեր խաղացած սուլթանի։ Այդ տեսակէտից յետ չի մնում նաեւ վերոյիշեալ Զուհուրի Տանիշմանը։ Նա ամէն կերպ ձգտում է սրբացնել Ապտուլ Համիտին եւ ժխտել համաշխարհային մամուլում նրան տրուած գնահատականը, դրականի վերածելով նրա բոլոր բացասական կողմերը։ Ապտուլ Համիտը ներկայացւում է ոչ թէ վախկոտ, նենգ, դաժան, այլ քաջ, արդարամիտ եւ վեհանձն անձնաւորութիւն, որն իր ազգի համար աւելի շատ գործեր է կատարել, քան որեւէ մի այլ սուլթան եւայլն։ Այստեղ տեղին ենք համարում բերել Զուհուրի Տանիշմանի գրքից հայկական բարեփոխումների խնդրում Ապտուլ Համիտի ունեցած դիրքորոշման բնութագրումը։

«Հայկական հարցում այս պետութիւնների (Անգլիայի եւ Ռուսաստանի– Ա.Փ.) ունեցած մօտեցումից Ապտուլ Համիտը կարողացաւ գտնել օգտուելու ուղին։ Նախ եւ առաջ, Սան Ստեֆանոյի եւ Պեռլինի պայմանագրերում արեւելեան վիլայէթներում բարեփոխումներ կատարելու խնդրին բոլորովին ուշադրութիւն չդարձրեց»։[3] Նշենք նաեւ, որ Գերմանիայի կայսեր հետ ունեցած հանդիպման ժամանակ Ապտուլ Համիտը բացայայտօրէն ասել է. «Ես աւելի կը նախընտրեմ մեռնել, քան թէ Անատոլիայի արեւելքում ինքնավարութեան տանող բարեփոխումներ անցկացնել»։[4] Իսկ Պեռլինի վեհաժողովից անմիջապէս յետոյ Օսմանեան կայսրութեան մեծ վէզիր հայատեաց Քեամիլ փաշան ցինիկաբար յայտարարում էր. «Հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճիտ ընելու ենք։ Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք՝ քիւրտ, չերքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնական պատերազմ մը կը հրապարակենք եւ դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ոչ զէնք ունի, ոչ զինուորութիւն եւ ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զէնք էլ ունինք, զինուորութիւն էլ, աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան–Ա.Փ.) եւ ամէնէն հարուստը մեզ զինակից է եւ մեր Ասիական աշխարհքին երաշխաւոր։ Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը զբաղինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»։[5] Քեամիլ փաշայի այս նենգ մտայղացումը իրօք որ դարձաւ արեւմտահայութեան բնաջնջման հարցում թուրքական պետական քաղաքականութեան առանցքը։

1891 թ. Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրտերից կազմուած անկանոն զօրագնդեր, որոնց գլխաւոր նպատակներից մէկն էր հալածել ու կոտորել հայ բնակչութեանը։ Ժամանակի մեծ վէզիրներից Սայիտ փաշան ահա թէ ինչ բնութագրութիւն է տալիս այդ զօրագնդերին իր յուշագրութեան մէջ. «Համիտիէ հեծելագնդերը, տուրքերից ազատուած լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնութիւններ են գործադրում բնակչութեան վրայ։ Թէ՛ վիլայէթի (վարչութեան) եւ թէ՛ բնակչութեան բողոքներից պարզւում է, որ Տիարպէքիրի շրջանում գտնուող «Համիտիէ» հեծելագնդի հրամանատար Մուստաֆա փաշան, որը նաեւ աշիրեթի առաջնորդն է, զինուած աշիրեթի մարդկանց, բառիս բուն իմաստով, դարձրել է բռնութիւն գործադրելու կատարեալ մի գործիք, վտանգելով շրջանի բնակչութեան ապահովութիւնն ու անդորրը։ Տիարպէքիրի նախկին վալի Խալիտ էֆէնտին եւ նրա յաջորդը՝ Ֆայիք փաշան բազմիցս գրել են այն մասին, որ 4-րդ բանակի հրամանատար Զէքի փաշան չափից աւելի է հովանաւորում յիշեալ Մուստաֆա փաշային։

...Այս տարի (1896 թ.) «Համիտիէ» հեծելագնդերի զօրախաղերի ծախսերը եւ նրանց ռոճիկը ապահովելու համար ռազմական մինիստրութիւնը 35 հազար լիրա տրամադրելու զեկոյց էր ներկայացրել։ Ես չեմ հասկանում, թէ այս տարի ինչ դրդապատճառների հիման վրայ է ցանկութիւն առաջացել անցկացնել «Համիտիէ» հեծելագնդերի զօրախաղեր։ Հայերի աղէտից յետոյ Անատոլիայի դրութիւնը բաւականին նրբացել է եւ եթէ քրտերը իրենց այս տեղաշարժերով բնակչութեան ունեցուածքին եւ անասուններին նոր բռնութիւններ գործադրեն, որը աւելի հաւանական է, դա առաջ կը բերի մի նոր աղէտ»։[6]

Հայերին զանգուածաբար բնաջնջելով եւ նրանց թիւը արհեստականօրէն նուազեցնելով, թուրքական կառավարութիւնը ձգտում էր մոռացութեան մատնել Պեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, ինչպէս նաեւ մայիսեան բարենորոգումների ծրագիրը։ Միեւնոյն ժամանակ սուլթանական կառավարութիւնը մեծ ջանքեր էր թափում թուլացնելու միջազգային հասարակայնութեան կարծիքը կոտորածների կապակցութեամբ։ Այս առիթով Քեամիլ փաշան Ապտուլ Համիտին խորհուրդ է տուել օտար պաշտօնեաների ստորագրութեամբ շտապ յօդուածներ հրապարակել արտասահմանեան մամուլում՝ հերքելու համար տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները։[7] Սակայն Քեամիլ

փաշայի այս նենգութիւնը սպասուող արդիւնքը չտուեց: Իր զեկուցագրում ռուսական պետական խորհրդական Ժաղովսկին այս կապակցութեամբ (Նոյեմբեր 22, 1894 թ.) յայտնում է. «վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնութիւններն արդէն թափանցել են եւրոպական մամուլ եւ ամենուրեք մերկացնող յօդուածների փոթորիկ է բարձրացել Հայաստանի քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ Թուրքական զօրքերի կատարած գազանային գործողութիւնների դէմ: Այդ մեղադրանքների (ստայօդ եւ անմօթ) հերքումները, որ մօտ օրերս սուլթանի հրամանով հեռագրով ուղարկուել են արտասահմանի թուրքական ներկայացուցչութիւններին, հնարաւորին չափ լայն հրապարակման համար, չկարողացան ցանկալի տպաւորութիւն թողնել Եւրոպայի հասարակական կարծիքի վրայ եւ չկանգնեցրին մեղադրանքների եւ մերկացումների տարափը, եւ վերջին օրերս Բ. դուռը ստիպուած եղաւ արգելել օտարերկրեայ գրեթէ բոլոր լրագրերի մուտքը Թուրքիա»:[8]

Ապտուլ Համիտի վարչակարգի հայահալած քաղաքականութեան դէմ ուղղուած ժողովրդական յուզումները լայն թափ ստացան յատկապէս Սասունում: Հայ ժողովուրդը սկսեց բուռն պայքար մղել թօթափելու թուրքական ծանր լուծը: 1890-ական թուականներից սկսած սասունցիները ինքնապաշտպանական կռիւներ մղեցին թուրք բռնակալների դէմ եւ չեչտակի հակագրոհներով ետ շպրտեցին թուրքական յարձակումները: Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինութեան դէմ չկարողացան մինչեւ վերջ դիմակայել եւ ազատագրական պայքարը հասցնել իր յաղթական աւարտին:

1894 թ. Օգոստոսին թուրքական բանակը ծաւալուն յարձակում է նախաձեռնում Սասունի վրայ: Տեղի ունեցաւ մի սարսափելի ջարդ, որին զոհ գնացին հայ տղամարդիկ, կանայք ու երեխաներ: Այն կատարել էին «Համիտիէ» քրտական զօրախմբերը եւ թուրքական կանոնաւոր բանակի զինուորները: Քեամիլ փաշայի յուշերում եւս պարզ կերպով նշւում է, որ ջարդը տեղի է ունեցել Ապտուլ Համիտի հրամանով, եւ այն իրագործել է Պիթլիսի 4-րդ բանակի հրամանատարութիւնը, Մուշիր Զէքի փաշայի գլխաւորութեամբ:

Սասունում եւ յարակից հայաբնակ նահանգներում, ինչպէս նաեւ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածները մեծ յուզում առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Բողոքների ճնշման ներքոյ, ի վերջոյ սուլթանական կառավարութիւնը համաձայնեց յանձնաժողով ուղարկել Սասուն՝ հանգամանքները ուսումնասիրելու համար: Սակայն այդ յանձնաժողովի հետաքննութիւններն առանձնապէս արդիւնք չտուեցին, քանի որ Ապտուլ Համիտը վաղօրօք յանձնարարել էր առանց քննութեան արդարացնել տեղական իշխանութիւններին եւ մեղադրանքը բարդել հայ գիւղացիութեան վրայ: Միւս կողմից մեծ տէրութիւնները, սեփական շահերից ելնելով, իրենց ներկայացուցիչներին հրահանգել էին չսրել յարաբերութիւնները Թուրքական յանձնախմբի հետ:

1895 թ. Հոկտեմբերին Ապտուլ Համիտը ձեւականօրէն համաձայնուեց

ստորագրել բարենորոգումների ծրագիրը, նրա մէջ մտցնելով այնպիսի փոփոխութիւններ, որոնք տեղ էին թողնում թուրքական բռնութիւնների համար: Օսման Նուրին իրաւամբ նշում է, որ «բարենորոգումների իրականացման մասին Ապտուլ Համիտի խոստումները կեղծ էին. «բարենորոգում» բառը վրդովեցնում էր նրան եւ գրգռում նրա ոճրային բնազդները»:[9]

Ցիշեալ բարենորոգումների իրականացման հարցում տարակուսանք է յայտնում նաեւ Քեամիլ փաշան: «Ընթերցելու ընթացքում ես նկատել էի,- գրում է նա,- որ այդ յօդուածները հազիւ թէ գործադրուէին կեանքում, քանի որ քրտերի զինաթափումը եւ քրիստոնեայ պաշտօնեաների նշանակումը ծանր էր նստելու քրտերի վրայ: Այնուամենայնիւ, քանի որ տուեալ որոշումը հաստատուել էր կայսերական հրամանով, ես ստիպուած ստորագրել էի այն, մատնանշելով նաեւ, որ տուեալ յօդուածների կիրառումը կապուած է դժուարութիւնների հետ»:[10]

Ժամանակակից թուրք պատմաբանները ժխտում են Սասունի հայութեան 1894 թ. կոտորածների փաստը: Բայց ահա թէ ինչ էր գրում յիշեալ Օսման Նուրին. «Անատոլիայից (իմա՝ Արեւմտեան Հայաստան - Ա.Փ.) հասած տեղեկութիւնները չափազանց աղէտալի էին: Ջարդը շարունակւում էր սոսկալի չափերով: Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնների տուած հրամաններով քրտերը յարձակուել էին գիւղերի վրայ, բայց ետ էին մղուել, որից յետոյ զինուորական ուժեր ուղարկելու անհրաժեշտութիւն էր առաջացել: Այդ ժամանակ զինուորները այրել էին գիւղերը եւ կոտորել բազմաթիւ մարդկանց»:[11]

Այդ դէպքերի մասին որոշ իմաստով հետաքրքիր տեղեկութիւններ կան նաեւ հայութեան հանդէպ վրէժխնդրութեամբ լցուած Քեամիլ փաշայի յուշագրութիւններում: «Լոնտոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացուել են իրենց ապստամբութեան համար,- գրում է Քեամիլ փաշան,- իսկ Օսմանեան կայսրութեան պաշտօնեաները ենթարկուել են խիստ պարսաւանքի: Հայերի ապստամբութիւնը գնահատուել է վատ կառավարման եւ յատկապէս կրօնական խտրականութեան հետեւանքով կառավարութեան կողմից հայերի հանդէպ ցուցադրուած դաժանութեան արդիւնք: Հասարակութեան կարծիքը մեր դէմ այն աստիճան էր բռնկուել, որ անգլիական կառավարութիւնը մտքերը հանդարտեցնելու համար, առանց սպասելու տեղերում հետաքննութիւն կատարող յանձնաժողովի զեկոյցներին, իր դաշնակիցների՝ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հետ նպատակադրուել էր Պերլինի պայմանագրով պահանջել Օսմանեան կայսրութեան ստանձնած բարեփոխութիւնների գործադրումը... Այսօր (Նոյեմբեր 3, 1895 թ.) մօտս եկած Գերմանիայի դեսպանը, ակնարկելով Անատոլիայում տեղի ունեցած խռովութիւնները, նշեց դրանք վերացնելու անհրաժեշտութեան մասին: Նա ասաց նաեւ, որ ինքը չի կասկածում խռովութիւնները կանխելու Օսմանեան կայսրութեան ունեցած կարողութեան վրայ: Նրանից յետոյ ինձ այցելութեան եկած Աւստրիայի դեսպանը այդ խռովութիւնների կապակցութեամբ նշեց, որ քրիստոնեաների վիճակը

զանազան վիլայէթներում երբեք էլ այնպէս չէ, ինչպէս ցոյց է տրուել վալիների եւ մութասարիֆների կողմից Բարձրագոյն դրանը ներկայացուած զեկուցագրերում: Նա յայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում հիւպատոսարաններից դեսպանատները ուղարկուած զեկուցագրերի ընթերցումներից պարզուել է, որ քրտերի կողմից կոտորուել են հազարաւոր հայեր, առանց խտրականութեան: Տիարպէքիրում կատարուած քրիստոնեաների սպանութիւնները, կողոպուտն ու բռնութիւնները, ինչպէս նաեւ Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նման խժդժութիւնները տուեալ դարում չտեսնուած իրադարձութիւններ են: Նա աւելացրեց նաեւ, որ միայն Զէյթունում կայսրութեան զօրքերի յարձակման հետեւանքով զոհուած հայերի թիւը հասել է 4500-ի»:[12] Տեղի ունեցած այս կոտորածներից յետոյ իբր թէ «խղճահարուած» Ապտուլ Համիտը, իր մօտ կանչելով Քեամիլ փաշային, բացականչել է՝ «Ես ասել էի խփէ՛ք, այլ ոչ թէ կոտորէք»:[13]

Տուեալ ժամանակուայ մի այլ մեծ վէզիր Սայիդ փաշան իր յուշերում մանրամասն նկարագրում է 1895 թ. Սեպտեմբերին Կ. Պոլսում տեղի ունեցած հայկական ցոյցի (Պապը Ալիի) մանրամասնութիւնները եւ այդ ցոյցի հետ կապուած հայ-թուրքական բախումները: Ցոյցը խաղաղ բնոյթ էր կրում: Այն կազմակերպուած էր Հնչակեան Կուսակցութեան կողմից, հայկական բարենորոգումների խնդրում եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը գրաւելու նպատակով: Սայիտ փաշայի յուշերից պարզւում է, որ կառավարութիւնը նախօրօք իրազեկ էր այդ ցոյցի մասին եւ ուշի-ուշով միջոցառումներ էր ձեռնարկել այն խափանելու համար: Միանգամայն ակնյայտ է նաեւ, որ Սայիտ փաշան ձգտել է, որպէսզի զինուորական միջամտութիւն կատարուի հաւանական բախումները կանխելու համար: Հակառակ դրան, սուլթան Ապտուլ Համիտը եւ ռազմական մինիստրութիւնը միտումնաւոր ձգձգել են այն, որպէսզի զինուած թուրք ամբոխը հաշուեյարդար տեսնի հայերի հետ:

Սայիտ փաշայի յուշերից երեւում է նաեւ, որ Ապտուլ Համիտը բացայայտօրէն զօրք դուրս չի բերել տուեալ ցոյցը խափանելու համար, քանի որ «նրանց (հայերի-Ա.Փ.) հանդէպ զինուորական ազդու գործողութիւնը կարող էր քաղաքական դժուարութիւնների առաջ կանգնեցնել»:[14] Նա ամէն կերպ ձգտել է «բոլորովին առիթ չտալ, որ խնդիրը եւրոպական հարց դառնալու ձեւը ընդունի»:[15]

Փաստերը ցոյց են տալիս, որ Ապտուլ Համիտը մի նոր հայկական ջարդ կազմակերպելու իր նենգ ծրագիրը գործադրել է հետեւեալ կերպ: Գաղտնի գինել է սոֆթաներին (կրօնական ուսումնարանի սաներին), ինչպէս նաեւ մահմետական խուժանին եւ նրանց ուղարկել փողոց՝ հայերի վրայ: Պարզւում է, որ այդ խուժանի մէջ եղել են նաեւ ծպտեալ զինուորներ: Այդ է վկայում Սայիտ փաշայի հետեւեալ խօսքը. «Նոյնիսկ բռնացողների թուում եղել են զինուորներ եւ ուսանողներ»:[16]

Դէպքերին ականատես թուրք գործիչներ Օսման Նուրին եւ Սաղըկ Շահիդ պէյը իրենց գրուածքներում, անդրադառնալով 1894-1896 թթ. արեւմտահայութեան նկատմամբ կատարուած հալածանքներին ու

կոտորածներին, բերուած բոլոր պատճառաբանութիւններով հանդերձ չեն կարողանում թաքցնել ճշմարտութիւնը: «Այս ջարդը բոլոր պարագաներում,- գրում է Օսման Նուրին,- մի ահարկու եղեռն էր մարդկութեան դէմ: Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նոյն Ապտուլ Համիտ երկրորդն էր, որը ղեկավարում էր Եըլտըզի այս հրոսակախումբը եւ կոտորում էր ոչ միայն հայերին, այլեւ դէպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»:[17] Սաղըկ Շահիտը նշում էր. «Հայերի վերջին կոտորածը նախապէս մտածուած էր, ծրագրուած եւ կարգադրուած էր սուլթանի կողմից»:[18]

Ուշադրութեան արժանի են նաեւ երիտթուրքերի պարագլուխներից Ջեմալ փաշայի տեսակէտները այս հարցի վերաբերեալ: Իր յուշերում բերուած «Հայկական հարցը» վերնագիրը կրող պատմական ակնարկում, Ջեմալ փաշան հակաճառելով ռուս յայտնի դիւանագէտ, իրաւաբան եւ պատմաբան Ա.Ն. Մանդելշտամին, աշխատում է ամէն կերպ ցոյց տալ, որ հայերը Օսմանեան կայսրութեան շրջանակներում տեւապէս ապրել են խաղաղ եւ լաւագոյն պայմաններում, վայելել ընդարձակ արտօնութիւններ: Այս կապակցութեամբ նա բաւականին ուռճացրել է 1863 թ. հայերին շնորհուած «Ազգային սահմանադրութեան» նշանակութիւնը եւ վերջապէս ամէն կերպ ջանք է թափել մեղմացնելու երիտթուրքերի յանցագործութիւնը հայերին տարագրելու եւ բնաջնջելու հարցում:

«Քրտերի ստրկացուցիչ լուծի փոխարէն նրանք (հայերը- Ա.Փ.) հնարաւորութիւն ստացան լաւագոյն յարաբերութիւնների մէջ ապրել թուրքերի եւ թուրքական կառավարութեան հետ... Օսմանեան կառավարութիւնը, առանց դրսի որեւէ ճնշման, սահմանադրութիւն շնորհեց հայերին... Այդ իրադարձութիւնը պէտք էր, որ սկիզբ համարուէր մի նոր երջանիկ ժամանակաշրջանի: Մինչդեռ, ռուսերը հայկական գործերի մէջ խառնուելու համար օգտագործեցին այդ սահմանադրութիւնը: Հայ պատրիարք Ներսէս Էֆէնտին, որը Սան-Ստեֆանո գնաց հայերի անկախութեան հարցում խնդրելու ցարի հովանաւորութիւնը, միակ պատասխանատուն կարող է համարուել նրա համար, որ հայերը վերջնականապէս զրկուեցին «հաւատարիմ ազգի (Միլլէթ-ի սատըքա) իրենց անուանումից»:[19]

Անհրաժեշտ է նշել, որ Ներսէս Պատրիարքը ճարահատեալ Սան-Ստեֆանո էր մեկնել ոչ թէ անկախութիւն հայցելու, այլ ինչ որ չափով վերջ տալու հայերի հանդէպ գործադրուող ճնշումներին, հարստահարութեանը եւ խտրականութեանը: Արեւմտահայերը տասնամեակներ շարունակ դիմել են սուլթանական կառավարութեանը եւ աղերսել՝ թեթեւացնելու իրենց վիճակը, բայց դիմումներն ու աղերսանքը որեւէ արդիւնք չեն տուել: Գոյքի յափշտակումը, պատուի ու սրբութիւնների ամենաբիրտ ոտնահարումները, կրօնաբարոյական անարգանքը, կոտորածի սարսափը հայ բնակչութեանը հասցրել էին ծայր աստիճան յուսահատութեան: Ցատկանշական է, որ Թանզիմաթի շրջանի՝ սուլթանական կառավարութեան ազգային փոքրամասնութիւններին վերաբերող միջոցառումներից ոչ մէկը չէր կիրառւում կեանքում: Հայը

երբեք չէր կարող իր դէմ կատարուած չարաշահումների համար բողոքել կառավարութեանը, քանի որ յանցագործութեան առկայութիւնը փաստելու համար նրան հարկաւոր էր երկու մահմեդականի վկայութիւնը: Թուրքերի կիրառած դաժանութիւնը պատահական չէր, այլ՝ բնայատուկ եւ տեւական: Նրանց իրաւական սիստեմն իր էութեամբ ծայր աստիճան անարդար էր քրիստոնեայ հպատակների հանդէպ: Մահմեդականը կարող էր առեւանգել, թալանել, սպանել քրիստոնեային եւ ապահովաբար մնալ անպատիժ:

Ինչ վերաբերում է «Հայոց ազգային սահմանադրութեանը», բնական է, որ այդ մասին շատ է խօսուել թէ՛ իր ժամանակին եւ թէ՛ յետագայում հայ պատմաբանների երկերում: Հակառակ Ճեմալ փաշայի պնդումներին, «ազգային սահմանադրութիւնը» էական փոփոխութիւններ չմտցրեց գոյութիւն ունեցող հարկերի անարդար գանձման, կրօնական խտրականութեան, ազգային ճնշման եւ ընդհանրապէս թուրքերի եւ քրտերի կողմից գործադրուող զանազան բռնութիւնների վերացման խնդրում:

«Հայկական հարցը,– շարունակում է Ճեմալ փաշան,– առաւել սրուեց 1894 եւ 1896 թթ., այն ժամանակ, երբ ամենուրեք ապստամբութիւններ սկսուեցին հայկական նահանգներում: Հայկական խռովութիւններն այն աստիճան թշնամանք սերմանեցին մահմեդականների եւ քրիստոնեաների միջեւ, որ 6 դարերի ընթացքում կողք-կողքի, խաղաղ ու համերաշխ ապրելով հանդերձ, սկսեցին յարձակուել իրար վրայ եւ իրենց արիւնով ներկել Անատոլիայի խաղաղ հովիտները եւ նոյնիսկ Կ. Պոլսի փողոցները... Այդ տարիների արիւնալի դէպքերի ժամանակ թուրքերը անբարեացակամ վերաբերմունք չունեցան հայերի հանդէպ: Ամենուրեք թուրքերը ձգտում էին հովանաւորել հայերին...»:[20]

Ճեմալ փաշայի այս խօսքերը չեն համապատասխանում իրականութեանը: Ճշմարտութիւնն այն է, որ հայկական հարցը, երբ Պերլինի վեհաժողովում դարձաւ միջազգային դիւանագիտութեան հարց, հայ ժողովրդի վիճակը առաւել վատթարացաւ: Սուլթանական կառավարութիւնն սկսեց իրագործել հայաշատ նահանգներում հայկական տարրը նօսրացնելու իր նենգ քաղաքականութիւնը: Ապտուլ Համիտն սկսեց իրագործել Արեւմտեան Հայաստանն իր վաղեմի եւ իսկական բնակչութիւնից դատարկելու յանցագործ ծրագիրը:

Հայերը ենթարկուեցին դաժան հալածանքների եւ ֆիզիքական ոչնչացման: «Կայսրութիւնը կառավարելու իմ տեսանկիւնից ելնելով,– շարունակում է Ճեմալ փաշան,– ես միշտ դատապարտել եմ ժողովրդական զանգուածները կոտորելու միջոցով յեղափոխութիւնը ճնշելու ձեւը: Այսպիսի սիստեմը անուղղելի վնաս է հասցնում պետութեանը եւ նրա պատմութեան էջերում թողնում է արիւնալի հետքեր»:[21]

Այնուհետեւ Ճեմալ փաշան նշում է, որ ինքը եւ երիտթուրքերը խստագոյն կերպով դատապարտում էին 1894–1896 թթ. իրադարձութիւնները, այն համարելով Ապտուլ Համիտի կառավարութեան քաղաքական ամենամեծ սխալը, որ այդ քաղաքականութիւնը վնաս էր պատճառում ոչ միայն Թուրքիային, այլեւ ամբողջ իսլամին:[22] Ճեմալը եւ

երիտթուրքերի միւս պարագլուխներն աշխատում էին ոչ թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ սահմանադրութեան վերահաստատումով կը վերանայ ազգային խտրականութիւնը եւ բոլոր հպատակները հաւասար կը լինեն օրէնքի առջեւ: Սակայն 1908 թ. իշխանութեան գլուխ անցնելուց յետոյ, երիտթուրքերը ոչ միայն մոռացան իրենց մինչ այդ տուած խոստումները, այլեւ դարձան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բացայայտ թշնամիներ: Նրանք ամբողջապէս որդեգրեցին Ապտուլ Համիտի արիւնարբու քաղաքականութիւնը, նոյնիսկ իրենց դաժանութեամբ գերազանցելով նրան: Ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին ազգերը ոչնչացնելու ճանապարհը:

Իր ժամանակին երիտթուրքական յայտնի գործիչ Ճելալ Նուրին անդրադառնալով Ապտուլ Համիտեան բռնութիւններին գրել է.

«Ապտուլ Համիտի սուլթանութեան շրջանը անկասկած հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական շրջաններից մէկն է, քանի որ հայերը այդ ժամանակահատուածում բաւականաչափ զոհեր տուին. եւ մենք թուրքերս բռնակալ վեհապետի հրահանգով կատարուած այդ բոլոր ոճրագործութիւնների համար տեւապէս ցաւ ենք զգում...»: (Տե՛ս Ճելալ Նուրիի "Cauchemar" (Մղձաւանջ) գրքի հայերէն թարգմանութեան առաջաբանը:

* * *

1966 թ. առաջին անգամ լինելով ռուսերէն լոյս տեսաւ ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում»[23] փաստագրական նիւթերի եւ վաւերագրերի ժողովածուն, որտեղ ընդգրկուած են Ռուսաստանի եւ եւրոպական տէրութիւնների դեսպանների եւ հիւպատոսների զեկոյցներն ու դիւանագիտական այլ փաստաթղթեր, Կ. Պոլսի հայ պատրիարքութեան ուղերձները (թաքրիր) ուղղուած սուլթանին եւ մեծ պետութիւնների ղեկավարներին, ինչպէս նաեւ դէպքերի ականատեսների ու ժամանակակիցների նամակներն ու բողոքագրերը: Խիստ կարեւոր նիւթեր է պարունակում նաեւ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան կողմից հրատարակուած «Դեղին Գիրքը»:[24]

Ուսումնասիրելով Թուրքիայում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայերի բնաջնջման վերաբերող այդ արխիւային նիւթերը, լիովին բացայայտուում է, որ 1878 թ. Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը դարձաւ միջազգային բնոյթի եւ մեծ պետութիւնների դիւանագիտութեան շահարկման առարկայ, Օսմանեան կայսրութեան քաղաքականութիւնը հայերի հանդէպ չեշտակի փոխուեց: Եւ որպէսզի մի երկրորդ Պուլկարիա չստեղծուի Թուրքիայի արեւելեան հայկական նահանգներում, ծրագրւում է բարբարոսային դաժան եւ իր նախադէպը չունեցող ջարդերի միջոցով ոչնչացնել հայ ժողովրդին եւ դրանով մէկընդմիշտ ասպարէզից վերացնել հայկական հարցը: Այս կապակցութեամբ

Վանի ռուսական փոխ հիւպատոսը 1882 թ. Մարտի 14-ին, Կ. Պոլսի դեսպան Նովիկովին զեկուցել է հետեւեալը.

«Ըստ որում առաւել բարձրաստիճան կառավարական պաշտօնեաները բացէիբաց արտայայտւում են, թէ իբր այստեղ երկրորդ Պուլկարիա է պատրաստւում եւ որ իրենք, փորձից դաս առած, կը կարողանան խեղդել իրենց կառավարութեանը վնասակար տարրին եւ, այդպիսով, «հայկական հարցին» վերջ կը տան մէկընդմիշտ»:[25]

Բնականաբար, տուեալ ժամանակ հայերը կռահում եւ զգում էին իրենց սպառնացող վտանգը: Եւ ի զուր չէ, որ Եւրոպայի հայ հայրենակիցների կոմիտէն 1885 թ. Հոկտեմբերի 27-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին ուղղուած նամակում յայտնում էր, որ Պեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ընդունումից ի վեր Թուրքական կառավարութիւնը իր ջանքերը գաղտնի ուղղում է հայ ազգին իր հայրենիքում ոչնչացնելու ծրագրին:[26]

Իրօք որ վերոյիշեալ արխիւային նիւթերը ցոյց են տալիս, որ հայերի բնաջնջման խնդրում կատարուող բարբարոսային կոտորածներից բացի Ապտուլ Համիտը սիստեմատիկաբար կիրառել է նաեւ հետեւեալ նենգ ու դաժան գործօնները, որոնք պիտի նպաստէին հայերի բնաջնջման Օսմանեան կայսրութիւնում. բռնի մահմետականացում, կրօնական սրբապղծութիւն, հայապատկան հողերի եւ ունեցուածքի կողոպուտ, ծանր հարկային քաղաքականութիւն, ստիպողական արտագաղթ. անտեղի ձերբակալութիւններ, բանտ եւ աքսոր. միտումնաւոր վարչական փոփոխութիւններ կատարելու միջոցներով հայերի թուաքանակը նուազեցնելու քաղաքականութիւն: Երկրի երեսից ջնջել հայաբնակ գիւղերն ու աւանները, վանքերն ու եկեղեցիները, փոփոխել հայկական բնակավայրերի անուանումները եւայլն:

Ինչպէս նախորդ գլխում նշեցինք, թուրքական իշխանութիւնների եւ հոգեւորականութեան համար կարեւոր գործօններից մէկն էր համարւում նաեւ քրիստոնեաների անհատաբար եւ զանգուածային մահմետականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամէն տեսակի բռնութիւններ: Այս երեւոյթը բուռն թափ ստացաւ 1894-96 թթ. հայերի հալածանքների ու կոտորածների ընթացքում եւ շարունակուեցին յետագայ տարիներին եւս: Այսպէս, բանտերում խոշտանգումներից յետոյ դժբախտ կալանաւորներին առաջարկում էին կրօնափոխ լինել՝ փոխարէնը խոստանում էին վերջ տալ չարչարանքներին եւ ազատ արձակել: Վերոյիշեալ արխիւային նիւթերում նշուած է, որ «կենդանի մնացած բնակիչները ամբողջ գիւղերով ստիպուած էին լինում մուսուլմանութիւն ընդունել, եւ միայն այդ գնով կարող էին պահպանել իրենց կեանքը, ինչպէս օրինակ՝ Էկինի (Ակն) 14 գիւղերի բնակիչները, ամբողջ գիւղեր Վանում, Սղերդում, Պիթլիսում, Ախթամարում: Արաբկիրում հայ բնակչութիւնը մի շատ բարձր պաշտօնեայից առաջարկութիւն է ստանում մուսուլմանութիւն ընդունել եւ դրանով անվտանգութիւն ձեռք բերել: Հայերը մերժմամբ պատասխանում եւ դրա յաջորդ օրը ենթարկւում են կոտորածի: Կրօնափոխ լինելուց հրաժարուողներին անյապաղ սպաննում էին, յաճախ՝ խոշտանգումներով: Խարբերդում հայ 40 երեւելի անձանց, որոնք ապաստանել էին եկեղեցում, չէյխն առաջարկում է մուսուլմանութիւն ընդունել, եւ երբ նրանք հրաժարւում են, հրամայում է, որ նրանց մէկը միւսի յետեւից մորթեն եկեղեցու շէմքին...»:[27]

1895 թ. Դեկտեմբերի 4-ի Կ. Պոլսի պատրիարքի կողմից կառավարութեան ուղղուած ուղերձում յայտնւում է, որ «Պիթլիսի մարզի Խորխոս գիւղում 3 քահանաների ստիպել են մահմետականութիւն ընդունել: Զոռով չալմա են հագցրել գլուխներին եւ մօտ 800 ընտանիքների, որոնք կենդանի էին մնացել կոտորածներից յետոյ, ստիպել են մահմետականութիւն ընդունել»[28]: Իսկ «կոտորածը Վանի վիլայէթում» տեղեկագրութեան մէջ խօսւում է այն մասին, որ «կոտորածի ժամանակ Խիզանի, Սպարկերտի, Կարկարի, Մամրտանի իսլամ ընդունած բնակիչները արդէն 8 ամիս է չարչարւում են, որ նորից քրիստոնէութիւն ընդունեն, բայց կառավարութիւնը ձգձգում է: Վանի վիլայէթում մահմետականացուածների թիւը հասնում է 30,000-ի»:[29]

Մի խօսքով արխիւային նիւթերում կան բազմաթիւ փաստեր Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում տեղի ունեցած բռնի մահմետականացման մասին: Այս երեւոյթը աւելի սուր բնոյթ ընդունեց յատկապէս 1915-1916 թթ. կոտորածների ընթացքում:

Արեւմտահայերի հարկերի գանձման ծանր վիճակի մասին բաւականին ճշգրիտ տեղեկութիւններ է տուել դէպքերի ժամանակակից իտալնատցի լրագրող, գիտնական Էմիլ Տիլոնը (1854-1933) իր «գործերի վիճակը Թուրքահայաստանում» յօդուածում: Նա 1895 թ. որպէս անգլիական «Daily Telegraph» թերթի թղթակից եղել է Թուրքիայում: Թուրքերի հետ համեմատած հայերի հարկային ծանրաբեռնուածութեան մասին, նա տուել է հետեւեալ համեմատութիւնը.

«Հայերից հաւաքուող հարկերը չափազանց մեծ են: Կաշառքները, որոնցով միշտ ուղեկցում են գանձումները, վերցնում են գափթիէները եւ կարող են հասնել աներեւակայելի չափերի՝ ընդունելով ամենազզրելի ձեւեր»: «Էրզրումում, որտեղ գոյութիւն ունի 8000 մուսուլմանական տնտեսութիւն, մուսուլմանները վճարում են 395000 ղուրուշ, մինչդեռ քրիստոնեաները, որոնք տնտեսութիւնների թուով հաշււում են սոսկ 2000, մուծում են 430,000 ղուռուշ»:[30]

Հարկային ծանր գանձումների, կողոպուտի, կաշառքի, եկեղեցիների եւ վանքերի սրբապղծման եւ աւերման, մարդկային տարրական իրաւունքների ոտնահարման նկարագրութիւնը հայաբնակ նահանգներում տրուած է նաեւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մատթէոս Իզմիրլեանի կողմից 1895 թ. Փետրուարի 8-ին Թուրքիայի Արդարադատութեան եւ պաշտամունքների մինիստր Ռըզա փաշային ուղղուած ուղերձում, որտեղ մասնաւորապէս ասուած է. «Հարկերը հաւաքելու համար պետութիւնն 80-ական հեծեալ ոստիկաններ է ուղարկում այնպիսի գիւղեր, որոնք 30 ծխից աւելի չունեն եւ գիւղացիներն ստիպուած են կացարան եւ սնունդ տրամադրել մարդկանց ու ձիերին: Հարկահաւաքները փայտերով ծեծում

են գիւղացիներին ու ծխական քահանաներին, անարգում են քրիստոնէական կրօնը եւ պաշտամունքի առարկաները: Նրանք խլում տանում են երկրագործական գործիքները, վերջին իսկ հագուստն են պոկում նրանցից ովքեր չեն կարող հարկը տեղնուտեղը վճարել: Իսկ նրանց, ովքեր բնաւ, ոչինչ չեն ունենում, բանտ են նետում: ...Գիւղացիները, կայսերական գանձարանին վճարուող հարկերից բացի, պարտաւոր են նաեւ քիւրտ աւատապետերին վճարել մի հարկ, որը յայտնի է քեաֆիրատ (անհաւատների հարկ) անուանումով»:[31]

Մի խօսքով տանջահար եւ ահաբեկուած հայ գիւղացիները այս անելանելի վիճակից ազատուելու համար գերադասում են արտագաղթել, բայց արտագաղթն էլ անվտանգ չի եղել: Էրզրումի ռուսական գլխաւոր հիւպատոս Սկրյապինը 1906 թ. Յուլիսի 21-ին Կ. Պոլսի դեսպան Զինովեւին յայտնել է, «որ Յուլիսի սկզբին Ղարաքիլիսայի մօտ թուրքական սահմանային պահազօրը բռնել է Մուշի սանջակից փախած 11 հայ ընտանիքների, որոնք փորձել են անցնել Ռուսաստան: Բռնուելիս բոլոր տղամարդիկ, թուով 16 հոգի, գազանաբար մորթուել են զինուորների ձեռքով: Կանայք ու երեխաները ուղարկուել են Հասան-Քալէ քաղաքի բանտ»:[32]

Ինչպէս նշեցինք, Արեւմտեան Հայաստանը հայաթափ անելու միջոցներից մէկն էլ եղել է բռնի արտագաղթի հետեւողական քաղաքականութեան իրականացումը թուրքական կառավարութեան կողմից: Այս երեւոյթը տեղի է ունեցել ոչ միայն կոտորածի օրերին, այլեւ յետագայ քիչ թէ շատ խաղաղ տարիներին, այն նենգ նպատակով, որպէսզի հայութիւնը իսպառ չքանայ իր հայրենիքից:

Բանտային տանջանքների եւ ամէնօրեայ հալածանքների սպառնալիքի ազդեցութեան տակ հայերը ստիպուած լքել են իրենց բնակավայրերը եւ հեռացել դէպի Ռուսաստան եւ այլ օտար երկրներ: Այս մասին եւս փաստերը շատ են: Բերենք առկայ դիւանագիտական զեկոյցներից մի քանի ապացոյցներ:

1901 թ. Սեպտեմբերի 12-ին Սասունի ռուսական փոխհիւպատոս Ճիուտիչին Կ. Պոլսի դեսպան Զինովեւին հաղորդում է հետեւեալը.

«Վերջին 10 տարում այս սանջակից հայ շատ գիւղացիներ են դուրս եկել սահմանից եւ այլեւս չեն վերադարձել: Նրանց մեծ մասը մեր կողմն են անցել եւ բնակութիւն հաստատել կովկասեան ծովափին: 1890 թ. ամբողջ սանջակում 22,000-ից աւելի հայ է եղել. մինչդեռ այժմ նրանք ընդամէնը 12,000 են»:

Իսկ իր հերթին, Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովեւը վերոյիշեալ եւ այլ փաստերի հիման վրայ, իր պաշտօնավարութեան ընթացքում շարունակաբար կրկնուող այս երեւոյթի մասին 1907 թ. Օգոստոսի 15-ին արտաքին գործերի մինիստր Իզվոլսկուն յայտնում է հետեւեալը.

«Սասունի սանջակի թուրքական իշխանութիւնները տեղացի հայերին դաժան հալածանքների են ենթարկում, որոնց պատճառով վերջիններս զանգուածաբար արտագաղթում են: Վերջին 3 ամսուայ մէջ, ինչպէս հաղորդել է Պր. Ճիուտիչին, 1500-ից աւելի թուրքահայեր, Կովկասում

ապրող իրենց ազգականների կողմից վարձուած առագաստներով թաքուն լքել են Սասունի սանջակը եւ մեկնել են մեր սահմանները...: Սասունի հայերի դէմ յարուցուող հալածանքները,- եզրակացնելով գրում է Զինովեւը,- Հաւասարապէս պայմանաւորուած են բարձրագոյն դրան գաղտնի կարգադրութիւններով, նպատակ ունենալով փոքր Ասիան լիովին մաքրել հայերից, որոնց թուրքերը համարում են իրենց համար վտանգաւոր տարրեր»:[34] (Ընդգծումը մերն է,-Ա.Փ.):

Հարկ է նշել, որ այս նոյն հայահալած քաղաքականութիւնը կիրառւում էր նաեւ Էրզրումի, Վանի, Պիթլիսի եւ այլ հայահոծ վիլայէթներում: Եւ այն կատարւում էր թուրքական իշխանութիւնների կողմից նենգօրէն մտածուած եւ ծրագրուած ձեւերով: Այսպէս, յաճախ ամեն կարգի ճնշում գործադրելուց բացի լուրեր էին տարածում հայերին ջարդելու մասին, որպէսզի ահաբեկուած հայ բնակչութիւնը թողնի եւ հեռանայ իր բնակավայրերից: Էրզրումի սանջակի Դվնիկ գիւղի բնակչութիւնը 1907 թ. Փետրուարի 21-ին, Էրզրումի ռուսական գլխաւոր հիւպատոս Սկրյապինին ուղղուած նամակում թախանձագին յայտնում է.

«Մենք Կարինի սանջակի Դվնիկ գիւղի բնակիչներս, դիմում ենք Ձեզ, խնդրելով, որ մեզ ռուսական մեծ պետութեան հպատակութեան տակ առնէք: Մեր գիւղի ամբողջ քրիստոնեայ բնակչութիւնը ձգտում է ապաստան ու հովանաւորութիւն գտնել Ձեր բարեացակամ ու հզօր կառավարութեան մօտ, որպէսզի կարողանայ հանգիստ կեանք ապահովել իր համար»:[35]

Էրզրումի մօտ գտնուող Գարմասան գիւղի բնակիչները նոյն ցանկութիւնը յայտնելով Սկրյապինին, 1907 թ. Ապրիլի 1-ին, նրան ուղղուած նամակում տեղեկացնում են, որ «միանգամայն չհիմնաւորուած պատրուակներով մեզ ենթարկում են կեղեքման ու հալածանքների: Մեր ընտանիքները ստրկական դրութեան մէջ են, մեր խեղճութիւնն ու անպաշտպանութիւնը հանրայայտ են: Եւ այս բոլորն արւում է աշխարհի երեսից մեզ ջնջելու համար»:[36] (Ընդգծումը մերն է,- Ա.Փ.):

Թուրքական կառավարութիւնը յաճախ բռնի տեղահանութիւններ է կատարել հէնց երկրի ներսում, յատկապէս լեռնաբնակ վայրերից դէպի դաշտային շրջանները: Օրինակ, այդպիսի բռնի տեղահանութեան է ենթարկուել Սասունի գիւղերի բնակչութիւնը դէպի Մշոյ դաշտ, որպէսզի զրկուեն իրենց պաշտպանելու հնարաւորութիւնից: Իսկ հայաթափ եղած գիւղերում եւ քաղաքներում թուրքական իշխանութիւնները բնակեցնում էին այլ վայրերից տեղափոխուած թուրք, քիւրտ եւ այլ մահմետական գաղթականներին: Որպէսզի պատկերացումը կատարեալ լինի այս կապակցութեամբ ամբողջութեամբ բերում ենք Պէյրութի ռուսական հիւպատոս Կ. Լիչինի 1898 թ. Սեպտեմբերի 12-ին Կ. Պոլսի դեսպանին ուղղուած հետեւեալ զեկուցագիրը.

«Վերջին ժամանակներս այստեղ լուրեր են տարածւում մահմետականներին հաւաքագրելու մասին, որպէսզի բնակեցնեն Էրզրումի, Պիթլիսի եւ Վանի վիլայէթների ջարդից սպաննուած կամ փախած հայերին պատկանող հողերում... Չնայած տեղական թուրքական

իշխանութիւնների բացասական պնդումներին, ինձ թուում է, թէ դէպի Ռուսաստանին սահմանամերձ մարզերը մուսուլմաններին արուող տեղափոխման հրաւէրը իրօք գոյութիւն ունի: Այդ միջոցառումը կարծես թէ Կ. Պոլսից է հրահանգուած: Գաղթականներին մեծ արտօնութիւններ են խոստանում, տասը տարով ազատել զինուորական ծառայութիւնից, ձրի երթեւեկութիւն, ձրի հողաբաժին (հայկական, այսինքն՝ յարմար եւ համեմատաբար լաւ մշակուած հողերից) եւ դրամական նպաստ՝ ճանապարհի ու նոր տեղում բնակութեան առաջին 3 ամիսների համար, օրական 3 զուռուշ՝ տղամարդկանց, 2 զուռուշ՝ կանանց եւ 1 զուռուշ՝ երեխաներին: Ըստ լուրերի, Պէյրութում ապրող ազդեցիկ չէյխ Ապտուլռահման Նախասը հաւաքագրում է Հայաստան մեկնել ցանկացող մուսլիմանների: Մատնանշում են մի քանի անձանց, որոնք գրուել են գաղթականների ցուցակում»:[37]

Հայերին հարկադրաբար արտագաղթեցնելու թուրքական իշխանութիւնների այս քաղաքականութեան եւ յարատեւող տառապանքների մասին իր խորը մտահոգութիւնն ու ցաւումն է արտայայտել նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկը, Նիկոլայ Երկրորդ ցարին իր 1907 թ. յղած նամակում, որտեղ հիմնականում ասուած է.

«...Թուրքիոյ կառավարութիւնը, ոչ միայն ոչ մի միջոց չի ձեռնարկում ընդդէմ այդ ողբալի վիճակի, այլ՝ ընդհակառակը, մուհաջիր-գաղթականներին՝ այլ պետութիւններից եկած մուսուլմաններին բնակեցնելով հայկական գիւղերում, նա խորացնում է քրիստոնեայ բայայի վիճակի ծանրութիւնը:

...Շատերը կեանքները վտանգելով՝ ազատութիւն են փնտռում Ռուսաստան գաղթելու մէջ: ...Վերջին 10 տարուայ ընթացքում սպանուած, ձերբակալուած, աքսորուած, սովից մեռած, բռնի իսլամացած հայերի թիւը չի զիջում եւ նոյնիսկ գերազանցում է սարսափելի 1895-96 թթ. կոտորածների թուին...»:[38]

Միւս կողմից, վախի սպառնալիքի տակ դէպի Ռուսաստան արտագաղթած այն հայերը, որոնք որոշ հանգամանքների բերումով եթէ ուզենային էլ կրկին ետ վերադառնալ, բացարձակապէս զրկուած էին այդ հնարաւորութիւնից: Բանը նրանում է, որ նրանցից շատերը հարազատներ ունէին Թուրքիայում, մշակելի հողատարածութիւններ, ինչպէս նաեւ շարժական եւ անշարժ գոյք: Ինչպէս ցոյց են տալիս փաստերը կառավարութիւնը խստագոյն հրահանգ էր տուել բոլոր նահանգապետերին, որպէսզի սահմանն անցած հայերին ոչ մի դէպքում չթոյլատրեն ետ վերադառնալու:

Ինչպէս նշուեց վերեւում հայերին ահաբեկելու եւ միշտ սարսափի մէջ պահելու միջոցներից մէկն էլ անտեղի ձերբակալութիւններն էին եւ բանտերում չարչարանքի ենթարկելը: Այս խնդրում առաջին հերթին վառ ապացոյց կարող են հանդիսանալ տուժող կողմի հաղորդած վկայութիւնները: Այսպէս, Շապին-Գարահիսարի հայկական համայնքը 1894 թ. Նոյեմբերի 26-ին մի խնդրագիր է ներկայացնում Կերասունտի ռուսական

փոխհիւպատոսին, որտեղ ասուած է.

«Քաղաքի ու շրջակայքի բնակչութեան համատարած ձերբակալութեան փորձ է արուել: Ցանկարծակի խուզարկութիւններ, ձերբակալութիւններ. այս ամէնը հիմա մեզ մօտ ամէնօրեայ երեւոյթներ են դարձել...: Բանտարկեալներին զրկում էին սնունդից, մտրակածեծ անում, աքցաններով բզկտում մարմինները, խոշտանգում, խաչին գամում կամ եռման ջուր լցնում վրաները, խեղդում էին, բռնաբարում երիտասարդներին եւայլն: Ձերբակալութիւնների համար առիթ է ծառայել մեր կողմից օտարերկրեայ հիւպատոսներին արուած դիմումը, որի մէջ մենք նկարագրել էինք մեզ մօտ ստեղծուած տագնապալի վիճակը»:[39]

Բնականաբար այս հարցին անդրադարձել է նաեւ Էմիլ Տիլոնը: Նա, նկարագրելով Պիթլիսի բանտերում հայերի նկատմամբ կատարուած խոշտանգումները, արձանագրել է հետեւեալը. «Պիթլիսի վիլայէթում մի քանի հարիւր հայեր, որոնք դրամ եւ անասուն ու հաց են ունեցել, քմահաճ բանտարկութեան են ենթարկուել եւ խոշոր կաշառք տալով ազատուել: Նրանցից ոմանք ի վիճակի չեն եղել տեղնուտեղը վճարելու, ուստի նրանց պահել են մռայլ զնդանում այնքան ժամանակ, մինչեւ որ հայթայթել են պահանջուող գումարները, իսկ ոմանց էլ սպաննել: Մօտ 100 հայեր զոհուել են միայն Պիթլիսի բանտում»:[40]

Վերեւում նշեցինք, որ նման դէպքերում այդ դժբախտներին առաջարկում էին նաեւ մահմետական կրօնը ընդունել, խոստանալով դրա դիմաց վերջ տալ տանջանքներին: Իսկ մի կերպ փրկագին տուող ազատուողն էլ, յետագայում ամէն կերպ աշխատում էր հեռանալ Թուրքիայից, որպէսզի մեկընդմիշտ խուսափի սովորական դարձած այդ բանտային կոտանքներից: Նման դիտումնաւոր ձերբակալութիւններ եւ չարչարանքներ տեղի էին ունենում ամենուր, որտեղ հայեր էին ապրում: Իսկ մեղադրելու, ամբաստանելու պատրուակ գտնելը շատ հեշտ էր: Այդպիսի դէպքերի մասին բազմաթիւ յիշատակումներ կան թէ հիւպատոսների զեկոյցներում եւ թէ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի ուղերձներում: Իսկ կառավարութեան նպատակը մէկն էր, այսպիսի միջոցներով ներգործել հայերի վրայ, որպէսզի ահաբեկուած հեռանան իրենց բնակավայրերից:

Արեւմտահայերի նկատմամբ կիրառուող այս գործօններից բացի կատարւում էր նաեւ հետեւեալը. հայ բնակչութեան իր բնակավայրում մեծամասնութիւն կազմելու հնարաւորութիւնից զրկելու համար, Բարձրագոյն դուռը դիտումնաւոր վարչական բաժանման փոփոխութիւններ էր կատարում: Այսպէս, հայ հոծ բնակչութիւն ունեցող վայրերը գաւառների (քայմաքամութեան) կամ գաւառակների (նահիէների) վերաբաժանելու ընթացքում, դրանք միացւում էին հարեւան՝ հիմնականում քրտերով կամ թուրքերով բնակեցուած վայրերի հետ:

Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում հայերի բնաջնջման վերոյիշեալ գործօնները նոյնութեամբ որդեգրեցին նաեւ 1908 իշխանութեան գլուխ եկած երիտթուրքական կառավարութիւնն ու «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխները: Իսկ Պեռլինի վեհաժողովի Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների իրագործման

վերաբերող 61-րդ յօդուածը դարձաւ մեծ պետութիւնների ձեռքին դիւանագիտական շահարկման առարկայ, որը ինչպէս տեսանք խիստ բացասական հետեւանք ունեցաւ արեւմտահայերի ճակատագրի համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devri Saltanati, Istanbul, 1327, s. 838 (արաբատառ):
2. Նոյն տեղում էջ 582:
3. Zuhuri Danisman, Osmanli Imparatorlugu tarihi, c. XIII, Sultan ikinci Abdul Hamid han, Istanbul, 1966, s. 146:
4. Նոյն տեղում էջ 145:
5. «Փորձ», ազգային եւ գրական միամսեայ «հանդէս, թիւ 7-8, Տփղիս, 1879, էջ 204-205:
6. Said pasanin hatirati, Istanbul, 1328, c. 2, s. 372 (արաբատառ):
7. Տե՛ս Belleten, 1955, No. 78, s. 227:

Իմիջիայլոց Քեամիլ փաշայի այս նենգ մտայղացումը գործադրուել է կեանքում: Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ թուրք պատմաբան Եավուզ Էրջանի 1993 թ. հրատարակած «Հայերը Դիմակազրկւում են» գրքոյկը: Այնտեղ ընդգրկուած է Զ. Պ. Նորմանի զեկոյցը (գրուած 1896 թ.), որի բովանդակութիւնը լրիւ համընկնում է Քեամիլ փաշայի այս դաւադիր ծրագրի հետ: Տուեալ «զեկուցման» մէջ Նորմանը ձգտում է Սասունում եւ այլուր տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւնների մեղքը բարդել հայ կուսակցութիւնների վրայ: Միտումնաւոր խեղաթիւրւում են իրական փաստերը, ֆօղարկւում են 1894-96 թթ. հայերի կոտորածները: Պաշտպանութեան տակ է վերցւում Ապտուլ Համիտի հայերի նկատմամբ դրսեւորած դաժան բաղաքականութիւնը: (Այս մասին մանրամասն տե՛ս մեր գրախօսականը Եավուզ Էրջանի խմբագրած եւ հրատարակած այդ գրքի մասին. «Նոր Օր» եռօրեայ, Ցունիս 8, 1994):

8. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 32-33:
9. Օսման Նուրի, նշ. աշխ., էջ 838:
10. Hatirat-i Sadr-i Esbak Kamil pasa, Kostantinya, 1329, s. 186:
11. Օսման Նուրի, նշ. աշխ., էջ 828, 858:
12. Քեամիլ փաշա, նշ. աշխ., էջ 181, 187:
13. Նոյն տեղում, էջ 180:
14. Said pasanin hatirati, Dersaadet, c.1, 1328, s. 309 (արաբատառ):
15. Նոյն տեղում, էջ 310:
16. Նոյն տեղում, էջ 300:
17. Օսման Նուրի, նշ. աշխ., էջ 866:
18. Sadik Shahid bey, Islam, Turkey and Armenia, and how they happened. Turkish Mysteries Unveilled, St. Louis, 1898, p. 207:
19. Behcet Cemal, Cemal pasa, Hatiralar, 1959, s. 338:
20. Զեմալ փաշա, նշ. աշխ., էջ 339:
21. Նոյն տեղում էջ 340:
22. Նոյն տեղում էջ 340:
23. Այն վերահրատարակուեց 1982 թ., իսկ հայերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ 1991 թ.: Տե՛ս «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում», փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմեցին՝ Մ.Գ. Ներսիսեան, Ռ.Գ. Սահակեան, Երեւան, Հայաստան հրատարակութիւն:

24. Livre Jaune, Documents diplomatiques. Affaires Armeniennes. Projets de reformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897.
25. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, էջ 17:
26. Նոյն տեղում, էջ 19:
27. Նոյն տեղում, էջ 189:
28. Նոյն տեղում, էջ 136:
29. Նոյն տեղում, էջ 156:
30. Նոյն տեղում, էջ 89-90:
31. Նոյն տեղում, էջ 73-74:
32. Նոյն տեղում, էջ 215:
33. Նոյն տեղում, էջ 203:
34. Նոյն տեղում, էջ 223:
35. Նոյն տեղում, էջ 217:
36. Նոյն տեղում, էջ 218:
37. Նոյն տեղում, էջ 198:
38. Նոյն տեղում, էջ 224-225:
39. Նոյն տեղում, էջ 68:
40. Նոյն տեղում, էջ 89:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ...

1908 թ. Յուլիսին Օսմանեան կայսրութիւնում Երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ հայ ժողովուրդը այն հաւատքն ունէր, որ սահմանադրութեան վերահաստատումով կ'ապահովուի մարդկային տարրական իրաւունքները, կեանքի, պատուի եւ ունեցուածքի անձեռնմխելիութիւնը:

Լաւատեսութեամբ ընդունելով սահմանադրութեան հռչակումը, շատերը միամտաբար կարծում էին, որ այն կեանքի կոչելով կրկին տէր կը դառնան Ապտուլ Համիտի ժամանակաշրջանում իրենցից բռնի խլուած հողերին, քանի որ իրենց ձեռքում գտնւում էին պաշտօնական կալուածագրերը: Մինչդեռ շատ շուտով պարզուեց, որ հակառակ հրապարակուած հրամանագրերին թուրք պաշտօնական անձիք բոլորովին անտարբեր էին մնում այդ բոլորի նկատմամբ:

Դժբախտաբար հայերի խանդավառութիւնը այդ ուղղութեամբ շատ կարճ տեւեց: Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած հայերի կոտորածը կրկին բացեց ժողովրդի սրտում խորացած Ապտուլ Համիտեան չրջանի արիւնահեղութեան ծանր վէրքերը:

Փաստերն անհերքելիօրէն վկայում են, որ Ատանայի նահանգում կազմակերպուած ջարդերը նախօրօք նախապատրաստուած եւ հրահրուած են երիտթուրքերի կուսակցութեան կողմից, որ հայերը ոչ մի մեղք չունէին եւ հայկական ապստամբութեան մասին նրանց յօրինած հեքիաթը լոկ պատրանք էր: Ապրիլեան այդ կոտորածների ընթացքում հայերը կորցրին 30 հազար մարդ:

Այո՛, տապալուեց արիւնոտ բռնակալը, բայց նրա հայաջինջ քաղաքականութիւնը սկսուեց աւելի հետեւողական եւ վայրագօրէն գործադրուել «Իթթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխների գործադրած ջանքերով:

Շատ կարճ ժամանակից յետոյ յայտնի դարձաւ, որ գաւառներում կրկին տեղի են ունենում վայրագ սպանութիւններ, բռնաբարութիւններ, ունեցուածքի յափշտակութիւններ, իսկ յանցագործները մնում էին անպատիժ: Հասկանալի է, որ հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը տուեալ ժամանակ կապուած էր հայկական հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ 6 նահանգներում (Էրզրում, Վան, Պիթլիս, Տիարպէքիր, Սվազ, Խարբերդ) բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում մեծ տէրութիւնների չրջանակում: Չնայած այն ի վերջոյ ստորագրուեց թուրքական կառավարութեան կողմից (Յունուար 26, 1914 թ.), սակայն հէնց սկզբից թուրքերը դէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը: Յետագայում Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ մտնելուց յետոյ, Թալեաթը, Ջեմալը եւ միւս պարագլուխները բացայայտ յայտարարում էին այն, որ իրենք մտան պատերազմի մէջ, որպէսզի ազատուեն իրենց վզին փաթաթուած նման պարտադրանքներից: «Մենք յոյս ունէինք, որ համաշխարհային պատերազմի կրակի միջից անցնելով,- գրում է Ջեմալ փաշան իր յուշագրութեան մէջ,- մեզ կը յաջողուի ազատուել մեր վզին փաթաթած շատ տհաճ պարտաւորութիւններից, որոնք միմիայն պատրուակ էին մեր ներքին գործերին միջամտելու համար»:[1]

Ահա թէ ինչ է դիպուկօրէն գրել տուեալ ժամանակի գերմանացի դիտնական-արեւելագէտ Ժոզէֆ Մարկուարտը.

«Նոյնիսկ «Սահմանադրութեան» հռչակումից յետոյ էլ օսմանեան քաղաքականութեան հիմնական լոզունգն էր «եթէ չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաեւ «հայկական հարցը»: Ատանայի դաժան կոտորածը ցոյց տուեց, որ Երիտթուրքերը, որոնք զարմանալիօրէն Եւրոպայում իրենց համար լիպերալ համբաւ ունենալու հասարակական կարծիք էին ստեղծել, իրենց դաժանութեամբ ոչնչով չզիջեցին մեծ մարդասպան Ապտուլ Համիտին:[2]

Իրավիճակը աւելի սրուեց 1912-13 թթ. Պալքանեան պատերազմների նախօրէին եւ ընթացքում, քանի որ Թուրքիայի կրած պարտութիւնները ռազմաճակատներում առաւել վատ անդրադարձաւ հայ ժողովրդի վրայ:

Բերենք մի քանի արխիւային փաստեր, որոնք լիովին հաստատում են տուեալ ժամանակ սպառնացող վտանգը հայերի նկատմամբ: 1912 թ. Նոյեմբերի 23-ին Էրզրումի ռուսական հիւպատոսութեան քարտուղարխորհրդական Վիշինսկին յայտնում է, որ մամուլը ամէն օր նոր փաստեր է արձանագրում հայերի նկատմամբ կատարուող բռնութիւններին: Հայը ամէն րոպէ դողի մէջ է ոչ միայն իր ունեցուածքի կողոպտման համար, այլեւ իր կեանքի համար, քանի որ անընդհատ լուրեր են տարածւում նախապատրաստուող կոտորածի մասին:[3]

Նոյն օրերին Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպան Գիրսը արտաքին գործերի մինիստրութեան յայտնում է, որ Էրզրումում տեղի ունեցած թուրքերի գաղտնի ժողովներում բացայայտօրէն խօսւում է հայերին կոտորելու մասին, որ բոլորը նախապատրաստւում են եւ սպասում

կոտորածի համար մայրաքաղաքի հրամանին:[4]

Նոյն Գիրսը մի այլ գրութեան մէջ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովին տեղեկացնում է հետեւեալը. «Ըստ մեզ հասնող տեղեկութիւնների հայերի դրութիւնը ծանր է եւ անտանելի»:[5] Նման նախազգուշական տեղեկութիւններ են յայտնել նաեւ Թուրքիայում Ամերիկայի եւ Պուլկարիայի դեսպանութեան ներկայացուցիչները:

Ելնելով հայերի օրհասական ծանր վիճակից Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը բազմիցս բանաւոր եւ գրաւոր բողոքագրեր է յղել բարձրագոյն դրանը, որտեղ փաստացի տուեալներով յայտնւում է տեղի ունեցող անարդարութիւնների, չարաշահումների, կողոպուտի, բռնաբարութեան, սպանութիւնների եւ ընդհանրապէս հայերի դէմ նախապատրաստուող զանգուածային կոտորածի մասին:

Դեռեւս 1911 թ. Փետրուարի 14-ին Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը պաշտօնապէս դիմում է ներկայացնում Թուրքիայի արդարադատութեան մինիստրութիւն, նախազգուշացնելով, որ հայաբնակ գաւառներում ծանր վիճակ է ստեղծուած: Տեղեկացնում է հայկական հալածանքների, սպանութիւնների, անօրէն գանձուող հարկերի եւ այլ չարաշահումների մասին:

Մատնանշւում է նաեւ, որ այդ բոլորի մասին Բարձրագոյն դրանը բազմիցս կատարուած բողոքարկումները մնում են թղթի վրայ եւ չեն ձեռնարկւում անհրաժեշտ միջոցներ յանցագործներին պատժելու եւ իրադրութիւնը բարելաւելու ուղղութեամբ: Հետեւանքը լինում է այն, որ հայերը ստիպուած լքում են իրենց հայրենիքը եւ ապաստան փնտռում արտասահմանում: Միւս կողմից նրանց ունեցուածքին եւ հողերին տիրում են այլ տեղերից գաղթած թուրք մուհաճիրները:

Այդ թաքիրում պատրիարքութիւնը, յայտնելով իր մտահոգութիւնը տեղի ունեցածի մասին, փաստերով նկարագրում է կատարուած յանցագործութիւնների, ինչպէս նաեւ բռնի մահմեդականացման դէպքերի վայրն ու անունները, եւ խնդրում անյապաղ միջոցներ ձեռնարկել կանխելու հայ ժողովրդի գլխին կախուած վտանգը: Բայց բանից պարզւում է, որ յանցագործները, ոչ միայն չեն պատժուել կենտրոնական կառավարութեան կողմից, այլ ընդհակառակը խրախուսուելով նշանակուել են պետական պաշտօնների:[6]

Ինչպէս վերեւում նշեցինք Պալքանեան պատերազմի ընթացքում ռազմաճակատում կրած պարտութեան հետեւանքով առաւել սրւում եւ վատթարանում է հայ ժողովրդի վիճակը: Ուստի 1913 թ. Մայիսի 13-ին Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը մի նոր թաքրիր է ներկայացնում մեծ վէզիր Մահմուտ Շեվքէթ փաշային: Կրկին մէջբերելով փաստացի տուեալներ հայաբնակ շրջաններում տեղի ունեցած վայրագութիւնների մասին, նշւում է, որ չնայած բազմիցս կատարուած յորդորանքներին Բարձրագոյն դուռը ոչ մի միջոց չի ձեռնարկել կանխելու սպաննութիւնները եւ ստեղծուել է մի այնպիսի ահաւոր իրավիճակ, որ հայերն այլեւս իրաւունք չունեն գոյատեւելու Օսմանեան կայսրութիւնում:[7]

Տուեալ ժամանակ էջմիածնի Հայոց Կաթողիկոս Գէորգ 5-րդը իր

հերթին ուղերձներ է յղում ռուսական կայսրութեան դեկավար մարմիններին: Այսպէս, 1912 թ. Հոկտեմբերի 2-ին մի նամակ է յղում Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովին, որտեղ նշւում է, որ Կ. Պոլսի պատրիարքութիւնը բազմիցս դիմել է Բարձրագոյն դրանը վերացնելու համար հայ ժողովրդի գլխին կախուած թուրքական հալածանքների եւ կոտորածների վտանգը, բայց ի պատասխան ստանում է դատարկ խոստումներ եւ գործնականում ոչ մի քայլ չի կատարւում կանխելու վտանգը: Այս կապակցութեամբ խնդրում է միջնորդել ռուսական կայսրին, որպէսզի միջոցներ ձեռնարկուեն հայ ժողովրդի անվտանգութիւնը պաշտպանելու համար:[8]

Այնուհետեւ 1912 թ. Դեկտեմբերի 24-ին Գէորգ 5-րդը ուղղակի մի նամակ է գրում նաեւ ռուսական ցար՝ Նիկոլայ 2-րդին, ուր նշւում է, որ ամբողջ Թուրքիայում սկսում են հետեւողականօրէն ոչնչացնել հայ ժողովուրդը, ըստ երեւոյթին, այն նկատառումով, որպէսզի մէկընդմիշտ վերացուի հայկական հարցը առաջ քաշելու հնարաւորութիւնը:

Սրանից մի քանի տարի առաջ երբ ուսումնասիրում էինք Երեւանի Արուեստի եւ գրականութեան թանգարանում պահուող Գր. Զօհրապի ձեռագրային ֆոնդը, օսմաներէն գրութիւնների մէջ մեր ուշադրութիւնը գրաւեց Կ. Պոլսի Պատրիարքարանի կողմից Բարձրագոյն դրանը ուղղուած մի նոր ուղերձ (takrir):

Այն բաղկացած է 7 էջերից, լուսանցքներում կան ուղղումներ, իսկ վերջում խմբագրական մի դիտողութիւնից յետոյ Գր. Զօհրապի ստորագրութիւնը:

Ստորեւ այդ թաքրիրի բնագրից բերում ենք սկզբից մի հատուածի պատճէն, լատինատառ վերծանութիւնը եւ թարգմանութիւնը:



HUZUR-I SENIYE CENAB-I SEDARET PINAHIYE

MARUZE-I DAĞIYENEMDIR

Ermenilerle meskun vilayet-i Osmanyadan varid olan haberlerin can ve mal ve irzin emniyetin fikdani noktay-i nazarindan delalet eylediği hal-i vehamete iştimal gettikce kesb-i şiddet ederek şu son günlerde bir tehlike-i aniyeden korkulmak derecesine geldiği halde nezd-i hükumet seniyede bu babda patrikhane tarafindan vuku bulan müracaat bir neticeyi fili hasil edemediği cehtle metbuğ-i müfehhamimiz olan Sultanat-i seniye nisbetle ibrazi millet-i dağyanam için asir dide zevalnapezir bir anane hükumünde bulunmak namina olarak maruzat-i atiyanin hakipayi Ali Sedaretpinahilerine ref ve ğarazi vecibe-i dikkat ad ediyorum.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԵՊԱՐԳՈՍՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՈՂԻՍ ԽՆԴՐԱՆՔԸ

Հայերով բնակեցուած օսմանեան վիլայէթներից եկող լուրերը ցոյց են տալիս, որ կեանքի, ունեցուածքի եւ պատուի ապահովութիւնը վերացել է եւ վտանգաւոր իրավիճակը գնալով առ աւելի է վատթարացել: Այս առթիւ Պատրիարքարանի կողմից Բարձրագոյն դրանը ուղղուած խնդրագրերը մի գործնական արդիւնք չեն տուել, եւ նոյնիսկ այս վերջին օրերին կանգնած ենք մի նոր վրահաս վտանգի վախի առաջ: Դարերից ի վեր իմ հաւատացեալ ազգին աւանդական է դարձել տեւապէս հանդէս բերելու իր հաւատարմութիւնը բարձր Սուլթանութեանը: Ուստի, կրկին անհրաժեշտ ենք գտնում Ձերդ վսեմ վէզիրութեան ուշադրութիւնը բեւեռել հետեւեալին...:

Մեզ յայտնի է, որ սովորաբար նման բարձրաոճ բնոյթի գրութիւնները նախքան Բարձրագոյն դուռ ուղարկելը մի վերջին անգամ նայւում եւ խմբագրւում էր Գր. Զօհրապի կողմից, քանի որ նա գերազանց տիրապետում էր օսմաներէն լեզուին:

Արխիւային հրատարակութիւններում այս ուղերձի թարգմանութեանը մենք չենք հանդիպել: Այնպէս որ ուղերձի ամբողջական թարգմանութիւնը առայժմս թողնում ենք յետագային:

Միայն նշենք, որ տուեալ ժամանակ Պատրիարքարանը նկատի ունենալով հայութեան օրհասական ծանր կացութիւնը մի անգամ եւս դիմում է Բարձրագոյն դրանը կանխելու համար սպասուող ահաւոր վտանգը: Ուղերձում մի կողմից խօսւում է սահմանադրութեան եւ ընդհանրապէս օսմանեան օրէնքների եւ կարգուկանոնի նկատմամբ հայ ժողովրդի հաւատարմութեան, իսկ միւս կողմից հայկական գաւառներում հայերի նկատմամբ տեղի ունեցող հալածանքների եւ սպանութիւնների մասին:

Այստեղ հարկ ենք համարում նշելու նաեւ, որ 1911 թ. Նոյեմբերի 28-ին, օսմանեան մէջլիսի պատգամաւորի իրաւունքից ելնելով Գր. Զօհրապը մեծ վէզիր Սայիդ փաշային ներկայացնում է մի խնդրագիր, որտեղ անհերքելի փաստերի հիման վրայ բացայայտում է կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը, կամայականութիւնն ու զեղծումները հայերի հանդէպ եւ Թուրքիայի հայաբնակ նահանգների ծանր դրութիւնը բարելաւելու եւ հողային հարցը լուծելու միտումներով առաջարկում է հաւանական թուացող միջոցառումներ:

Որպէսզի ընթերցողը աւելի պարզ պատկերացում ունենայ իրավիճակի մասին բերում ենք Գր. Զօհրապի կազմած այդ խնդրագրից մի հատուած.

«Ձնայած սահմանադրութեան հռչակումից անցել է չորս տարի, սակայն հայերով բնակեցուած վիլայէթներում բարեփոխման ոչ մի նշան չի երեւացել: Ընդհակառակը, վերջին երկու տարիներին հայերի վիճակը անտանելի է դարձել: Ցիլիկիայի վիլայէթներում ունեցուածքի, պատուի եւ կեանքի ապահովութեան մասին խօսք անգամ լինել չի կարող, ջարդի սպառնալիքները բնակչութեանը պահում են մշտական սարսափի մթնոլորտում: Ստացուած տեղեկութիւններից պարզւում է, որ կան մարդիկ, որոնց ջանքերով բնակչութեան համար տեւական վտանգաւոր իրավիճակ է ստեղծւում: Ակնյայտ է, որ ամբողջապէս հայերով բնակեցուած այդ վիլայէթները կրկին նետւում են արեան յորձանուտը...»:

Գր. Զօհրապի եւ այլոց ներդրած բոլոր ջանքերը ինչպէս նաեւ Պատրիարքութեան ձեռք առած միջոցառումները անցան ապարդիւն եւ հայերի վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախաշեմին «Իթթիհատ վէ Թերաքքի» կուսակցութեան ղեկավարները իրենց գաղտնի նիստերում երբ ընդունեցին հայերին բռնի տեղահանելու, կոտորելու եւ իսպառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդէն նկատւում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին յարմար ժամանակի: Եւ այդ յարմար ժամանակը՝ համաշխարհային պատերազմն էր:

Այնպէս որ յետագայում Թալեաթի, Ջեմալի եւ միւսների, իսկ աւելի ուշ Թուրք պատմաբանների կողմից առաջ քաշուած այն տեսակէտը, որ տեղահանութիւնը իրականացուեց կովկասեան ճակատում Թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով, անհիմն են եւ մտացածին: Անհիմն են նաեւ մի շարք օտարազգի վարձկան գիտնականների թրքամէտ մեկնաբանութիւնները, հայերի ցեղասպանութեան հարցի շուրջ, որովհետեւ, ինչպէս տեսանք բոլոր փաստերն հակառակն են վկայում:

Եւ իրօք, որ ինչպէս նշել է Ժոզէֆ Մարկվարտը տուեալ ժամանակ «Երիտթուրքերի նշանաբանն էր եթէ չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաեւ հայկական հարցը»:

Հայ ժողովրդի ինչպէս նաեւ միւս ազգութիւնների ճնշման եւ

հալածման գործում մեծ նշանակութիւն ունէր նաեւ երիտթուրքերի որդեգրած եւ իրենց քաղաքական գործունէութեան ասպարէզում կիրառուող հակամարդկային գաղափարախօսութիւնները:

Այսպէս, Օսմանիզմի գաղափարախօսութիւնը, որը ծնունդ էր առել դեռեւս 19-րդ դարի կէսերից, նոր երանգներով գործունէութեան բուռն թափ ստացաւ 1908 թ. երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ: Սակայն այս անգամ եւս նկատուեց օսմանիզմի յետադիմական գաղափարախօսութեան սնանկութիւնը:

Օսմանիզմի երիտթուրքական գաղափարախօսները ամէն կերպ փորձում էին միաձուլել Օսմանեան կայսրութեան ոչ-մահմետական ժողովուրդներին մէկ «Օսմանեան ազգութեան» մէջ, որը իրականում զրկում էր ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրաւունքից: Երիտթուրքերի ղեկավարները հետեւողականօրէն ջատագովում էին «օսմանիզմի» գաղափարախօսութիւնը, այն է, որ Օսմանեան կայսրութիւնում բացի Օսմանեան ազգից ուրիշ ազգութիւններ չկան, կայսրութիւնում մէկ ազգ կայ՝ օսմանցի ազգը:

Իրականում կայսրութիւնում «իսկական» քաղաքացի կարող էին ճանաչուել թուրքերը, եւ նրանք, ովքեր հաւատափոխ կը լինէին, կը մոռանային սեփական լեզուն եւ կը ձուլուէին թուրքերի մէջ: Դեռեւս 1910 թ. Սալոնիկում կայացած «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան տեղական կոմիտէի գաղտնի նիստում Թալեաթը յայտարարել է. «Դուք գիտէք, որ սահմանադրութեամբ մահմետականների եւ քրիստոնեաների հաւասարութիւն է հաստատուել, բայց դուք բոլորդ միասին եւ ամէն մէկդ առանձին գիտէք եւ զգում էք նաեւ, որ դա անիրականալի գաղափար է, Շարիաթը, մեր անցեալի ամբողջ պատմութիւնը, հարիւր հազարաւոր մահմետականների զգացմունքները եւ նոյնիսկ իրենց՝ քրիստոնեաների զգացումը, որոնք յամառօրէն դիմադրում են իրենց օսմանականացման ամէն մի փորձի դէմ, անյաղթահարելի պատնէշ են իսկական հաւասարութեան համար...: Ուստի հաւասարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել մինչեւ այն ժամանակ, քանի դեռ մենք յաջողութեամբ չենք պսակել կայսրութեան օսմանականացման մեր նպատակը:[9]

Իսկ աւելի ուշ 1911 թ. Հոկտեմբերին կրկին Սալոնիկում տեղի ունեցած իթթիհատականների համագումարը կայացրեց հետեւեալ որոշումը.

«Վաղ թէ ուշ պէտք է իրագործուի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարուի համոզելով, այլ պէտք է իրականացուի զէնքի ուժով»:[10]

Իսկ 1911-1913 թթ. պալքանեան պատերազմների եւ յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին փանթուրքիզմը եւ փանիսլամիզմը դարձան երիտթուրքերի ներքին եւ արտաքին քաղաքականութեան գաղափարական առանցքը: Տուեալ ժամանակ այս գաղափարախօսութիւնների առաւել աչքի ընկնող ներկայացուցիչներն էին Զիյա Կէօքալփը, Եուսուֆ Ակչուրան, Ֆուատ Քէօփրիւլիւն, Իսմայիլ

պէյ Գասպրինսկին, Ջելալ Նուրին, որոնք իրենց առանձին մենագրութիւններում եւ մամուլում հրապարակած յօդուածներում փրոպագանդում էին թուրքերի «գերազանցութիւնը» կայսրութիւնում բնակուող այլ ազգութիւնների նկատմամբ, հետեւաբար եւ պահանջում էին վերջիններիս միաձուլումը մէկ ազգութեան մէջ:

Փանթուրքիզմը միաժամանակ Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներին բռնի ուծացնելու խնդրում երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան մի նոր ուղղութիւն էր: Այսպիսով երիտթուրքերը ամբողջապէս որդեգրեցին Ապտուլ Համիտի արիւնարբու քաղաքականութիւնը՝ իրենց դաժանութեամբ գերազանցելով նրան: Կայսրութիւնում ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը:

Ի միջի այլոց նշենք, որ մեր օրերում օսմանիզմի գաղափարախօսութիւնը համարեա թէ նոյնութեամբ իր արտայայտութիւնն է գտնում նաեւ արդի թուրքական պետական գործիչների ելոյթներում: Այսպէս, Թուրքիայի հանրապետութեան նախագահ՝ Սուլէյման Տեմիրէլը 1994 թ. Մարտի սկզբին ուշագրաւ ակնարկութիւն էր արել օսմանիզմի գաղափարախօսութեան մասին քրտական հարցի հետ կապուած, որը արձագանգուեց թուրքական «Սապահ» թերթի Մարտի 21, 1994 համարում հրատարակուած լրագրող Ֆաթիհ Ջեքիրկէի յօդուածում: Սուլէյման Տեմիրէլը մատնանշել էր, որ «Թուրքիայում տարբեր ազգային եւ կրօնական պատկանելութիւն ունեցող մարդիկ պէտք է ապրեն սահմանադրական քաղաքացիութեան դրօշի ներքոյ: Այդպէս էին անում օսմանցիները»:

Ս. Տեմիրէլի քրտական հարցին վերաբերեալ արտայայտուած խորհրդածութիւններին միանգամայն ճիշդ մեկնաբանութիւններ էր տուել թուրքագէտ-պատմաբան Մուրատ Բոջոլեանը. «Տեմիրէլը պատմական էքսկուրսներ է անում» իր շահեկան յօդուածում: Վերլուծելով վերոյիշեալ յօդուածը Մ. Բոջոլեանը յանգել էր հետեւեալ եզրակացութեան.

«Սա մօտ մէկ հարիւրամեակ տեւած եւ երկրի բոլոր բնակիչներին մէկ ազգի մէջ ձուլելու քաղաքականութեան իրական արտայայտութիւնն է: ...Ս. Տեմիրէլը որեւէ նոր բան չի ասում, այլ պարզապէս վերադառնում է մէկ հարիւրամեակ ետ ու փորձում վերակենդանացնել տխրահռչակ փանօսմանիզմի գաղափարը: Նոյնն է նաեւ նպատակը, այդ ժամանակ դրուած էր ամէն գնով Օսմանեան կայսրութեան, այսօր էլ Թուրքիայի հանրապետութեան տարածքային ամբողջականութեան պահպանման հարցը»:[11]

Իսկ Մեծ Եղեռնի նախաշեմին Օսմանիզմի գաղափարախօսութիւնը առաջ քաշելով երիտթուրքական յայտնի գործիչ Ջելալ Նուրին բացայայտօրէն Թուրքիայի ոչ-մահմետական ժողովուրդներից պահանջում էր հաշտուել իրենց իրաւազուրկ վիճակի հետ եւ հրաժարուել ազգային ձգտումներից: Նա ամէն կերպ ձգտում էր համոզել, որ հայերը, արաբները, քրտերը, չպէտք է պայքարեն իրենց ազատագրութեան

համար, քանի որ Թուրքիայում տիրապետող կարգերը, որոնք հիմնուած են մահմետական կրօնի վրայ, ամենաառաջաւորն ու իտէալականն են: Փաստօրէն, Թուրքիայում իսկական քաղաքացի էին հռչակուելու միայն Թուրքերը, կամ նրանք, ովքեր կը Թրքանային, կը մոռանային սեփական լեզուն եւ կը ձուլուէին Թուրքերի հետ: Ջելալ Նուրին ամէն կերպ գովաբանում էր իսլամի դոգմաները, մատնանշելով որ այն միաժամանակ բարոյական օրէնսգիրք ու կառավարման ձեւ է:

Ջելալ Նուրին եւ երիտԹուրքերի վերոյիշեալ գաղափարախօսները ամէն կերպ փորձում էին փանիսլամիզմը օգտագործել Օսմանեան կայսրութեան մահմետական ժողովուրդների վրայ իրենց իշխանութիւնը ամրապնդելու համար: «Այսօր մահմետականութիւնը չափազանց կարեւոր ուժ է,– գրում էր Ջելալ Նուրին,– եւ յետագայում էլ նա ընդունակ է շատ կարեւոր դեր խաղալու:

Ջելալ Նուրիի հայատեաց մտքերը լիովին բացայայտւում են նրա հետեւեալ արտայայտութիւնների մէջ.

«Բոլոր դէպքերում հայերի հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով... Թուրքերի մի շարք վատ սովորութիւնները բնատուր են եւ դալիս են անցեալի վնասակար բնազդից: Մենք իւրայինների հանդէպ եւս գթութիւն ցուցաբերելու յատկութիւնը չունենք: Թուրքերը, ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմիայնց նկատմամբ էլ դաժանութիւն են ցուցաբերում»:[12]

Եւ սկսեցին կոտորել հայերին, այն էլ ինչպիսի բարբարոսական ձեւերով:

Արեւմտահայութիւնը ամենադաժան հալածանքների եւ ֆիզիկական ոչնչացման ենթարկուեց յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիների երիտԹուրքերի կառավարութեան գործադրած նենգ եւ անմարդկային քաղաքականութեան հետեւանքով:

Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի առաջին մահասարսուռ դէպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճեանը գրում է. «Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսի բնակչութիւնը անակնկալի մը առջեւ կը դնէր, 1915 Ապրիլ 11 (24)-ի ձերբակալութիւնները եղան: Մէկ գիշերուան մէջ Կ. Պոլսոյ մտաւորական դասակարգի ամէնէն կարկառուն դէմքերը եւ ժողովրդին ամէն դասակարգերէն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալուեցան եւ Զանկերը ու Այաշ տարագրուեցան»:[13]

Զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտԹուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը իսպառ բնաջնջելու ճանապարհը: Եւ պատերազմը պատեհ առիթ հանդիսացաւ, որպէսզի նրանք ոչնչացնեն ոչ միայն

հայերին, այլեւ հաշուեյարդար տեսնէին քրիստոնեայ միւս ժողովուրդների հետ:

«Ամէնուրեք սկսեցին հաւաքել հայերին,– գրում է Թուրք գործիչ Մեւլան Զադէ Ռիֆաթը,– նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին: Նրանց, ովքեր ընդունում էին մահմետականութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւսներին խմբերով, ժանդարմաների հսկողութեան ներքոյ ուղարկում էին նախատեսուած ճանապարհներով»:[14] Այնուհետեւ այդ անզէն ու անպաշտպան քարաւանները մարդկանց տեսողութիւնից հեռու, ամայի վայրերում ենթարկւում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի (յատուկ կազմակերպութիւն) հրոսակախմբերի յարձակմանը: Իսկ հրաշքով ազատուածները, քաղցից եւ ծարաւից ծայրաստիճան հիւծուած ու ոսկրացած ուրուականների նման յայտնւում էին Միջագետքի եւ Սիրիայի անապատներում:

Արեւմտահայութեան զանգուածային բռնագաղթի ու գազանային կոտորածների լուրը շուտով տարածուեց ամբողջ աշխարհով մէկ՝ ամէնուրեք առաջացնելով բուռն զայրոյթ ու բողոք: Առաջադէմ մարդկութեան ներկայացուցիչները, առանձին կազմակերպութիւններ դատապարտում էին երիտԹուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանութեան քաղաքականութիւնը եւ պահանջում անյապաղ դադարեցնել այն, տարագրուած հայերին վերադարձնել իրենց բնակավայրերը: 1915 թ. Մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները համատեղ նախազգուշացրին Բարձրագոյն դրանը, յայտարարելով հետեւեալը.

«Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայկական կոտորածներ՝ քրտերի ու Թուրքերի կողմից, Օսմանեան իշխանութիւնների բացայայտ Թողտուութեամբ, իսկ յաճախ էլ ուղղակի համագործակցութեամբ: Նոր տոմարով Ապրիլի կէսերին հայկական կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Պիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայ հարիւրաւոր գիւղերի բնակիչները մորթուել են մինչեւ վերջին մարդը: Բուն Վանում հայկական թաղամասը պաշարման մէջ են առել քրտերը: Միեւնոյն ժամանակ, Կ. Պոլսի Թուրքական կառավարութիւնը ձերբակալում եւ աներեւակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչութեանը: Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ Թուրքիայի կատարած այս նոր յանցագործութիւնները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները այսու հրապարակաւ յայտարարում են Բարձրագոյն դրանը, որ իրենք այդ յանցագործութիւնների համար անձնական պատասխանատուութիւնը դնում են Թուրքական կառավարութեան բոլոր անդամների, ինչպէս նաեւ նրա՝ տեղական այն իշխանութիւնների վրայ, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»:[15]

ԵրիտԹուրքերի կառավարութիւնը, սակայն, անողոք դաժանութեամբ շարունակեց իրականացնել իր որդեգրած քաղաքականութիւնը, որի զոհը

դարձան աւելի քան մէկուկէս միլիոն հայեր։

Փաստերը վկայում են, որ տեղահանուեց ու աքսորուեց ճակատամերձ գօտիներից ընդհանրապէս շատ հեռու գտնուող շրջանների, գիւղերի եւ քաղաքների հայ բնակչութիւնը։ Այս մասին թուրք պաշտօնեայ Նայիմ պէյի յուշագրութեան մէջ կարդում ենք. «Եփրատի ափերն արտաքսուածները ոչ միայն Ստամպուլի շրջակայքից էին, այլեւ՝ Ռոդոստոյից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Ատապազարից, Զիզրէից (Զեզիրէ), Քոնիայից, մի խօսքով, նրանք Կեսարիայի եւ Անատոլիայի երկաթգծի երկարութեամբ ընկած տարածքից աքսորուած հայերն էին։ Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տուեց։ Անհասկանալի էր, թէ ինչու մարդկանց քշում են Տէր Զօրի ուղղութեամբ։ Սակայն անհանգստանալու համար առաւել էական պատճառներ կային։ Ռաս-ուլ-Այնում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները տարածուեցին նաեւ Մեսոպոտամիայում։ Մի քանի տարի շարունակաբար կատարուող կոտորածները գաղտնի չմնացին նաեւ խուլ անապատում։ ...Կառավարութեան նպատակը ամբողջ հայերի ոչնչացումն էր։ Նրանք իրաւունք չունէին այլեւս գոյատեւելու»։[16]

Որ տեղահանութիւնն ու կոտորածը կատարւում էին կանխամտածուած ծրագրով, հաստատւում է նաեւ Մեվլան Զատէ Ռիֆաթի բերած փաստարկներով. «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութիւնը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպաննել եւ ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար նախագահութիւնը ստեղծեց Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ եւ հանրակրթական մինիստր Շիւքրի պէյերից կազմուած մի յանձնաժողով՝ տալով «Երեքի գործադիր կոմիտէ» անուանումը։ Այս երեքի գործադիր կոմիտէն «Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ սկսեց բանտերից հաւաքագրել քրէական յանցագործներին եւ ստեղծել չեթեների հրոսակներ։ «Թեշքիլաթ-ը մահսուսէ» պիտակի տակ ստեղծուած այս չեթեների կատարած յանցագործութիւններն ու բռնութիւնները, արատաւորելով թուրք ժողովրդին աշխարհի հասարակայնութեան առջեւ, արիւնալի եւ բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմութեան մէջ»։[17]

Տեղահանութեան եւ կոտորածի ընթացքում գործի է դրուել նաեւ հայերին մահմեդականացնելու քաղաքականութիւնը։ Այդ քայլը ջատագովել է երիտթուրքական հանրայայտ կին գործիչ Հալիտէ Էդիպը, չնայած աշխատել է ցոյց տալ, որ ինքը դէմ է եղել երեխաներին մահմեդականացնելու ծրագրին։[18] Մինչդեռ նրա ժամանակակիցների վկայութիւններից յայտնի է դառնում, որ Հալիտէ Էդիպը եւս, «հայ որբերին հաւաքելով, մահմեդականացնում էր եւ դաստիարակում որբանոցներում որպէս թուրքերի»։[19]

Քրիստոնեայ երեխաներին մահմեդականացնելով թուրքացնելը նոր երեւոյթ չէր, գալիս էր դեռեւս միջնադարից։

Նոյնիսկ 1915 թ. Հոկտեմբերի 26-ին Թալեաթը հետեւեալ խորագրով 6 կէտից բաղկացած հրամանագիր է արձակել հայերին մահմեդականացնելու մասին.

«Ներքին գործերու նախարարութիւն, ցեղախումբերու եւ գաղթականներու զետեղման յանձնաժողով, թիւ 61/666»։

Այս հրամանագիրի առաջին յօդուածում ասւում էր.

«Կ՚ընդունուի հաւատափոխութիւնը իրենց բնակավայրերուն մէջ մնացած ոչ տարագրուած հայերուն»։[20]

Իսկ մահմեդական դառնալու դէպքում պիտի փոխհատուցուէր նրանց ունեցուածքի փոխարժէքը, տրուելու էին տներ ապրելու եւ հողեր մշակելու։

Իսկ որ 1915 թ. կոտորածների եւ բռնագաղթի ընթացքում հայաբնակ գիւղերում եւ քաղաքներում մահմեդականացման հարցը զանգուածային բնոյթ է կրել, վկայում է հետեւեալ փաստը.

«Եոզղաթի գաւառի եւ գիւղերու հայերու տարագրութենէն առաջ, մունետիկներ կանչեցին փոդոցներու մէջ թէ այն հայերը, որոնք կ՚ընդունին իսլամական կրօնքը, զերծ պիտի մնան տեղահանութենէ եւ աքսորէ»։[21]

Տեղահանութեան եւ կոտորածների ընթացքում թուրքերն աշխատել են մահմեդականացնել յատկապէս Սիրիա տարագրուած հայերին։ Ահա թէ ինչ է գրում այդ մասին Ֆալիհ Ռիֆքը Աթայը. «Զերքէզների, քրտերի եւ միւսների նման հայերի արտաքսումը դէպի Սիրիայի խորքերը նօսրացնելու էր արաբներով խիտ բնակեցուած վայրերը։ Նոյնիսկ մի յանձնաժողով կազմուեց, որպէսզի հայերին ե՛ւ տուն ե՛ւ հող տրամադրուի՝ մահմեդական դառնալու պայմանով»։[22]

Տեղահանելով հայերին, թուրքական իշխանութիւնները նաեւ կեղծ լրբրբաջանքներով ջանում էին հաւաստիացնել, թէ իբր նրանց թողած հողային ունեցուածքն ու գոյքը պահպանուելու են պետութեան կողմից եւ պատերազմի աւարտից յետոյ կրկին վերադարձուելու են։ Այս կապակցութեամբ թուրքական կառավարութիւնը հայերի ունեցուածքի բացայայտ կողոպուտն ու թալանը աշխատեց «օրինականացնել» մի շարք օրէնքներով, որոնք բնաւ չգործադրուեցին։[23] «Այսպէս ժողովուրդին բոլոր շարժական ստացուածքը կը փճանար կամ լաւեւս է ըսել թուրքերու ձեռքը կ՚անցնէր, կառավարութիւնը ոչ մէկ տեղ հոգածու չգտնուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու»,[24] վկայում է Զաւէն Պատրիարքը։

Կ. Պոլսում ամերիկեան դեսպան Մորգենթաուն այս փաստի մասին վկայում է. «Հազիւ թէ նախկին սեփականատէրերը հեռանային գիւղէն՝ մահմեդական մուհաճիրներ- Թուրքիոյ այլ կողմերէն գաղթողներ կը փոխադրուէին հայկական բնակավայրերէն ներս։ Նոյնպէս հայերուն բոլոր արժէքաւոր առարկաները- դրամ, մատանիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ – կը տարուէին ոստիկանատուներ «ապահով պահուելու համար» մինչեւ հայերուն վերադարձը, եւ ապա կը բաժանուէին թուրքերուն»։[25]

Առկայ են բազմաթիւ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրութիւններ, առաքուած երիտթուրքերի կառավարութեան կողմից,

որոնք լիովին բացայայտում են հայութեան ունեցուածքը կուլ տալու ծրագիրը:[26] Ց.Գ. Ինճիկեանի հաշումներով կողոպուտի ու ոչնչացման են ենթարկուել 66 քաղաքների ու 2500 գիւղերի հայ ու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, կողոպտուել ու քանդուել են աւելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ եւ վարժարաններ: Ազգային յատուկ յանձնաժողովի տուեալներով, Օսմանեան կայսրութիւնում միայն հայ ժողովրդին հասցուած նիւթական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մօտ 15 միլիարդ ֆրանք:[27]

Գերմանիան եւս յանցաւոր է հայկական ջարդերի համար: 1915 թ. Յուլիսի 4-ին թուրքական կառավարութեանն ուղղուած գաղտնի գրութեամբ Գերմանիան լիովին հաւանութիւն է տուել եւ պաշտպանել երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը: Գերմանական հիւպատոսները խրախուսել, իսկ գերմանացի սպաները մասնակցել են երիտթուրքերի վայրագութիւններին:[28] Այդ օրերին բողոքի բուռն ցասումով հանդէս եկած միջազգային բանուորական շարժման ականաւոր գործիչ Քարլ Լիբկնեխտը, անարգանքի սիւնին գամելով Գերմանիայի իմպերիալիստական կառավարութեան դաւադիր գործողութիւնները, նկատում է. «Թուրքական կառավարութիւնը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհն այդ գիտէ եւ ամբողջ աշխարհն այդ ոճրագործութեան համար յանցաւոր է համարում նաեւ Գերմանիային, չէ՞ որ Կ. Պոլսում թուրքական կառավարութեանը ղեկավարում են գերմանական սպաները: Ո՛չ մի բան չգիտեն միայն Գերմանիայում, որովհետեւ գերմանական մամուլի բերանի մէջ դրուած է գելանարակ»:[29]

Նոյնիսկ արեւմտահայութեան կոտորածների անմիջական մեղսակիցները Թալեաթը, Ջեմալը եւ միւսները չեն թաքցրել իրենց կատարած անմարդկային արարքները եւ փորձել են արդարանալու ուղիներ որոնել: Ճեմալը իր յուշագրութիւններում փորձել է արդարանալ, թէ ինքը մեղաւոր չէ արեւմտահայերի բնաջնջման գործում: Նա ընդունում է, որ հայերի տեղահանութեան ժամանակ տեղի են ունեցել բռնութիւններ եւ կոտորածներ:[30] Իսկ Թալեաթը խոստովանել է, որ «ըստ էութեան, զինուորական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք: Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղութիւնը»:[31] Իսկ մի այլ տեղ Թալեաթը, ինչպէս վկայում է Հալիտէ Էտիպը, խոստովանել է իր անմարդկային արարքը եւ արդարացում է որոնել ազգային շահերի տեսակէտից՝ համոզուած լինելով, «որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամէն ինչ, եւ յաջողւում է, աշխարհն ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի, եւ ես գիտեմ, որ կը մեռնեմ դրա համար»,- յայտարարել է նա:[32]

Տուեալ ժամանակ թուրքական 4-րդ բանակի գեներալներից Ալի Ֆուատ էրդէնը, որն ականատես է եղել 1915 թ. հայկական ջարդերին, իր յուշերում ամէն կերպ աշխատել է խուսանաւել եւ մեղքը բարդել հայ

կուսակցութիւնների գործունէութեան վրայ: Այնուհանդերձ, տուեալ դէպքերից քառասուն տարի յետոյ գրի առնուած իր յուշերի մէջ նշում է, «որ տեղահանուած հայութեան թշուառ վիճակը շատ նպաստաւոր էր բծաւոր եւ որովայնային տիֆի տարածման համար, որ այդ վարակիչ հիւանդութիւնների պատճառով մեծ թուով մահացութիւններ են եղել»:[33]

Իսկ ժամանակակից թուրք պատմաբաններն ու պետական գործիչները արդարանալու միտումով յաճախ աշխատում են զանազան պատճառաբանութիւններ յօրինել հայերին մեղադրելու ուղղութեամբ: Մեր կարծիքով, իրականում մէկ պատճառ կար հայկական ջարդերը կազմակերպելու խնդրում: Հայերի «մեղքը» կայանում էր նրանում, որ նրանք ապրում էին այդ տարածքում, աւելի ճիշդ դարերից ի վեր իրենց հայերի բնօրրանում: Եւ որպէսզի Օսմանեան կայսրութեան արեւելեան մասում մի երկրորդ Պուլկարիա չստեղծուի, երիտթուրքական կառավարութիւնն ու կուսակցութիւնը դիմեցին ամենավայրագ միջոցի, այն է մէկընդմիշտ ազատուել հայերից, նրանց բնաջնջելով:

Այս խնդրում միանգամայն ճիշդ հետեւեալ դատողութիւնն է կատարել Ֆրանսիացի հանրայայտ պատմաբան Իվ Թեռնոնը.

«Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, դա ոչ թէ նշանակում էր ազատուել ատելի մի հասարակութիւնից, այլ պարզապէս Թուրքիայի կենտրոնական մասը, մասնաւորապէս Անատոլիան եւ Կիլիկիան մաքրել հայութիւնից, որ անմիջական ներկային եւ ապագային վտանգաւոր էր Թուրքիայի ազատագրական եւ տարածքային ամբողջականութեան համար: Հայերը սպանուեցին ոչ թէ նրա համար, որ ատելութեան թիրախ էին, այլ սպանուեցին, որովհետեւ այնտեղ էին: (Ընդգծումը մերն է.-Ա.Փ.) Ազգայնամոլ, նուաճողական եւ բռնագրաւած հողերը ետ չվերադարձնելու քաղաքականութեան գիծ ունեցող մի Թուրքիա չէր կարող հանդուրժել հայերի ներկայութիւնը»:[34]

Եւ այս բոլորի տրամաբանական շարունակութիւնը եղաւ այն, որ արեւմտահայերի բեկորների հալածանքի, բնաջնջման քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ յետագայում՝ քեմալականների վարած ազգայնական շարժման շրջանում: 1919-1922 թուականներին նրանք զանգուածային նոր կոտորածներ կազմակերպեցին Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանում, Կիլիկիայում եւ Թուրքիայի մի շարք վայրերում, որոնց զոհ գնացին մօտ 250 հազար հայեր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Behcet Cemal, Cemal Pasa, Hatiralar. 1959, s. 359.

2. Տե՛ս Dr. Marquart, Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation, Berlin, 1919, s. 45.

3. Տե՛ս հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի ժողովածու, կազմեցին Մ.Գ. Ներսիսեանը եւ Ռ.Գ. Սահակեանը, Երեւան, 1982, էջ 238-39, (ռուսերէն):

4. Նոյն տեղում էջ 267:
5. Նոյն տեղում էջ 258:
6. Նոյն տեղում էջ 220:
7. Նոյն տեղում էջ 260:
8. Նոյն տեղում էջ 233:
9. Նոյն տեղում էջ 202:
10. Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1930, s. 222.
11. Տե՛ս «Ազգ» Ապրիլ 30, 1994, էջ 6:
12. Celal Nuri, Tarihi Istikbal. Istanbul. 1331 (1915), s. 184. Osmanli Imparatorlugunun tarihi tedennisi. Istanbul. 1913, s. 99 (արաբատառ):
13. Ա. Ալպօյաճեան, Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 210:
14. Mevlan Zade Rifat, Turkiye inkilabinin ic yuzu, I,-ci fasil, Halep, 1929, s. 119, (արաբատառ):
15. Նուրի Բարսեղով, հայերի ցեղասպանութիւնը յանցագործութիւն է մարդկութեան դէմ, «Լրաբեր» Հայաստանի ԳԱ, Երեւան, 1987, No. 4, էջ 34. (ռուսերէն): Հմմտ. ֆրանսերէն աղբիւրը. Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Armeniens... No. 29, p. 23.
16. Aram Andonian, The Memoirs of Naim bey, Watertown, AHRA, 1960, թ. 33-34:
17. Mevlan Zade Rifat, նշ. աշխ., էջ 108:
18. Memoirs of Halide Edip, New York, London, թ. 389:
19. Mevlan Zade Rifat, նշ. աշխ., էջ 145:
20. «Ժամանակ», 9 Փետրուար 1919, Եոզղատի Դատավարութիւն, առաջին նիստ, Փետրուար 5, 1919: Տե՛ս Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 162:
21. Նոյն տեղում, էջ 162:
22. Falih Rifki, Atay, Zeytindagi, Istanbul, 1957, s. 79.
23. Ա.Հ. Փափազեան, վաւերագրական նիւթեր արեւմտահայերի մասին (ՀՍՍՀ ԳԱ գիտ. ինֆորմացիոն բիւլետէն, Երեւան, 1983, թիւ 2 (56), էջ 16-18:
24. Զաւէն արքեպիսկոպոս, Պատրիարքական Ցուշերս, վաւերագրեր, Գահիրէ, 1917, էջ 318:
25. Morgenthau Henry, Ambassador Morgenthau's Story, New York, 1918 Մէջբերում է ըստ ամերիկեան դեսպան Մորկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները, գրքից, Կ. Պոլիս, 1919, էջ 258:
26. Լեւոն Վարդան, հայկական տասնիենգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 94-100:
27. Ց.Գ. Ինճիկեան, Օսմանեան կայսրութեան անկումը, Երեւան, 1984, էջ 301:
28. Ս.Մ. Ցակոբեան, հայերի գենոցիտը Օսմանեան կայսրութիւնում եւ իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատուութեան հարցը (ՊԲՀ., 1963, թիւ 1, էջ 62):
29. Նոյն տեղում, էջ 64, հմմտ. գերմաներէն աղբիւրը "Stenographische Bericht Uber die Verhandlungen des Deutschen Reichstages" Պեռլին, հատ. 36. էջ 512:
30. Behcet Cemal, Cemal pasanin hatiralari, Ankara, 1959, s. 362.
31. Talaat pasanin hatiralari, Istanbul, 1946, s. 73.
32. Halide Edip, նշ. աշխ., էջ 387:
33. Ali Fuad Erden, Birinci dunya harbinde Suriya hatiralari, C.I. Istanbul, 1954, s. 122.
34 Իվ Թեռնոն, Պատմական Ճշմարտութիւնը սակարկութեան առարկայ չէ: (Տե՛ս «Նոր Օր» եռօրեայ, Ապրիլ 23, 1994, էջ 5):

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտից յետոյ համաշխարհային հասարակայնութիւնը պահանջում էր պատասխանատուութեան ենթարկել արեւմտահայութեան սպանդը կազմակերպող թուրք ոճրագործներին: Այդպիսի պահանջով հանդէս եկան նշանաւոր արեւելագէտներ՝ ֆրանսիացի հնագէտ-պատմաբան Ճաք Տը Մորգանը, գերմանացի հայագէտ Եոզէֆ Մակվարտը: Դատապարտող սուր յօդուածներով եւ աշխատութիւններով բողոքի ձայն բարձրացրին տարբեր ազգութիւնների քաղաքական, գիտութեան եւ մշակութային ականաւոր գործիչներ՝ Եոհաննէս Լեփսիուսը, Արմին Վեգները, Մարտին Նիպագէն, Անթուան Մեյէն, Ֆրեսերիք Մակլերը, Ռընէ Պինոնը, Վիքթոր Բերարը, Առնոլդ Թոյնպին, Վալերի Բրիւսովը, Եուրի Վեսելովսկին, Անտրէյ Մանդելշտամը, Հենրի Մորգենթաուն, Հերբերտ Ադամս Գիբբոնսը եւ շատ ուրիշներ:

Հանդէս գալով Մեծն Բրիտանիայի համայնքների պալատում 1918 թ. Նոյեմբերի 12-ին, Ռայթը անգլիական կառավարութիւնից պահանջել է, որ դաշնակիցների ներկայացուցիչները Թուրքիայի հետ խաղաղութեան պայմանները քննարկելիս յատուկ կանգ առնեն հայկական կոտորածների յանցագործներին պատժելու հարցի վրայ:[1]

Թուրք գործիչների եւ պաշտօնեաների մէջ եւս գտնուել են առանձին մարդիկ, որոնք ոչ միայն կողմնակից չեն եղել հայերին կոտորելու հրեշային ծրագրի իրականացմանը, նողկանքով ու ատելութեամբ են վերաբերուել տեղի ունեցող վայրագութիւններին, հրաժարուել կատարելու կենտրոնական կառավարութեան՝ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գաղտնի հրամանները՝ հայ ժողովրդին տեղահանելու եւ կոտորելու հարցում (այդպիսիները անմիջապէս հեռացուել են պաշտօնից, պատասխանա-

տուութեան ենթարկուել եւ նոյնիսկ ներքին կարգով դատապարտուել մահուան), այլեւ յետագայում ակտիւ գործունէութիւն են ծաւալել կազմակերպելու յանցագործների դատավարութիւնը:

Ահա նրանցից մի քանիսի անունները. Անքարայի նահանգապետ Մազհար պէյը. Կաստամունիի նահանգապետ Ռեշիտ փաշան (իմիջիայլոց այս անձնաւորութիւնը «Ես իմ ձեռքերը արեան մէջ չեմ թաթախի» ասելով հրաժարուել է պաշտօնից). Եոզղաթի մութասարիֆ, Ջեմալ պէյը. Քոնիայի եւ այնուհետեւ Հալէպի նահանգապետ Ջելալ պէյը, Քէօթահիայի մութասարիֆ Ֆայիք Ալի պէյը, Բալուի մութասարիֆի տեղակալ Ալի Իլմի պէյը եւ ուրիշներ: Հայերի տեղահանութեան հրամանից հրաժարուելու համար Տիարպէքիրի վալին սպաննել է տուել իր երկու քայմաքամներին:

Այստեղ հարկ է նշել նաեւ հետեւեալ մանրամասնութիւնները: 1915 թ. երբ իթթիհատիստների կենտրոնական կոմիտէն Անքարայի պատգամաւոր եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի անդամ՝ Աթիֆ պէյին ուղարկում է Մազհար պէյի մօտ հաղորդելու համար հայերի բռնի տեղահանութեան հրամանը, տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը, որը արձանագրուած է Բատի պէյի 1918 թ. Դեկտեմբերին ռազմական ատեանին տուած վկայութեան մէջ.

«Վրայ հասաւ Աթիֆ պէյ եւ ինձի հաղորդեց հայերու տեղահանութեան, կոտորածի եւ բնաջնջման վերաբերեալ՝ ներքին գործերու նախարարին բերանացի հրամանը. եւ ես իրեն՝ Աթիֆ պէյին ըսի. «Ո՛չ, Աթիֆ պէյ, ես կառավարիչ եմ, ոչ թէ չարագործ-մարդասպան: Կը թողում իմ աթոռս. դուն տեղս եկուր, եւ գործադրէ կոտորածի հրամանը»:[2]

Իսկ Հալէպի նահանգապետ Ջելալ պէյը նոյն վիճակի մէջ գտնուելով ասել է.

«Ես այս նահանգի նահանգապետն եմ եւ չեմ կարող նրա դահիճը դառնալ»:

1919 թուականին մեծ վէզիր Դամատ Ֆերիդ փաշան դատապարտել է երիտթուրքերի կառավարութեան գործադրած յանցագործ ծրագիրը, գտնելով, որ հայերի կոտորածները ծնունդ չեն եղել ցեղային բախումների եւ կամ կրօնական մոլեռանդութեան: «Ես իմ առջեւ նպատակ եմ դնում փաստերը ձեռքիս ցոյց տալ ամբողջ աշխարհին, թէ ո՞ւմ վրայ է ընկնում իսկական պատասխանատուութիւնը այդ սարսափելի յանցագործութիւնների համար»,-[3] յայտարարել է նա:

Տեղի տալով բողոքի այս ուժեղ հոսանքին եւ ձգտելով սահմանազատուել երիտթուրքերի վարկաբեկուած վարչակարգից, 1918 թ. Նոյեմբերի 4-ին, Մուդրոսի զինադադարից անմիջապէս յետոյ, Ահմեդ Իզզեթ փաշայի գլխաւորութեամբ կազմուած նոր կաբինետը որոշում է կայացնում՝ Օսմանեան կայսրութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ ներքաշելու եւ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին, ինչպէս նաեւ՝ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամներին: Այնուհետեւ, 1918թ. Դեկտեմբեր 16-ի որոշումով կազմ-

ւում են հարցաքննիչ յանձնախմբեր (գլխաւոր նախագահն էր Անքարայի նախկին վալի Մազհար պէյը), որոնք սկսում են հաւաքել արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտօնական գրութիւններ, հրահանգներ եւ հրամաններ, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւններ: Օսմանեան կայսրութեան նահանգները բաժանւում են 10 դատաքննչական շրջանների, իւրաքանչիւր շրջանի համար նշանակւում են դատախազներ, հարցաքննիչ դատաւորներ, եւ քարտուղարներ: Միեւնոյն ժամանակ մամուլը լայն աշխատանք է ծաւալում յանցագործներին բացայայտելու եւ դատաքննութեան յանձնելու կապակցութեամբ:

Ձերբակալւում են երիտթուրքական մի շարք մինիստրներ ու կուսակցութեան ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազօրներ, կուսակալներ, զինուորականներ եւ այլ պաշտօնատար անձինք: Սակայն հայկական կոտորածների անմիջական մտայղացողներն ու կազմակերպիչները հասցրել էին դիմել փախուստի՝ ապաստան գտնելով Գերմանիայում:

1919 թուականի Յունուարի 8-ին Կ. Պոլսում կազմւում են Առաջին, Երկրորդ եւ Երրորդ ռազմական արտակարգ ատեաններ: Օրէնքը յանցագործներին թէեւ նախատեսում էր դատել ոճրի գործադրուած վայրում, սակայն 1919 թ. Փետրուարի 5-ին, Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատեանը Եոզղաթի տեղահանութեան եւ կոտորածի յանցագործների դատավարութեան առաջին իր նիստում յատուկ որոշում է կայացնում մեղադրեալներին Կ. Պոլսում դատելու մասին:

1919 թ. Մարտի 8-ին, երբ ընդհանուր տեսքի էին բերուած մեղադրական փաստաթղթերը, սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդէտտինի (1861-1922) հրամանագրով երիտթուրքական կառավարութեան ղեկավարներն ու «Միութիւն եւ առաջադիմութիւն» (Ittihat ve Terakki) կուսակցութեան պարագլուխները յանձնուեցին Ստամպուլի ռազմական արտակարգ ատեանի քննութեան: Այդ դատավարութիւնների արձանագրութիւններն ու որոշումները շատ քիչ տպաքանակով հրատարակուեցին թուրքական պաշտօնական «Թաքուիմ-ի վեքայի» թերթի յաւելուածներում (արաբատառ):

Դատաքննութեան նիստերի բոլոր հրատարակութիւնները կրում էին հետեւեալ խորագիրը. «Նորին մեծութիւն փադիշահի 1335 (1919) թ. Մարտի 8-ի կայսերական հրամանով կազմուած ռազմական արտակարգ ատեանի դատավարութեան արձանագրութիւնը»: 1919 թ. դատաքննութիւններն անցկացնող յանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Զէքի փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա փաշա, գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա, գնդապետ Բէյնեք Ֆերդի պէյ: 1920 թ. սկզբին կազմուած ռազմական Առաջին արտակարգ ատեանի յանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-մայոր Էսադ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Իհսան փաշա, գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա, գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա, գնդապետ Սուլէյման Շաքիր պէյ:

Երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների դատավարութիւնը սկսւում է 1919 թ. Ապրիլի 28-ին Կ. Պոլսում եւ ընդհատումներով տեւում մինչեւ Յունիսի 26-ը: Մայիս ամսին տեղի ունեցած 6 նիստերի ընթացքում հիմնականում հարցաքննութեան են ենթարկւում «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամները, մեծ վէզիր Սայիդ Հալիմ փաշան եւ մի քանի մինիստրներ: Սակայն անբացատրելի պարագաներով Մայիսի 28-ին անգլիական հրամանատարութեան կողմից 77 հոգի բանտից աքսորւում են Մալթա կղզի եւ ընդհատւում է դատաքննութիւնը: Յունիս ամսին մեղադրական նոր ապացոյցների հիման վրայ շարունակւում է դատաքննութիւնը: Յունիսեան դատաքննութեան 7 նիստերում լսւում են պետական պաշտօնական անձանց՝ փոստի եւ հեռագրական մինիստր Հիւսէյն Հաշիմ պէյի, սենատի նախագահ Ռիֆաթ պէյի, նաեւ երկրի հոգեւոր առաջնորդներ (շէյխ ուլ-իսլամներ) Էսադ, Հայրի եւ Մուսա Քեազիմ էֆէնտիների դատաքննութիւնը: Դատավճիռը կայացւում է 1919 թ. Յուլիսի 5-ին:

Այս դատաքննութիւնների ընթացքում, հեռակայ կարգով մեղադրւում են 11, իսկ դատավարութեանը ներկայ 20 կուսակցական եւ պետական բարձրաստիճան գործիչներ:

Ըստ դատաքննութեան կարգի, յանձնաժողովի նախագահ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազմ փաշան առաջին հերթին հաստատում է մեղադրեալների ինքնութիւնը, ինչպէս նաեւ նրանց դատապաշտպանների առկայութեան հարցը: Միեւնոյն ժամանակ յայտարարում է, որ ռազմական արտակարգ ատեաններում մեղադրեալների պաշտպանութեան համար օրէնքը չի նախատեսում դատավարութեան ընթացքում դատապաշտպանների ներկայութիւնը: Դատական քարտուղար Շեֆիք պէյը ընթերցում է մեղադրական եզրակացութիւնը: Միեւնոյն ժամանակ քրէական օրէնսգրքի 372-րդ յօդուածի հիման վրայ տրւում է գլխաւոր դատախազ Մուստաֆա Նազմի փաշայի հաւանութիւնը բացականերին հեռակայ կարգով դատելու մասին: Մուստաֆա Նազմի փաշան, նկատի ունենալով նաեւ թէ՛ դատասկզբում եւ թէ՛ ընթացքում դատապաշտպանների առարկութիւններն այն մասին, որ «մինիստրների եւ այլ պետական բարձր պաշտօնեաների հետ առնչուող դատական հարցերը քննարկման են ենթակայ ոչ թէ ռազմական արտակարգ ատեանում, այլ գերագոյն դատարանում», իր ելոյթում նշում է, որ մեղադրական եզրակացութեան մէջ թուարկուած յանցագործութիւնները կատարուել են ոչ թէ կառավարութեան անունից, այլ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի ու նրա պլենումների որոշումներից ելնելով:

Առաջին եւ յաջորդ մեղադրական եզրակացութիւններում բերուած փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները վկայում են, որ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնոյթ չեն կրել, այլ եղել են կանխամտածուած եւ

իրականացուել են բացարձակապէս կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ, յատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով:

Մեղադրական եզրակացութիւններում եւ դատական նիստերի ընթացքում հիմնական շեշտը դրւում է արեւմտահայութեան կոտորածի վրայ:

Կովկասեան ճակատի երրորդ բանակի նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ Վէհիբ փաշան դատաքննութեանը ներկայացրած իր վկայութեան մէջ այդ մասին յայտնում է, որ հայերի բնաջնջման եւ ունեցուածքի կողոպտման հարցը վճռուել է «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհէդդին Շաքիր պէյն է:[4]

Իսկ ներքին գործերի մինիստրութեան յատուկ գրասենեակի պետ Իհսան պէյը նոյնպէս վկայում է, որ երբ ինքը Քիլիսի քայմաքամն էր, Ստամպուլից Հալէպ գործուղուած Արգուլլահաղ Նուրի պէյը յայտարարել է, որ «հայերի տեղահանման հիմնական նպատակը նրանց ոչնչացումն է», որ ինքն այդ հարցով կապի մէջ մտնելով Թալեաթ պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորելու հրաման, որ նա (Թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկութիւնը:[5]

Դատավարութեան 2-րդ, 5-րդ եւ 6-րդ նիստերում հարցաքննութեան է ենթարկւում արեւմտահայութեան կոտորածն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ն (յատուկ կազմակերպութիւն), որը կեանքի էր կոչուել «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների կողմից՝ յատուկ որոշմամբ: Դատաքննութիւնը բացայայտում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի յանցագործ գործունէութեանը մասնակցութիւն են ունեցել կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղար Միդհատ Շիւքրի պէյը, անդամներ՝ Բեհէդդին Շաքիրը, Դոկտ. Նազիմը, Ռիզա պէյը, Անքարայի պատգամաւոր Աթիֆ պէյը, հանրակրթական մինիստր Շիւքրի պէյը, մէջլիսի նախագահ Խալիլը, հասարակական անվտանգութեան մինիստր Ազիզ պէյը, Կ. Պոլսի պարետ Ջեվադը: Յանցագործներին ղեկավարել է ներքին գործերի մինիստր Թալեաթը:

«Թեշքիլաթ-ը մահսուսէ» անուան տակ գործել է երկու գաղտնի կազմակերպութիւն: Մէկը եղել է զինուորական կազմակերպութիւն եւ ստեղծուել է ռազմական մինիստրութեան հրամանով: Ղեկավարն է եղել Սուլէյման Ասքերի պէյը: Կենտրոնը գտնուել է Կ. Պոլսում: Դատավարութեան 5-րդ նիստի ժամանակ մեղադրեալ Աթիֆ պէյը խոստովանում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի համար յատուկ պաշտօնատեղի է եղել Նուրի Օսմանիէում, «Թասֆիր-ի Էֆքեար» թերթի տպարանի դիմաց վարձուած թիւ 32 տունը:[6] Այս կազմակերպութեան խնդիրն է եղել կովկասեան մահմեդական ժողովուրդների մէջ Ռուսաստանի դէմ խռովութիւն սերմանելու նպատակով հաւաքագրել Կովկասի տարածքին ծանօթ, տեղի ժողովուրդների լեզուներին տիրապետող մարդկանց եւ խմբերով, գաղտ-

նի ուղարկել սահմանից այն կողմ:

Երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն գտնուել է ներքին գործերի մինիստրութեան անմիջական տրամադրութեան տակ, եւ Բեհէդդին Շաքիրի ղեկավարութեամբ իրականացրել է արեւմտահայութեան տեղահանութիւնն ու կոտորածը: Դա հաստատւում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ Ռիզա պէյի ցուցմունքով: «Իմ կարծիքով,- նշում է նա,- ռազմական մինիստրութեան հրամանով կազմակերպուած «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն գործել է ռազմաճակատում եւ ընդհանրապէս հակառակորդի գտնուած շրջաններում: Միւս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ն ստեղծուել է, որպէսզի մի շարք վիլայէթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանութիւնը»:[7]

Հետաքննութիւնների նիւթերից պարզւում է նաեւ, որ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ին վերաբերող կարեւոր գրութիւնները մեծ մասամբ ոչնչացուել են: Դրանում հիմնականում մեղաւոր է Դոկտ. Նազըմը: Նա կոմիտէի գործարքներն ու կատարուած յանցագործութիւնները թաքցնելու նպատակով փախցրել է կուսակցութեան արխիւը: Սակայն գործադրուած բոլոր զգուշութիւններով հանդերձ (յաճախ հրահանգները տրուել են բանաւոր) ռազմական արտակարգ ատեանի ձեռքն են անցել բաւականաչափ թուով հեռագրեր, նամակներ եւ այլ գրաւոր փաստաթղթեր, որոնք անվիճելիօրէն հաստատում են հայերի տեղահանութեան եւ ոչնչացման ընթացքում «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի, ներքին գործերի մինիստրութեան եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի միջեւ եղած համագործակցութիւնը, ինչպէս նաեւ ցոյց են տալիս, թէ ինչպիսի ակտիւ գործունէութիւն են ծաւալել շրջանային պատասխանատու քարտուղարները «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի համար քրէական յանցագործներ հաւաքագրելու գործում:

Հարցաքննութեան ընթացքում մեղադրեալներն անընդհատ փորձել են չեղուել ճշգրիտ պատասխաններից: Խոստովանութիւնից խուսափելու համար նրանք յաճախ օգտագործել են «չեմ կարողանում յիշել», «յիշողութիւնս թոյլ է» արտայայտութիւնները: Այնուհանդերձ, խաչաձեւ հարցաքննութեան ժամանակ, որպէս մեղադրական ապացոյց բերուած հեռագրերի, նամակների եւ վկայութիւնների հիման վրայ լիովին բացայայտւում է իսկութիւնը, այն է՝ որ տեղահանութիւնն ու կոտորածը հաւանութեան են արժանացել կենտրոնական կոմիտէի գաղտնի նիստերից մէկում՝ ձայների մեծամասնութեամբ:

Դատարանը պաշտօնատար անձանց յատկապէս մեղաւոր է ճանաչում, որ իրազեկ լինելով կոտորածների եւ այլ բռնութիւնների մասին, ո՛չ մի գործնական քայլի չեն դիմել դրանք կանխելու գործում: Ընդհակառակը, նպաստել են, որ շարունակուի տեղի ունեցող այդ ողբերգութիւնը: Այսպէս, շէյխ ուլ-իսլամ Մուսա Քեազիմ էֆէնտին, որը որպէս կրօնական առաջնորդ կարող էր մեծ ազդեցութիւն ունենալ այդ վայրագութիւնները խափանելու խնդրում, ո՛չ մի էական քայլի չի դիմել: Նա թէեւ փորձում է

արդարանալ դատարանում, որ ինքը պատասխանատու չէ կառավարութեան անդամների գործադրած յանցագործ արարքների համար, որ մեղաւոր է ներքին գործերի մինիստրութիւնը,[8] սակայն նա խոստովանում է, որ իսլամը եւ կուսակցութիւնը համաձայն մի ամբողջութիւն է եւ կուսակցութեան որոշումները ենթակայ են անյապաղ իրականացման, «որ կուսակցութիւնից դուրս գալը նշանակում է իսլամի կրօնից հրաժարուել»:[9]

1919 թուականի Յուլիսի 5-ին արձակուած դատավճռում շեշտը դրւում է արեւմտահայութեան կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման մանրամասնութիւնների վրայ, նշւում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ կառավարութեան ղեկավարների կողմից սահմանադրութեան ոտնահարման փաստերի մասին: Կարեւոր յանցանշաններից մէկն է համարւում առանց մէջլիսի որոշման Առաջին Համաշխարհային Պատերազմին մասնակցելու խնդիրը, ինչպէս նաեւ առեւտրի եւ յատկապէս պարենային հարցում տեղ գտած չարաշահումներն ու սպեկուլացիան:

Քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45-րդ յօդուածի առաջին կէտով դատարանը մահուան վճիռ է կայացնում Թալեաթի, Էնվէրի, Ջեմալի եւ Նազըմի նկատմամբ, իսկ 45-րդ յօդուածի երկրորդ կէտի եւ 55-րդ յօդուածի վերջին կէտի համաձայն Ջավիտը, Մուսթաֆա Շերեֆը եւ Մուսա Քեազիմը դատապարտւում են 15-ական տարի ժամկէտով աքսորի, իբրեւ թէ բաւարար յանցանշաններ չլինելու պատճառաբանութեամբ, ազատ են արձակւում սենատի նախկին նախագահ Ռիֆաթ պէյը, փոստի եւ հեռագրատան մինիստր Հաչիմ պէյը: Այս վերջին երկուսի նկատմամբ դատարանի վճռին յանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են եղել համաձայն: Դատավճռում մոռացութեան են մատնուած դաշնակիցների հովանաւորութեամբ կալանատնից Մալթա կղզի աքսորուած յանցագործները:

«Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների եւ այլ պաշտօնատար անձանց դատաքննութեան նիստերը տեղի են ունենում 1919 թուականի Յունիսի 21-ին, 23-ին եւ 28-ին: Դատավճիռը կայացւում է շատ ուշ, այն էլ՝ Կ. Պոլսի ռազմական Առաջին արտակարգ ատեանի յանձնախմբի կողմից՝ 1920 թ. Յունուարի 8-ին:[10] Մեղադրական եզրակացութեան եւ դատավճռի տուեալներով ամբաստանւում էին 36 անձինք:

1919 թ. Յունիսի 19-ի թուագրութեամբ մեղադրական եզրակացութեան մէջ մատնանշւում է, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունէութեան ընթացքում, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ կառավարութեան կողմից ստացուած բանաւոր եւ գրաւոր գաղտնի հրամանների համաձայն, անօրինական կերպով միջամտել են կառավարութեան գործերին եւ մասնակցել Թալեաթ փաշայի եւ նրա գործընկերների կատարած յանցագործութիւններին:

Պատասխանատու քարտուղարների հարցաքննութեան ընթացքում հիմնական շեշտը նոյնպէս դրւում է արեւմտահայութեան տեղահանու-

թեան, կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման հարցի վրայ։ Էտիրնէի պատասխանատու քարտուղարն ու միւս մեղադրալներն իրենց յանցանքը թեթեւացնելու համար աշխատել են արդարանալու ուղիներ որոնել, որ տեղահանութիւնը կատարուել է իբրեւ թէ օրէնքի հիման վրայ եւ կառավարութեան կարգադրութեամբ։

Էտիրնէի պատասխանատու քարտուղար Ապտուլ Ղանի պէյի հարցաքննութեան ընթացքում պարզւում է, որ տեղահանութեան երկրորդ օրը տեղի հայ երեւելի մարդիկ գնում են նրա մօտ եւ յայտնում, որ հայերի մի մասին աքսորել են գիշերուայ ընթացքում եւ պաղատագին խնդրում են, որպէսզի կանխուի իրենց աքսորը։ Ապտուլ Ղանի պէյը սրանց վերցնում տանում է նահանգապետի մօտ եւ իբր թէ ասում է, որ սրանք լաւ մարդիկ են եւ նոյնիսկ 1912–13 թթ. պալքանեան պատերազմի ընթացքում օգնել են թուրքերին։ Նահանգապետը պատասխանում է, որ «ես էլ գիտեմ, որ լաւ մարդիկ են, բայց հրամանը խիստ է եւ վերաբերում է բոլորին»։[11] Եզրակացութիւնը պարզ է. հայերը պիտի տեղահանուէին եւ բնաջնջուէին ամբողջ Օսմանեան կայսրութիւնում։

Իսկ Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար Պեսիմ Զուհդի պէյը եւ միւսները երբ հարցաքննութեան ընթացքում փորձում են արդարանալ, թէ տեղահանութիւնը իբրեւ թէ կատարուել է օրէնքի հիման վրայ եւ կառավարութեան կարգադրութեամբ, յանձնաժողովի նախագահ Մուսթաֆա Նազըմ փաշան, հերքելով նրանց կեղծ ցուցմունքները նշում է.

«Օրէնքի մէջ ասուած է, որ տեղահանութիւնը կատարուելու է ռազմական տեսանկիւնից անհրաժեշտ եղած վայրերում, մի՞թէ դուք չէիք նկատում, որ ձեզ մօտ դրա անհրաժեշտութիւնը չկար։ Օրէնքով կատարուած գործողութիւնների համար ոչ մէկին պատասխանատուութեան չենք ենթարկում։ Իրականութիւնը այն է, որ տեղահանութեան ֆօղի տակ կոտորած են սարքել։ (Ընդգծումը մերն է. Ա.Փ.) Ահա այդ արարքի համար է, որ ձեզ պատասխանատուութեան ենք ենթարկում»։[12]

Իմիջիայլոց կուսակցութեան կենտրոնական կոմիտէի մի շարք անդամների հարցաքննութեան ընթացքում, մի քանիսը իրենց միամիտ ձեւացնելով երբ պնդում են թէ իրենք տեղեակ չեն եղել կոտորածի մասին, ռազմական ատեանի նախագահ Մուսթաֆա փաշան փաստերով ապացուցում է, որ նրանք շատ լաւ էլ տեղեակ են եղել։ Ի վերջոյ տեղի տալով պատճառաբանում են, որ ուշ են իմացել այդ մասին։ Մուսթաֆա փաշան նրանց կեղծիքը բացայայտելով ասում է, որ «իրազեկ դառնալուց յետոյ էլ դուք ոչ մի քայլի չէք դիմել դադարեցնելու կոտորածները»։

1920 թ. Յունուարի 8-ի դատավճռում նշում է, որ պատասխանատու քարտուղարներից եւ լիազօրներից մի քանիսը օժանդակել են կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեանը եւ իրենց մասնաճիւղերում հաւաքագրած մարդասպանների եւ այլ քրէական յանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը եւ նրանց ունեցուածքի կողոպուտը։

Քրէական օրէնսդրութեան 45-րդ յօդուածի եւ 55-րդ յօդուածի վերջին կէտի համաձայն Սինոպի պատգամաւոր Հասան Ֆեհմի պէյը, Էտիրնէի

պատասխանատու քարտուղար Ապտիլ Ղանի պէյը, Բալուի պատասխանատու քարտուղար Միզհատ պէյը դատապարտւում են տասը տարուց աւելի, իսկ միւսները մի քանի տարի ժամկէտով բանտարկութեան։ Այս դատավճռում եւս մոռացութեան են մատնւում Մալթա կղզի աքսորուած յանցագործները։

Դեռեւս, վերոյիշեալ դատավարութիւններից առաջ Ստամպուլի ռազմական արտակարգ ատեանը մանրամասն հետաքննութիւն էր կատարում նաեւ գաւառներում տեղի ունեցած տեղահանութեան եւ կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ։ Առաջինը լսուեց Եոզղաթի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի գլխաւոր յանցաւորներ Եոզղաթի մութասարրիֆի տեղակալ եւ Բողազլեանի քայմաքամ Քեմալ պէյի եւ Եոզղաթի ոստիկանութեան պետ մայոր Թեվֆիկ պէյի կատարած յանցագործութիւնների հարցը։

Եոզղաթը գտնւում էր պատերազմական թատերաբեմից շատ հեռու տարածքում, բայց տեղի հայութիւնը նոյնպէս ենթարկուեց դաժան հալածանքների։

Իմիջիայլոց առաջինը լսուեց Եոզղաթի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի դատավարութիւնը եւ 17 նիստերից յետոյ, 1919 թ. Ապրիլի 8-ին հրապարակւում է դատավճիռը։ Դատարանը միաձայն մեղաւոր ճանաչելով Քեմալ Պէյին, կայսերական քրէական օրէնսգրքի 170 եւ 171-րդ յօդուածների հիման վրայ դատապարտւում է մահուան։ Այն անմիջապէս վաւերացւում է սուլթան Մեհմեդ 4-րդ Վահիդեդինի կողմից։ Այդ դատավճռով առաջինը կախաղան բարձրացուեց Քեմալ պէյը։ Այն տեղի ունեցաւ Ապրիլի 11-ին, Կ. Պոլսի Բայազեդի հրապարակում։ Քեմալ պէյը, այս արիւնարբու յանցագործը, հայութեանը կոտորելու համար ոտքի էր հանել ոչ միայն իր տրամադրութեան տակ գտնուող սանջակի թուրքերին, այլեւ կոչ էր արել համայն մահմետականներին ոտքի կանգնել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու համար։

Տրապիզոնի հայերի տեղահանութեանը եւ կոտորածին վերաբերող 1919 թուականի Մայիսի 22-ի դատավճռով մեղադրւում են 8 յանցագործներ։ Դատավճռում նշում է. «Մեղադրեալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի պէյը, «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ պէյը սերտօրէն համագործակցել են գաղտնի հրահանգները իրականացնելու գործում։ Արտաքուստ նրանք իբրեւ թէ գործել են տեղահանութեան օրէնքի համաձայն, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների իրականացման ժամանակ նրանք հանդէս են բերել անձնական գործուն միջոցներ՝ հայերին կոտորելու խնդրում։[13]

Տրապիզոնի դատավճռում մանրամասն խօսւում է նաեւ հայերի լքեալ գոյքի կողոպտման մասին։ Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի էֆէնտիին իբրեւ թէ յանձնարարուած է եղել տեղահանուած հայերի լքեալ գոյքի հաւաքման, գրանցման եւ պահպանման հարցը։ Մինչդեռ, նրա հրամանով, լքեալ գոյքը յափշտակուելով, մատնուել է կատարեալ կորստի։

Գործադրուած ծանր յանցագործութիւնների համար դատարանը վերոյիշեալ 170, 171-րդ յօդուածների հիման վրայ հեռակայ կարգով մահուան է դատապարտել Ջեմալ Ազմի եւ Նայիլ պէյերին։ Դատարանում ներկայ Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմետ Ալի պէյը դատապարտուում է տասը տարի ժամկէտով տաժանակիր աքսորի, իսկ միւս մեղադրեալները՝ 1-2 տարուայ բանտարկութեան։

Յայտնի է, որ պատերազմի ընթացքում երիտթուրքերը մի շարք վայրերում դատաստան են տեսել նաեւ արաբների, ասորիների եւ յատկապէս յոյների նկատմամբ։ Բիւյիւք Տերէի (Կ. Պոլսի արուարձաններից) ոչ մահմետական բնակչութեան տեղահանութեան ժամանակ հայերի հետ ծանր հալածանքների են ենթարկուել նաեւ յոյները։

1919 թուականի Մայիսի 24-ին Բիւյիւք Տերէի տեղահանութեանը վերաբերող դատավճռում նշուում է, որ տուեալ շրջանի ղեկավարները բնակչութեան տեղահանութեան ժամանակ, ոտնահարելով մարդկային ամենատարրական իրաւունքները, իրենց անձնական շահերն ու ստոր մտադրութիւնները իրականացնելու համար բնակչութեանը տրամադրել են պատրաստութեան կարճ ժամանակամիջոց, որպէսզի նրանք ստիպուած լինեն թողնել իրենց ունեցուածքն ամբողջութեամբ եւ հեռանալ։

Բիւյիւք Տերէի դատավճռով եւս բոլոր մեղադրեալները դատապարտուում են մի քանի տարի ժամկէտներով բանտարկութեան։[14]

Դեռեւս երիտթուրքերի կառավարութեան պարագլուխների դատավարութեան ժամանակ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ եւ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի նախագահ Բեհաէդդին Շաքիր պէյը հեռակայ կարգով մեղադրւում է արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածների մտայղացման ու հիմնական կազմակերպիչներից մէկը լինելու ծանր յանցանքով։ Բեհաէդդին Շաքիր պէյը եւ կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ պէյը իրենց կատարած ծանր յանցագործութիւնների համար դատապարտում են Խարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող 1920 թ. Յունուարի 13-ի դատավճռով։ Բեհաէդդին Շաքիր պէյը հեռակայ կարգով դատապարտուեց մահուան, իսկ Ռեսնելի Նազըմ պէյը՝ 15 տարի տաժանակիր աքսորի։ Հետաքրքիր է, որ դատավճռի վերջում դատական ատեանի երեք անդամներ յատուկ նշում են կատարել, որ Ռեսնելի Նազըմ պէյը նոյն աստիճանի յանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիրը եւ պահանջել են նոյնպէս մահավճիռ կայացնել նրա նկատմամբ։

Բնականաբար դատաքննութիւնների ընթացքում մեղադրական ապացոյցների շարքում կարեւոր փաստացի ապացոյցներ էին հայերի կոտորածների կապակցութեամբ պաշտօնատար անձանց կողմից առաքուած հեռագրերը։ Ահա դրանցից մի քանիսը.

Բեհաէդդին Շաքիր պէյի Էրզրումից Անթալիայի մութասարրիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշուած է.

«Էրզրումի, Վանի, Պիթլիսի, Տիարպէքիրի, Սվազի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մուսուլի եւ Տէր Զօրի կողմերը։ Իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում։[15]

1915 թ. Մայիսի 4-ի թուագրութիւնը կրող, Էրզրումից «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ պէյին ուղղուած ծածկագիր հեռագրով Բեհաէդդին Շաքիրը հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրէք, այդտեղից ուղարկուող հայերին զտո՞ւմ էք, թէ՞ ոչ։ Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն էք յայտնել, ոչնչացնում է՞ք, թէ՞ ճամբու էք դնում»։

«Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մէջ գտնուող ծածկագիր հեռագրերից մէկում Էրզրումի վալի Մունիր պէյը յայտնում է.

«Քըզիի ճանապարհով Էրզրումից ուղարկուած հարուստ հայերի քարաւանները, յարձակման ենթարկուելով Բեհաէդդին Շաքիր պէյի կազմած հրոսակախմբերի եւ տեսիմցիների կողմից, կոտորուել են, իսկ նրանց ունեցուածքը կողոպտուել»։[16]

Իսկ ընդունուած բոլոր մեղադրական եզրակացութիւններում, ռազմական արտակարգ ատեանի յանձնաժողովները չեչտը դնում են արեւմտահայութեան կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման մանրամասնութիւնների վրայ։ Լիովին բացայայտուում է, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականօրէն իրականացուել են «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի արիւնոտ ձեռքերով։

Այդ կապակցութեամբ ահա թէ ինչ է մատնանշում Տրապիզոնի հայերի տեղահանութեան ու կոտորածի դատավարութեան դատավճռում.

«Մի շարք յանցագործ, անառակ մարդկանցից եւ նոյն մակարդակի մի քանի ժանտարմաներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրեւ թէ ուղեկցելու էին տեղահանուած հայերի քարաւանները։ Մինչդեռ չտալ տեղահանութեան ենթարկուած եւ պաշտպանութեան միջոցներից զուրկ հայերի քարաւանները քաղաքից հեռացուելուց յետոյ, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից եւ վերոյիշեալ յանցագործներից կազմուած չեթեների հրոսակախմբերը յարձակուելով՝ կողոպտել են նրանց իրերը եւ այնուհետեւ աներեւակայելի դաժանութեամբ սպաննել եւ բնաջնջել բոլորին։ Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով՝ յափշտակել են նրանց զարդեղէններն ու շորերը եւ ենթարկել բռնաբարութեան։ Այնուհետեւ ամիսներով ճանապարհներին քարշ գալուց յետոյ, շատերը մահացել են՝ բոլորովին հիւծուած, տառապալի ուղեւորութիւնից, սովից ու ծարաւից։ Իսկ ողջ մնացածներին Էրզինջանի ճանապարհով ուղարկել են հեռաւոր վայրեր»։[17]

Այսպիսով, դատավարութեան նիւթերը որոշակի պատկերացում են տալիս արեւմտահայութեան տեղահանութեան եւ կոտորածների կազմակերպման ու իրագործման մասին։ Դատավարութիւնը իրականում չլուծեց եւ չէր էլ կարող լուծել մէկուկէս միլիոնից աւելի նահատակուած հայերի արեան եւ միլիառդների հասնող լքեալ գոյքի նիւթական արժէքի հատուցումը։ Հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից՝ Արեւմտեան Հայաստանից։

Դատաւորները, իհարկէ, ոչ բոլոր դէպքերում ցուցաբերեցին անհրաժեշտ հետեւողականութիւն: Նրանցից շատերը, կապուած լինելով երիտթուրքերի հետ, յաճախ հակուած էին չխորանալ կատարուած փաստերի մէջ եւ չընդունել խիստ որոշումներ: Դատաքննութեան ընթացքում թոյլ են տրուել թերացումներ: Օրինակ՝ շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարութիւնը տեղի է ունեցել 1919 թ. Յունիս ամսին, մինչդեռ դատավճիռը ձգձգուելով հաստատուել է 1920 թ. Յունուարին: Եթէ հեռակայ կարգով դատի տրուած մեղադրեալների նկատմամբ մահուան դատավճիռ կայացնելու խնդրում տարակուսանք չի առաջանում, ապա ներկայ գտնուող յանցագործների հանդէպ պատիժ սահմանելու հարցում հանդէս է բերուել աւելորդ հանդուրժողականութիւն:

Հարկ է նշել, որ այդ օրերին իթթիհատականները զանազան նենգ որոգայթներ են լարում խանգարելու համար դատավարութեան բնականոն ընթացքը: Յատկապէս ջանացել են ազդել ռազմական ատեանի անդամների վրայ՝ թեթեւացնելու մեղադրեալների յանցաքը: Կ. Պոլսում լոյս են տեսնում մի քանի կեղծ հրապարակումներ, որոնց հեղինակները փորձում են ապացուցել, որ հայերն են իբրեւ բռնութիւններ գործադրել թուրքերի նկատմամբ:[18]

Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամների եւ երիտթուրքական պետական գործիչների դատավարութեան վերջում, գլխաւոր դատախազի օգնական Ռեշադ պէյը իր ընդարձակ ելոյթում քաղաքական նենգ նպատակներով կանգ է առել հայ-թուրքական յարաբերութիւնների անցեալի իրադարձութիւնների վրայ, մեղադրել հայերին իրենց ազատագրական պայքարի համար՝ յայտարարելով, որ «Ֆրանսիական բուրժուական մեծ յեղափոխութիւնից յետոյ, երբ Յունաստանը անկախութիւն ձեռք բերեց, հայերը մի ազատ Հայաստան հիմնելու նպատակով սկսեցին ապստամբական շարժումներ ծաւալել օսմանեան պետութեան դէմ, առանց մտածելու, որ Օսմանեան կայսրութեան ոչ մի տարածքում հայերը մահմետականութեան հետ համեմատած մեծամասնութիւն չեն կազմել:[19] Ռեշադ պէյը դեմագոգիկ կերպով անտեսում է այն հանգամանքը, որ հայերն ապրում էին իրենց հայրենիքում:

Ռեշադ պէյը 1909 թուականի Ատանայի ողբերգական դէպքերը նոյնպէս հետեւանք է համարում հայերի ապստամբական շարժման: Իսկ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում իբր հայերը թիկունքից սպառնացել են թուրքական բանակի գործողութիւններին: Այսպիսի կեղծ յայտարարութիւններից յետոյ, այնուհանդերձ, Ռեշադ պէյը իր ելոյթի վերջում ստիպուած խոստովանում է, որ հայերի նկատմամբ գործադրուած տեղահանութեան օրէնքը ի չարն է գործադրուել, տեղահանութեան է ենթարկուել նոյնիսկ ռազմաճակատից հեռու գտնուող վիլայէթների հայ բնակչութիւնը, եւ գործադրուած բռնութիւնների հետեւանքով տեղի է ունեցել այդ ողբերգութիւնը:

Մեր օրերում թուրքական կառավարող շրջաններն ու թուրք պատմաբանները յամառօրէն շարունակում են մերժել արեւմտահայութեան հանդէպ կատարուած ցեղասպանութիւնը եւ ընդհանրապէս ձգտում են զանազան միջոցներով եւ հակագիտական հրատարակութիւններով նենգափոխել հայ ժողովրդի պատմութիւնը: Նրանց կարծիքով «հայ-թուրքական բախումները» իբր առաջ են եկել մեծ պետութիւնների գործադրած խարդաւանքների հետեւանքով, որ 1915–1916 թթ. հայերն են բռնութիւն գործադրել թուրքերի նկատմամբ: Իսկ 1919 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքերի պարագլուխների դատաքննութիւնը համարում են իթթիհատականների եւ իթիլաֆականների[20] միջեւ գոյութիւն ունեցող միջկուսակցական ոխակալութեան արդիւնք:[21]

Հակառակ թուրք կեղծարարների գործադրած չարամիտ ջանքերի, համաշխարհային հասարակական կարծիքը դատապարտել եւ դատապարտում է հայ ժողովրդի նկատմամբ կատարուած յանցագործութիւնը: Բնականաբար, պատերազմի աւարտից յետոյ երիտթուրքերի պարագլուխների դատավարութիւնը խոշոր երեւոյթ էր արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանութիւնը համայն մարդկութեան առաջ բացայայտելու տեսանկիւնից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Զ. Ա. Կիրակոսեան, երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երեւան 1983, էջ 174:

2. Եղզոթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, պատրաստեց Գրիկէր, Նիւ Եորք, 1980, էջ 119:

3. Լոյտ Ճորճ, ճշմարտութիւնը հաշտութեան պայմանագրերի մասին, հատ. 2, Մոսկուա, 1957, էջ 200 (ռուսերէն):

4. Takvim-i vekayi, Յունուար 13, 1920, թիւ 3771, էջ 246 (արաբատառ):

5. Takvim-i vekayi, Ապրիլ 27, 1919, թիւ 3540, էջ 5:

6. Takvim-i vekayi, Մայիս 12, 1919, թիւ 3554, էջ 85:

7. Takvim-i vekayi, Մայիս 12, 1919, թիւ 3554, էջ 88:

8. Takvim-i vekayi, Յունիս 4, 1919, թիւ 3573, էջ 148:

9. Takvim-i vekayi, Յուլիս 5, 1919, թիւ 3604, էջ 219:

10. 1920 թ. կազմուած ռազմական Առաջին արտակարգ ատեանի յանձնաժողովի անդամներն էին՝ գեներալ-մայոր Էսատ փաշա (նախագահ), գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմի փաշա, գեներալ-մայոր *Իսմայիլ Հաքքը* փաշա, գնդապետ՝ Սուլէյման Շաֆիր պէյ:

11. Takvim-i vekayi, Յունիս 23, 1919, թիւ 3589:

12. Takvim-i vekayi, Յունիս 28, 1919, թիւ 3596:

13. Takvim-i vekayi, Մայիս 22, 1919, թիւ 3616:

14. Takvim-i vekayi, Մայիս 2, 1919, թիւ 3618:

15. Takvim-i vekayi, Ապրիլ 27, 1919, թիւ 3540:

16. Takvim-i vekayi, Յունուար 13, 1920, թիւ 3771:

17. Takvim-i vekayi, Մայիս 22, 1919, թիւ 3616:

18· Տե՛ս Documents relatifs aux atrocites commises par armeniens sur population musulmane. Publication du Congres National Constantinople, 1919.

19· Takvim-i vekayi, Ցունիս 25, 1919, թիւ 3594:

20· Խօսքը վերաբերում է «Հիւրիյէթ վէ իթիլեաֆ» (Ազատութիւն եւ համաձայնութիւն) կուսակցութեանը:

21· Հայկական հարցը թուրքական մամուլի էջերում (1982–1983), գիտա-ինֆորմացիոն տեղեկատու Հայաստանի գիտութիւնների Ակադեմիայի, 1984, թիւ 5, էջ 48–49, (ռուսերէն):

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արեւմտահայութեան զանգուածային կոտորածների եւ յատկապէս 1915 թ· երիտթուրքական կառավարութեան կողմից կազմակերպուած եւ գործադրուած Մեծ Եղեռնի վերաբերեալ առ այսօր հրատարակուել են բազմաթիւ լեզուներով ուսումնասիրութիւններ, վաւերագրերի ժողովածուներ, ականատեսների վկայութիւններ, վերապրողների յուշագրեր, տարբեր երկրների դեսպանութիւնների պաշտօնական զեկուցագրեր, եւայլն:

Իր ժամանակին եւ յետագայում տարբեր ազգութիւնների պատկանող պատմաբաններ, հրապարակախօսներ, լրագրողներ, ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան գործիչներ իրենց ելոյթներում, յօդուածներում եւ աշխատութիւններում ցասումով դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ կատարուած երիտթուրքերի հրէշաւոր չարագործութիւնները, հաւաստի եւ անաչառ գնահատական են տուել հայերի ցեղասպանութեան մասին: Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում այդ մտաւորականների եզրակացութիւններից քաղուած հատուածներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս հայերի ցեղասպանութեան մասին:

Բերուած գնահատականները վճռականօրէն հերքում են ժամանակակից թուրք պատմաբաններին եւ պետական գործիչներին, որոնք աշխատում են քօղարկել եւ խեղաթիւրել դարասկզբին Արեւմտեան Հայաստանում եւ առհասարակ ամբողջ Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանութիւնը: Հակառակ այդ հերքումներին, տուեալ ժամանակուայ թուրք պետական գործիչներից ու պատմաբաններից մի քանիսը իրենց յուշագրութիւններում եւ աշխատութիւններում անդրադարձել են հայկական կոտորածներին: Հակառակ իրենց ազգայնամոլական դիրքորոշումներին, ինչ որ տեղ

նրանց գրիչը չի խուսափել նշելու այն ողբերգութիւնը, որ տեղի ունեցաւ Արտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանում եւ երիտթուրքերի իշխանութեան օրօք: Նոյնիսկ հայերի ցեղասպանութեան անմիջական մեղսակիցները խոստովանել են իրենց կատարած յանցագործութիւնը: Այդ առումով որոշ հատուածներ բերել ենք նաեւ հայկական կոտորածների կապակցութեամբ արտայայտուած նրանց մտքերից:

Բնականաբար մի յօդուածի շրջանակներում հնարաւոր չէ բոլոր նիւթերը ընդգրկել, քանի որ դրանց թիւը շատ է: Ի հարկէ լայնածաւալ թիւ է կազմում նաեւ տարբեր լեզուներով հրատարակուած մամուլի գնահատականները, որոնք նոյնպէս հաստատում են տեղի ունեցած դաժանութիւնները:

Անկողմնակալութիւնը պահպանելու նկատառումներով այստեղ չենք ընդգրկել հայ մտաւորականների, եղեռնից վերապրողների եւ ընդհանրապէս պետական եւ հասարակական գործիչների յուշերն ու վկայութիւնները:

Որոշ առումով պահպանել ենք բերուած նիւթերի ժամանակագրական կարգը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՃՈՐՃ ՊԱՅՐԸՆ, անգլիացի բանաստեղծ.– Թերեւս դժուար է գտնել որեւէ այլ ազգի կենսագրութիւն, որն առաւել զերծ լինի արատաւորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինութիւնները խաղաղասիրութեան արգասիք են, իսկ թուլութիւնները՝ բռնադատման հետեւանք: Սակայն ինչպէս էլ լինի նրանց ճակատագիրը ապագայում, նրանց հայրենիքը պիտի մնայ աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մէկը: («Սովետական Հայաստան», Ապրիլ 24, 1989):

ՈՒԻԼԻԷՄ ԿԼԱՏՍՈՆ, անգլիացի պետական գործիչ, 1880–1894 թթ. վարչապետ:– Որտեղով էլ որ անցնում էին, արեան լայն ուղիներ էին մնում նրանց հետքերից, եւ որտեղ որ տարածւում էին նրանց տիրոյթները, քաղաքակրթութիւնը ջնջւում էր աշխարհի երեսից: («Խորհրդային Հայաստան» ամսագիր, 1988 Նոյ. 4, էջ 14):

ՎԻՔԹՈՐ ՀԻՒԳՕ, ֆրանսացի գրող.– Բնաջնջւում է մի ամբողջ ժողովուրդ. այս փաստն ունի՞ վկաներ. ամբողջ աշխարհը: («Խորհրդային Հայաստան» ամսագիր, 1988, Նոյ. 4, էջ 14):

ԱՊՏՈՒԼ ՀԱՄԻՏԻ ԲՌՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՖԵԼԻՔՍ ՇԱՌՄՏԱՆ, ֆրանսացի հրապարակախօս:– Մենք չենք կարծում, որ ազգերի պատմութեան նոյնիսկ ամենամռայլ էջերում կարելի է գտնել աւելի սահմռկեցուցիչ փաստեր, քան այն, ինչ երկու տարիէ ի վեր տեղի է ունենում մեր աչքի առաջ: («Սովետական Հայաստան» ամսագիր, 1987, Նոյ. 9, էջ 32, F. Charmetant, Tableau officiel des massacres d'Armenie):

ԹԷՕՏՈՐ ՌՈՒԶՎԵԼԹ, ԱՄՆ-ի նախագահ 1901–1909 թթ.– Քիչ բան է անում մեր երկիրը վայրագութեամբ ու ծաւալով աննախընթաց այն ոճիրների առթիւ, ինչպիսին հայկական կոտորածներն էին: New York Times, Յուն. 12, 1915:

ՍՊԻՐՈՎ Դ.Ա., պուլկար պատմաբան, հրապարակախօս.– Հաւաստի աղբիւրներ վկայում են, որ Փոքր Ասիայի բոլոր հորիզոնականներում եւ ծովափնեայ քաղաքներում որտեղ հայեր կան ենթարկւում են կոտորածի, բռնաբարութեան եւ կողոպուտի: Դեռեւս Իզմիրում, Ռոդոստոյում եւ այլ քաղաքներում հայերի նկատմամբ գործադրուած դաժանութիւնները չի կարելի համեմատել Կ. Պոլսում եղած դէպքերի հետ: Դժբախտ հայ ժողովուրդ. 19-րդ դարի հրաշքում ուր մենք ապրում ենք, ամօթ եւ անարգանք այս դարաշրջանին: Ամօթ անհոգի Եւրոպային, այդ խայտառակ եւ ծաղրալի քաղաքակրթութեան, որին պէտք է ջնջել աշխարհի երեսից: Ինչո՞ւ համար է այդ դաժան ճակատագիրը, ո՞ր ծանր յանցանքների համար է, որ ենթարկւում է ժողովուրդը այդ կեղեքումներին: «Տ.Ա. Սպիրով- Հայերի սոսկալի ջարդը. Հայաստան եւ Սուլթան Ապտուլ Համիտ», Սոֆիա, 1897, էջ 57 (Պուլկարերէն):

ԷՄԻԼ ԴԻԼՈՆ, իրլանդացի լրագրող եւ գիտնական.– Այժմ ապացուցուած է, որ Սասունի կոտորածը (1895) Բարձրագոյն Դրան ներկայացուցիչների կողմից կատարուած միտումնաւոր գործ էր, մի արարք, որը նախապատրաստուած էր խնամքով եւ գործադրուեց անողոքաբար: Չնայած որ այդ սարսափելի ողբերգութիւնը սարսռացրեց ոչ միայն քիւրտ աւազակներին, այլեւ խղճահարութիւն առաջացրեց թուրք զինուորների սրտերում: «Հայերու դրութիւնը Թուրքիայում 1895-ին մինչեւ Մեծ Տէրութիւնների միջամտութիւնը», Մոսկուա, 1896, էջ 332:

ԲԵՌՆՇՏԱՅՆ Է., գերմանացի փիլիսոփայ, հրապարակախօս.– Ս. Բարթողոմիոսի Գիշերաջարդը, Տրոկետայի կոտորածը, 1792-ի, 1848-ի, 1871-ի արիւնահեղ կռիւները, նոյնիսկ Քիոսի, Լիբանանի եւ Պուլկարիայի ջարդերը նսեմանում են սուլթանի պաշտօնեաների հովանաւորութեամբ կամ նրանց հրամանով Հայաստանի մէջ գործուած արիւնռուշտ չուայտութիւնների առջեւ կատարուած մի ժողովրդի դէմ, որի միակ յանցանքն է հակառակուել հարստահարութեան: «Հայկական Տանջանքները եւ Եւրոպան», Բեռնշտայն Էդ., Ժընեւ, 1906, էջ 26:

ԺԱՆ ԺՈՐԵՍ, ֆրանսական եւ միջազգային սոցիալիստական շարժման գործիչ.– Ես ուզում եմ միանալ քաղաքակիրթ աշխարհի մարդկանց զգացումներին եւ բողոքարկել այն նողկալի վարչակարգի դէմ, որի իշխանութեան տակ գտնւում են հայերը, եւ նրանց տեւապէս անպատիժ մնալու դէմ, որոնք պատասխանատու են այդ մեծ յանցագործութեան համար: (Report of the International Conference on the situation in the Near East held in London on 29-th June, 1904, London, 1904, p. 23.

ԵՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ, ռուս գրականագէտ, բանաստեղծ.– 1890 թուականին Էրզրումում տեղի ունեցաւ հայերի կոտորած, ըստ որում հայ բնակչութեան դիմադրութեան փոքր փորձերը թրքական զինուորներն ու չինովնիկները խեղդեցին արեան մէջ: (Եուրի Վեսելովսկի Թրքահայաստանի Ողբերգութիւնը, Մոսկուա, 1915, էջ 18–19): (Ռուսերէն):

ԿՈՎԱԼԵՎՍԿԻ Մ., ռուս պատմաբան, իրաւաբան.– Ինչպէս մատնանշեցինք 1894 եւ 1896 թուականների ջարդերը զանգուածային բնոյթ ընդունեցին եւ գործադրուեցին համարեա թէ ամբողջ կայսրութեան մէջ: 1909 թ. այդ կոտորածները աւելի նուազ ահաւոր չէին, այլ քիչ թէ շատ տեղայնացուած բնոյթ էին կրում: Առաւել ակնառու է Ատանայի կոտորածը, որին զոհ գնացին աւելի քան 20 հազար (ճշգրտուած թիւը 30 հազար) հայեր: (Եւրոպայի Լրաբեր, 1915 Յունիս, էջ 258): (Ռուսերէն):

ԿԱՑԴԱՆՈՎԱ Օ., ռուս ականատեսի նամակից.– 1896 թ. Օգոստոսի 14 եւ 15-ին մենք կանգնած էինք Կ. Պոլսի նաւահանգստում: Մենք ականատես եղանք թուրքերի կողմից կատարուող հայկական կոտորածներին: Այդ ահաւոր տեսարանները այսօր էլ աչքիս առաջ են: Հազիւ թէ հաւատաս այն բանի, որ դա իսկապէս տեղի է ունեցել իրականում եւ ոչ թէ մենք այդ սարսափները տեսել ենք երազում: (Եղբայրական Օգնութիւն Թուրքիայում Տուժած Հայերին, Մոսկուա 1897, էջ 75): (Ռուսերէն):

ՄԱԼԲՈԼՄ ՄԱԲՈԼ, անգլիացի պատմաբան, արեւելագէտ.– 19-րդ դարի վերջին անմիջապէս Թուրքիայում կազմակերպուած հայկական կոտորածները բոլորովին տեղի մոլեռանդութեան բռնկման արդիւնքը չէին, այլ կանխամտածուած քաղաքական դրսեւորումներ, որոնք տեւապէս գործադրւում էին Սուլթանի եւ նրա խորհրդականների հրամաններով: (Անգլիայի Պատասխանատուութիւնը Հայաստանի Հանդէպ. Հայերի Դրութիւնը Թուրքիայում, էջ 173): (Ռուսերէն):

1915-1916 ԹԹ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՈՒԻԼՍԸՆ, ԹՈՄԱՍ ՎՈՒՏՐՕ, 1913-1921 թթ. ԱՄՆ-ի նախագահ.– Զէնքերը վար պիտի չդնենք, մինչեւ որ Թուրքիոյ կողմէ ճնշուած ազգերը չդնեն իրենց ազատութիւնը: Թուրքիա իր վայրագութեամբ գլեց անցաւ իր տէրերը՝ գերմանացիները: Հայերու հանդէպ գործադրուած մեթոտիկ ջարդերը կը ստիպեն մեզ աւելու Եւրոպայի վրայէն այս տգէտ ու վատառողջ աւազակախումբը: (Երիտասարդ Հայաստան, 84-րդ տարի, թիւ 4, Օգոստոս 1986):

ՃԷՅՄՍ ԲՐԱՅՍ, անգլիական պետական գործիչ, իրաւաբան, պատմաբան.– Քրիստոնեայ հայերի կոտորածը մահմեդականների ցասման բռնկումը չէր: Ամէն ինչ տեղի ունեցաւ կառավարութեան կամքով եւ համաձայնութեամբ քաղաքական նկատառումներով, այլ ոչ թէ կրօնական մոլեռանդութեան հետեւանքով: Կառավարութիւնը ձգտում էր ազատուել ոչ-մահմեդական ժողովուրդներից, որոնք խախտում էին կայսրութեան միատարրութիւնը, եւ միշտ չէ, որ պատրաստակամ էին հնազանդուելու բռնատիրութեան:

A speech delivered by Lord Bryce in the House of Lords, Arnold I. Toynbee, Armenian Atrocities, p. 6, The treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, p. 653.

ԷՄԻԼ ԴՈՒՄԵՐԳ, ֆրանսացի աստուածաբան, փիլիսոփայ.– Իսկ մենք, ի՞նչ արեցինք մենք, երբ Ապտուլ Համիտի բռնած արիւնոտ ճանապարհով գնացին նաեւ երիտթուքերը: Անցեալի դաժան ջարդերի, ինչպէս նաեւ այսօրուայ սահմռկեցուցիչ կոտորածների համար առանց բացառութեան պատասխանատու են նաեւ Եւրոպայի բոլոր ժողովուրդները: Իհարկէ նրանցից իւրաքանչիւրը պատասխանատու է ոչ հաւասարաչափ, սակայն աննշան պատասխանատուութիւնն էլ անգամ շատ մեծ է դառնում...:

Emile Doumergue, L'Armenie, les Massacres et la question d'Orient, Conferences, Etudes, Documents. Paris, 1917, p. 34.

ՍԲՈՐԴՈՆ Գ., իտալացի դիւանագէտ, ականատես.– Գիւղերում կոտորածները սկսուեցին Վանի իրադարձութիւններից շատ առաջ: Այդ կոտորածների զոհերի թիւը հասնում է մինչեւ 16,000 մարդու: Թէեւ հայ գիւղացին զինուած էր, բայց պաշտպանուելու փոխարէն իր զէնքերը յանձնեց իշխանութիւններին եւ դրանով կործանեց իրեն: Բոլոր այդ ջարդերը կատարուեցին աննախադէպ դաժանութեամբ: Պատռում էին երեխաների փորերը, մերկացնում կանանց եւ աղջիկներին եւ այդպէս քշում դէպի լեռները՝ վայրի գազանների նման: (Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, Փաստաթղթերի եւ Նիւթերի Հաւաքածոյ, խմբագրութեամբ Մ.Կ. Ներսիսեան, Ռ.Գ. Սահակեան, Երեւան 1982, էջ 285): (Ռուսերէն):

ՀԵՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՈՒ, 1913-1916 թթ. ԱՄՆ-ի դեսպան Թուրքիայում.– Ես վստահ եմ, որ ամբողջ մարդկութեան մէջ չկան այնպիսի սարսափելի փաստեր, ինչպէս այս կոտորածն էր: Թւում էր, որ անցեալում եղած մեծ կոտորածներն ու հալածանքները 1915 թ. հայ ազգի տանջանքների հետ համեմատած աննշան են:

Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, Garden City, New York, 1918, p. 324.

ԵՈՀԱՆՆԷՍ ԼԵՓՍԻՈՒՍ, գերմանացի հոգեւորական, հասարակական գործիչ, արեւելագէտ.– Կայսրութեան բոլոր շրջաններում ցրուած մէկկուկէս միլիոն բնակչութեան տեղահանութիւնը չի կարող ոչ մի ռազմական նկատառումներով արդարացուել: Միակ բացատրութիւնը, որը թոյլ չի տալիս այդ կառավարական միջոցառման մէջ տեսնել խելացնորութեան արարքը, այն է, որ խօսքը գնում էր ներքին քաղաքականութեան ծրագրի մասին, որը հետապնդում էր նախօրօք կանխամտածուած որոշումով, սառնասիրտ հաշուարկով ոչնչացնել էթնիկական հայ տարրը: (Ե. Լեփսիուս, Գաղտնի Տեղեկագիր Հայկական Ջարդերու Մասին. Ֆրանսերէն, Ռընէ Փինոնի նախաբանով, Փարիզ, 1918, էջ 259):

ԺԱԳ ՏԸ ՄՈՐԿԱՆ, ֆրանսացի հնաբան, պատմաբան.– Երբ ուշադիր կարդում ես հայերի կոտորածին վերաբերող փաստաթղթերը, չշմում ես երիտթուրքերի կառավարութեան կազմակերպած չարագործութեան հմտութեան եւ հեռատեսութեան վրայ: Կանխատեսուել էր ամէն ինչ. զոհերի զինաթափումը, դիմադրութեան կարող երիտասարդութեան մեկուսացումը, զանգուածային տեղահանումն ու տանջանքները ուղեւորութեան ընթացքում, տղամարդկանց ոչնչացումը ճանապարհին, կանանց եւ աղջիկների ընտրութիւնը մահմեդական դարձնելու

համար...: J. de Morgan, Contre les barbares de L'Orient, Etudes sur la Turquie, Paris, 1918, p. 182.

ՄԱՐԹԻՆ ՆԻՊԱԳԷ, գերմանացի ուսուցիչ, ականատես.- Տեղահանութեան նպատակը ամբողջ հայ ժողովրդին գլխովին ոչնչացնելն է: Այդ մտադրութիւնը բացայայտ երեւում է այն փաստից, որ կառավարութիւնը կանոնաւոր կերպով հակազդում էր այն միսիոնարներին, գթութեան քոյրերին եւ այլ եւրոպացիներին, որոնք գտնուելով երկրում ձգտում են օգնել հայերին: Quelques documents sur le sors des Armeniens en 1915, Fasicul III, Geneve, 1916, p. 161.

ԳԱՐՐԻ ՇԹՑՈՒՐՄԵՐ, գերմանացի լրագրող, հասարակական գործիչ. 1915-1916 թթ. Կ. Պոլսում «Քէօլնիայշը Ցայթունկ» թերթի թղթակից.- Թող յայտնի լինի, որ այդպիսի հնարամիտ գազանութեամբ մէկուկէս միլիոն մարդկանց ոչնչացումը այն էլ բարձր մշակոյթով ամբողջ մի ժողովրդի, համընկաւ Թուրքիայի վրայ Գերմանիայի ունեցած ամենաազդեցիկ մի ժամանակաշրջանում: (H. Stuermer, Zwei Kriegsjahre in Konstantimopel, Skizzen deutsch-jungturkischer Moral und Politik), Lausanne, 1917, s. 14.

ՇՏԻՐ ԷՎԱԼԴ, գերմանացի հրապարակախօս, պատմաբան, կրօնաւոր.- Ամբողջ աշխարհը մեզ պատասխանատու համարեց Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնների համար: Ազգային եւ կրօնական դրդապատճառները վերլուծելով, մենք պէտք է մեզ պատասխան տանք քրիստոնեայ ժողովրդի ոչնչացման պատճառների համար, որը 1600 տարի է ինչ գտնուելով Արեւելքի առաջաւոր դիրքերում եւ իսլամով շրջապատուած յորձանուտում, խիզախօրէն եւ անձնուիրաբար պահպանում է իր հաւատքը: (Stier Ewald, Die Vernichtung der Armenier in der Turkei. "Die Christliche Welt". Evangelisches Gemeindeblatt fur Gbildete aller Stande. 1919, no. 12.

ՖԷՑ ԵՈՒԼԻՈՒՍ, գերմանացի լրագրող, պատմաբան.- Հոծ բազմութեամբ խեղճ ժողովրդին առանց սննդի եւ ջրի քշեցին դէպի անապատները, որտեղ նրանց բզկտեցին այնպիսի ահաւոր ձեւով, որ անդամահատուած ձեռքերն դարսակոյտուած էին ամենուրեք: Միայն մէկ երրորդ մասը խուսափեց այդ ճակատագրից: Մէկուկէս միլիոն մարդ կորցրեց այն ինչ ունէր: Իսկ թուրքերը սպաննուած հայերի թիւը հաշուում են կէս միլիոն: (Fey Julius, armenische Frage. "Der Deutschen-Spiegel" Politische Wochenschrift, 19. Heft Wom II. Mai, 1928, s. 810.

ԵՈԶԷՖ ՄԱՐԿՎԱՐՏ, գերմանացի գիտնական, արեւելագէտ.- Նոյնիսկ Սահմանադրութեան հռչակումից յետոյ էլ օսմանեան քաղաքականութեան հիմնական լոզունգն էր՝ «եթէ չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաեւ հայկական հարցը»: Ատանայի դաժան կոտորածը ցոյց տուեց, որ երիտթուրքերը որոնք զարմանալիօրէն Եւրոպայում իրենց համար լիբերալ (ազատական) համբաւ ունենալու հասարակական կարծիք էին ստեղծել, իրենց դաժանութեամբ ոչնչով չզիջեցին մեծ մարդասպան Ապտուլ Համիտին: (Dr. Marquart, Die Entstehung und Wiederherstellung der Armenische Nation), Berlin. 1919, s. 45.

ԱՐՆՈԼԴ ԹՈՅՆՊԻ, անգլիացի պատմաբան, փիլիսոփայ.- Ամբողջ այդ ահաբեկումները, բոլոր այդ յանցագործութիւնները գործադրուեցին հայերի նկատմամբ նոյնիսկ առանց հաշուի առնելու նրանց կողմից ամենաչնչին մարտահրաւէրի բացակայութիւնը: (Arnold Toynbee, Armenian Atrocities, The Murder of a Nation, New York-London, 1915, p. 69.)

ՖՈՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄ, Կայսերական Գերմանիայի դեսպան Թուրքիայում 1912-1915 թթ.- Միանգամայն ակնյայտ է, որ հայերին աքսորելը կապուած չէ միայն ռազմական նկատառումների հետ: Վերջերս ներքին գործերի նախարար Թալեաթ պէյը առանց քաշուելու յայտարարել է կայսերական դեսպանութեան աշխատակից Դոկտ. Մորտմանին, որ Բարձրագոյն Դուռը ճգնում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպէսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիներից- տեղական քրիստոնեաների- հետ, առանց ուշադրութիւն դարձնելու արտասահմանեան դիւանագիտութեան միջամտութիւններին: (Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstucke - Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam 1919, s. 84).

ՇՈՅԲՆԵՐ ՌԻԽԴԵՐ, Էրզրումում գերմանական հիւպատոս (1915 թ. Յունիսի 2-ի զեկուցագրից),- Իմ բանակցութիւնները գլխաւոր հրամանատարի հետ հայերի տեղահանութեան վերաբերեալ դրական արդիւնքի չյանգեցրին: Հայ ազգաբնակչութիւնը դաշտային բոլոր շրջաններից, հաւանական է եւ Էրզրումից, պէտք է արտաքսուի Տէր Զօրի կողմերը: Մեծ մասշտաբի այս տեղահանութիւնը հաւասարազօր է զանգուածային ոչնչացման, քանի որ փոխադրական լրիւ միջոցների բացակայութեան պատճառով տեղահանուածների հազիւ կէսը ողջ կը հասնի նշանակուած վայրերը. եւ, հաւանական է, այս տեղահանութիւնը իր հետ կը բերի ո՛չ միայն հայերի, այլեւ ամբողջ երկրի քայքայում: Dr. Johannes Lepsius, Deutschland und Armenien, s. 80.

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ, ֆրանսացի լեզուաբան, հասարակական գործիչ.- Անցած ամառուայ եւ աշնան 1915 թ. զանգուածային ջարդը, որն իր ծանրութեամբ եւ ահաւորութեամբ գերազանցում է համիտեան վարչաձեւի վայրագութիւններին, կատարուել է տեղում գտնուող գերմանացի պաշտօնեաների աչքի առաջ եւ նրանց թոյլտուութեամբ ու որոշ դէպքերում փութկոտ օժանդակութեամբ: (Անթուան Մեյէ, Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, 1978, էջ 513):

ԱՏԱ ՋԷՄՊԼԻՍ, պարտիզակի ամերիկեան դպրոցի ուսուցչուհի, ականատես.- Թուրքիայի գոյութիւնն ապահովելու պատրուակով կառավարող խմբակը ձեռնամուխ եղաւ հայերի ազգային անարգմանն ու հալածանքներին: Պատերազմը դրա համար միայն հնարաւորութիւն էր եւ ոչ թէ պատճառ: Նա մերկացրեց թուրքական կառավարութեան խորագոյն գաղտնիքները: (Ada Pierce Chambers, In an Anatolian Valley, New York, 1955, p. 221).

ՊՐՈՒՆՕ ԷՔԱՐԹ, Ուրֆայի-Եդեսիա- Գերմանիայի միսիայի ներկայացուցիչ.- Այս փաշաներն ու պէյերը որտեղի՞ց էին ստացել

մէկուկէս միլիոն անմեղ կանանց ու երեխաներին կողոպտելու կամ դաժանօրէն ոչնչացնելու իրաւունքը։ Շատ բարձրաստիճան թուրքերի, այսպէս կոչուած «քաղաքակիրթների» դիրքորոշումը հայերի բնաջնջման նկատմամբ համաշխարհային պատմութեան մէջ կը մնայ որպէս անջնջելի խայտառակ բիծ։ (Bruno Eckart, Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1992. Ապրած օրերս Ուրֆայում, Երեւան 1990, էջ 87։

Վ. ՋԵԿՍ, անգլիացի միսիոներ.– Ես ականատես եղայ մի ամբողջ ժողովրդի ոչնչացման, եւ այն մասին, որ ես գրում եմ հիմա, հանդիսանում է մի ամփոփագիր, մի պարզ ընդհանրացուած նկարագրութիւն տեղի ունեցած դէպքերի մասին, որը չի կարող պատկերացում տալ իմ ամբողջ հազարապատիկ տեսածների եւ ապրումների մասին։ (Հայկական Լրատու (ռուսերէն) Մոսկուա 1916, թիւ 3, էջ 7)։

ՔԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ, գերմանական եւ միջազգային բանուորական շարժման գործիչ.– Թուրքական կառավարութիւնը կազմակերպեց հայկական զարհուրելի կոտորածները, ամբողջ աշխարհ այդ գիտէ եւ ամբողջ աշխարհն այդ ոճրագործութեան համար յանցաւոր է համարում նաեւ Գերմանիային. չէ՞ որ Կ. Պոլսում թուրքական կառավարութիւնը ղեկավարում են գերմանական սպաները։ Ոչ մի բան չգիտեն Գերմանիայում, որովհետեւ գերմանական մամուլի բերանի մէջ դրուած է գելարանակ։ (Քարլ Լիբկնեխտ, Հատընտիր ճառեր, նամակներ ու յօդուածներ (ռուսերէն) 1961, Մոսկուա, էջ 334)։

ՖՐԻՏԻՈՖ ՆԱՆՍԵՆ, նորվեկիացի ճանապարհորդ, բեւերախոյզ, հասարակական գործիչ.– Թրքական գազանութիւնները իրենց չափերով ու նոզկալի դաժանութեամբ գերազանցում են պատմութեան յայտնի բոլոր գազանութիւնները եւ հայ գողգոթան իր նմանը չունի պատմութեան մէջ։, (Fridjof Nansen, Betrogenes Volk, Leipzig 1928, s. 313).

ԼՈՅԴ ՃՈՐՃ, անգլիական պետական գործիչ, 1916–1922 թթ. վարչապետ.– Հայաստանը զոհ գնաց մեր կանգնեցրած յաղթական զոհասեղանին։ Յատկապէս մենք հնարաւորութիւն տուինք թուրքերին կատարելու այդ յանցագործութիւնը։ «Լոյտ Ճորճ, Ճշմարտութիւնը խաղաղութեան պայմանագրերի մասին– ռուսերէն– 1957, Մոսկուա, Հատոր Բ. էջ 390)։

ՈՒԻՆՍՏԸՆ ՉԸՐՉԻԼ, անգլիական պետական գործիչ, 1940–1945, 1951–1955 թուականներին վարչապետ.– Թուրքական կառավարութիւնը 1915 թուականին Փոքր Ասիայում բնակուող հայերի նկատմամբ սկսեց իրականացնել անխնայ զանգուածային ջարդերի եւ արտաքսումների քաղաքականութիւն։ Կասկած չկայ, որ այդ յանցագործութիւնները կանխամտածուել են քաղաքական նկատառումներով։ (Ուինստըն Չըրչիլ, Համաշխարհային Ճգնաժամ, ռուսերէն, Մոսկուա, 1932, էջ 27)։

Օ'ԳՈՆՈՐԻ, անգլիական խորհրդարանի անդամ.– Ես գերմանացիներին համարում եմ լիովին պատասխանատու հայերի կոտորածի համար։ Պեղլինից ասուած մի քանի խօսքը կարող էր վերջ դնել կոտորածին 24 ժամուան ընթացքում։ Cause, Held at the Central Hall, Westminster on Thursday, June 19th, 1919, London, p. 23.

Հ.Ա. ԿԻՊՊԸՆՍ, ամերիկացի պատմաբան, հրապարակախօս.– 1915 թ. Ապրիլից, Օսմանեան կառավարութիւնը ամբողջ Թուրքիայում սկսեց սիստեմատիկաբար կենսագործել հայ ժողովրդի բնաջնջման նախամտածուած ծրագիրը։ Վեց ամսուայ ընթացքում սպաննուել է մէկ միլիոն հայ։ Զօրքերի քանակը եւ նրանց ջարդելու միջոցներն անօրինակ են նորագոյն պատմութեան մէջ։ (Հերպերթ Ատամս Կիպպընս, Վերջին Ջարդերը Հայաստանում, Փաստեր եւ պատասխանատուութիւններ, թարգմանութիւն անգլերէնից, Փեթրոկրատ, 1916)։ (Ռուսերէն)։

ՀԵՆՐԻԽ ՖԻՐԲԻԻԽԸՐ, գերմանացի ականատես, 1915–1918 թ. եղել է Մարշալ Լիման Ֆոն Դանտերսի համհարզն ու թարգմանիչը Թուրքիայում.– Յաճախ այն կարծիքն է յայտնւում, որ մէկ միլիոնից աւելի հայերի կոտորածը կատարուել է ոչ թէ կանխամտածուած ծրագրով, այլ որոշակի չարաբաստիկ հանգամանքների բերումով, որոնք իբր չեն կանխատեսուել կառավարութեան կողմից։ Մեզ հասած թալեաթի հրամաններից պարզորոշ նկատւում է, որ կառավարութեան նպատակը ոչ թէ հայերի վերաբնակեցումն է եղել, այլ նրանց ոչնչացումը։ "Heinrich Vierbucher, Armenien 1915 Die Abschlach tung eines kulturvolkes Durch die Turken, Bremen, 1987. Տես ռուսերէն թարգմանութիւնը, Արմենիա, 1915, Երեւան 1991, էջ 48։

ԱՆՐԻ ԲԱՐԲԻ, ֆրանսացի լրագրող, ականատես.– Նրանք թալանում ու հրդեհում են հայերի տները, սպաննում տղամարդկանց, դիակները թողնում փողոցներում ընկած, իրենց հետ տանում գեղեցիկ աղջիկներին եւ բախտի քմահաճոյքին են թողնում հացից ու բնակարանից զուրկ կանանց ու երեխաներին։ (Անրի Բարբի, Սարսափի Երկրում, Տառապեալ Հայաստան, Թիֆլիս, 1919, էջ 131) (Ռուսերէն)։

ՌԸՆԷ ՓԻՆՈՆ, ֆրանսացի պատմաբան, հրապարակախօս.– Հայերի տեղահանումը, կանանց, երեխաներին եւ ծերերին, միայն նենգօրէն քօղարկուած մահուան դատապարտում էր։ Տեղւոյն վրայ կատարուած կոտորածը առաւել մարդկային կը լինէր։ Այն կ'ազատէր մարդկանց դաժան տանջանքներից։ Rene Pinon, La Suppression des Armeniens. Methode Allemand, travail turc, Paris, 1916, p. 27.

ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍ, ֆրանսացի գրող, հրապարակախօս.– Մենք Հայաստանին պատիւ ենք տալիս ոչ միայն նրա մշտական տառապանքների համար, այլեւ դրանք կրելու տոկունութեան համար... Հայաստանը մեռնում է, բայց նա կը վերածնուի։ Նրան մնացել է շատ քիչ արիւն, որից կը ծնուի մի հերոսական սերունդ։ Այն ժողովուրդը, որ չի ուզում մեռնել, երբեք չի մահանար, (La Revue des "Amities franco-etrangeres", no. 4, 1916, Mai-juin, p. 33-35).

Մ. ԷՐՑԲԵՐԳԸՐ, գերմանացի կաթողիկէ հոգեւորական առաջնորդ.– Երկրի խորքից, ազգութեամբ ոչ հայ ականատեսներից ստացուող հաշուետուութիւններն այն աստիճան սարսափելի են, որ դրանք հնարաւոր չէ արտայայտել թղթի վրայ։ Կարելի է ենթադրել, որ աքսորն աւելի մեղմ պատժիչ միջոց է, քան սպանութիւնները. իրականում սակայն, մէկը միւսից շատ քիչ է տարբերւում։ Այն դէպքում, երբ համ-

ընդհանուր ջարդի ժամանակ ոմանց յաջողւում է փախչել, թաքնուել կամ փրկուել լեռներում, տեղահանման պայմաններում կեանքը պահպանելու յոյսը չափազանց աննշան է։ (Մ. Էրցբերգը, Գերմանիա եւ Անթանթ-Համաձայնականները, Մոսկուա-Լենինկրատ, 1923, էջ 83) (ռուսերէն)։

Ա. ՄԱՆԴԵԼՇՏԱՄ, ռուս դիւանագէտ, իրաւաբան, պատմաբան.- Այո, Էնվէրը եւ Թալեաթը կայսրութեան երկու դիկտատորները համարւում են հայկական կոտորածների գլխաւոր մեղաւորները։ Շատ հաւանական է նաեւ, որ նրանք դրդուած լինեն յանցագործութեան չարանենգ դոկտորներ Բեհաէդդին Շաքիրի եւ Նազըմ Պէյի կողմից։ Բոլոր դէպքերում, այդ երկու հրէշների համագործակցութիւնը չի վերացնում Թուրքիայի այս երկու տիրակալների վրայ ծանրացած մեղադրանքը։ (A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 278)։

ԳՈՒՏ, ԿԱԼՄԱՐ ՖՈՆ, գերմանացի ֆելդմարշալ, հրամանատար գերմանական ռազմական առաքելութեան Թուրքիայում.- Ինչպիսի ահաւոր ժողովրդական ողբերգութիւն, նրանք առանց սննդի, առանց մատակարարման, անօգնական, հազարներով քշւում են դէպի անյայտութիւն։ Շատերը մահանում են ճանապարհներին եւ երկար ժամանակ մնում անթաղ։ Ամբողջ սրտով ցաւակցում ես, բայց օգնել չես կարող (Heinrich Vierbucher, Armenien 1915, Hamburg-Bergedorf, 1930, s. 71։

ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐ, գերմանացի գրող, հրապարակախօս, ականատես.- Մթութեան մէջ իջնում եմ դէպի գետը, ձորում յայտնաբերում եմ իրար վրայ դարսած մարդկային դիակների մի բլուր՝ սպիտակ զանգեր, որ դեռեւս ծածկուած են մազով, մէկի կոնքը, մի մանկան կրծոսկրը՝ նրբօրէն ճկուած, ինչպէս աղեղ։ Մի ակնթարթ ինձ տիրում է բուռ յուսահատութիւն, որ աչքերիցս արտասուք է քամում. թուում է, թէ ցնդում են բոլոր յոյսերը, սիրոյ բոլոր սաղմերը, որ երբեւէ ինձ կապել են կեանքին։ (Սովետական Հայաստան, 1986, Նոյ. 9, էջ 27)։

ՔԱՐԵՆ ԵՓՓԷ, դանիացի միսիոնարուհի, ականատես.- Իմ կողքին մահուան ճիրաններում թիրտում էր իր պատմութեամբ, մշակոյթով, լեզուով հարուստ քրիստոնեայ մի ժողովուրդ։ Մահուան դուռ էր հասել ոչ միայն դրսի ու ներսի իր թշնամիներից, այլեւ քրիստոնեայ իր բարեկամների խաբէութիւններից։ (Սովետական Հայաստան, 1985, Նոյ. 4, էջ 13)։

ԱԼՄԱ ԵՈՀԱՆՍԸՆ, շուէտացի միսիոնարուհի, ականատես։ Դեռ մինչեւ օրս անկարելի է ըմբռնել, թէ մի ամբողջ ժողովրդի դէմ թուրքերի կողմից ձեռնարկուած բնաջնջման մեծածաւալ «պատերազմ»ը տեղի ունեցաւ առանց բողոքի՝ բոլոր քաղաքակիրթ երկրների աչքերի առջեւ։ (Հայաստանի Աշխատաւորուհի, 1989, Նոյ. 3, էջ 18)։

ՄԱՐԻԱ ԵԱԳՈՊՍԸՆ, դանիացի բուժքոյր, Խարբերդում ականատես 1907-1915 թթ.- Ես չեմ կարող բառեր գտնել նկարագրելու համար այս ժողովուրդի ցաւերն ու տառապանքները, հալածանքներն ու սարսափը։ Ինչպիսի երկիր, ինչ ժողովուրդ եւ ինչ դժբախտութիւն... (Լրաբեր, 13 Հոկտ., 1984)։

ԲՐԱՖԹ-ԲՈՆՆԱՐԴ, ԱՆՏՈՆԻ, գերմանացի հասարակական գործիչ, կրօնաւոր.- Քաղաքական իրադրութիւնը վաղուց իվեր վճռական եղաւ հայ ժողովրդի ճակատագրի համար. ինչպէս որ սպասւում էր, Օսմանեան կայսրութիւնը կրկին վերադարձաւ Ապտուլ Համիտի մշակած այս քրիստոնեայ ժողովրդի ոչնչացման ծրագրին, որպէսզի կատարելապէս իրականացնի այն։ Ահաւոր կոտորածը սկսեց 1915 թուականին։ (Krafft-Bonnard, Die 5 Etappen eines Dramas. 1878-1943. Vandererverlag, Zurich, 1944. Գերմանական աղբիւրները հայերի ցեղասպանութեան մասին, էջ 77, ռուսերէն)։

ՎԵՐՆԵՐ ԷՌՆԵՍՏ, գերմանացի արեւելագէտ.- Թալեաթի եւ Էնվէրի գլխաւորութեամբ արմատական թեւը յաղթանակ տարաւ եւ մահուան դատապարտեց ամբողջ մի ժողովրդի։ Դրանով նրանք գործնականի վերածեցին իրենց ազգայնամոլական տեսութիւնը, ընդ որում հայերի ոչնչացումը միայն սկիզբն էր, քանի որ հնարաւոր կարճ ժամկէտում դրան պէտք է հետեւէր Փոքր Ասիայի յոյների կոտորածը։

Werner, Ernest, Die Armeniergreuel 1915-16- ein armenisches Greuelmarchen ? "Zeitschrift fur Geschichtswissenschaft" XXI, Jahrgang. 1973, Heft 2, Veb Deutscher Verlag der Wissenschaft. Berlin.

Տես՝ Գերմանական աղբիւրները Հայերի Ցեղասպանութեան մասին, էջ 67-68, (ռուսերէն)։

ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ, գերմանացի պատմաբան.- Բայց չէ՞ որ հոգեկան ցնցումից բացի, որ հայ ժողովրդին հասցրեց 1915 թ. ցեղասպանութիւնը, առկայ են նաեւ ցեղասպանութեան կոնկրետ նիւթական եւ քաղաքական հետեւանքները, որոնցից հայ ժողովուրդը շարունակում է տառապել առ այսօր։ (Dr. Tessa Hofmann, Volkermord und Historiographie. Rede auf der dursh den armenischen Welkongress veranstalteten Versammlung zum Gedenken an die Opfer des Cenozides an den Armeniern, gehalten am 28 April 1990 in Bonn. Տե՛ս՝ Գերմանական աղբիւրները Հայերի Ցեղասպանութեան մասին, էջ 115, ռուսերէն։

ՖԱՅԵԶ ԷԼ ՂՈՍԷՅՆ, արաբ իրաւաբան.- Հայերի դէմ գործադրուած բռնութեան համար պատասխանատուութիւնը ընկնում է «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութեան կենտրոնի անդամների վրայ, որոնք իրենց ձեռքում պահելով երկրի կառավարումը, առաջնորդւում էին ոչ այլ ինչով, քան հայերի նկատմամբ ունեցած ցեղասպաշտական մոլեռանդութեամբ եւ նախանձով։ (Fayez el Ghossein, Temoignage d'un Arabe Musulman sur L'innocence et le massacre des Armeniens, արաբերէնէ թարգմանուած A. el G.ի կողմէ, Պոմպէյ, 1917, էջ 44)։

ՄՈՀԱՄՄԷՏ ԱԼԻ ՃԱՄԱԼԶԱԴԷ, պարսիկ գրող, նովելիստ.- Ես ականատես եղայ մի շարք դաժանաբարոյ տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինուորները հայերը գլխին Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եւ որի հետեւանքը, ինչպէս գիտենք, եղաւ միլիոնաւոր հայերի ջարդը...։ Հարիւրաւոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդէն անզօր էին քայլելու, մտրակի եւ զէնքի ուժով հետիոտն ու անզօր, անխնայ քշում էին

առաջ։ Տղամարդկանց մէջ երիտասարդներ չկային։ Նրանց ուղարկել էին ռազմաճակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին։ Ես զարհուրելի օրեր անցկացրի, օրեր, որոնք ահռելի մղձաւանջի պէս ծանրացել են հոգուս վրայ։ Մղձաւանջ, որ երբեմն տարբեր առիթներով ճնշում է ողջ էութիւնս, անհանգստացնում ու տանջում է ինձ։ (ՊԲՀ, 1987, Նոյ. 2 (117), էջ 232–233)։

ԵԱՆ ՌԱՅՆԻՍ, լաթվիացի բանաստեղծ, հասարակական գործիչ։– Թրքական ամենազարհուրելի բարբարոսութեան ժամանակ, 1895–1896 թթ. մօտ մէկ միլիոն հայ կոտորուեց, իսկ ներկայ պատերազմի տարիներին նորից մէկ միլիոն հայ ոչնչացուեց, բայց լաւ ուշք դարձրէք, դրանք ոչ թէ մարտում ընկած, այլ սիստեմատիկ կերպով բնաջնջուած խաղաղ բնակչութիւն են։ (Եան Ռայնիս, Ընտիր երկեր, Երեւան, 1957, էջ 633)։

ՎԱԼԵՐԻ ԲՐՅԻՍՈՎ, ռուս գրականագէտ,– Ընդհանրապէս ֆանտաստիկ չեն այն հաշուումները, որ ցոյց են տալիս թէ սոյն պատերազմի սկզբներում Թուրքիայի տիրապետութիւններում կախաղանի միջոցով, սպանութիւններով, սովամահութիւնից, հիւծուածութիւնից, հրկիզումներից, դէպի անապատներն աքսորի ճանապարհներին եւ այլն, ոչընչացուել է մէկ միլիոնից աւելի հայ բնակչութիւն։ Այլ աղբիւրներ ցոյց են տալիս մինչեւ երկու միլիոն մարդ։ (Հայ Ժողովուրդի Պատմութեան Ճակատագրի Տարեգրութիւն, 1940, էջ 115, ռուսերէն)։

Վ.Ա. ԳՈՐԴԼԵՎՍԿԻ, ռուս արեւելագէտ, թուրքագէտ.– Ես տեսայ թէ ինչպէս 1916 թ. ամառը թուրքերը հայերի ամբոխին քշեցին Պիթլիս... Սարսափելի ողորմելի վիճակում էին հայերը. պատառոտուած, հիւծուած։ Նրանց դէմքերին արտայայտւում էին սարսափները, որ հէնց նոր ապրել էին նրանք... Հարիւր հազարաւոր անմեղ հայեր Թուրքիայում դարձան գազանութիւնների զոհ։ (Վ.Ա. Գորդլեւսկի, Ընտիր երկեր, Մոսկուա, 1962, հատոր 3, էջ 130, ռուսերէն)։

Ա. ԼԵԴՆԻՑԿԻ, լեհ հասարակական գործիչ.– Լեհ ժողովուրդը չի կարող անտարբեր անցնել մի ժողովրդի սարսափելի, ողբերգական պատմութեան կողքով, որը մեր մշակոյթի մէջ ներդրել է իր շնորհքի եւ ազդեցութեան ծաղիկը, մի ժողովրդի, որը վերաբնակուելով մեր լեհական հողի վրայ մեզ տուել է հայրենասիրութեամբ ու ինքնազոհութեամբ համակուած մարդիկ։ Եւ մենք ցանկանում ենք տեսնել ժողովրդի ազատագրման մօտալուտ արշալոյսը, որն իր հին մշակոյթով ունի ինքնուրոյն կեանքի բոլոր իրաւունքները։ (Հայերը եւ պատերազմը, ամսագիր, պատկերազարդ հանդէս հայ կեանքի մասին, Օտեսա թիւ 2–3, 1916, էջ 38 ռուսերէն)։

Ե.Վ. ՏԱՐԼԷ, ռուս պատմաբան, հրապարակախօս.– Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածները հանդիսացան մի չտեսնուած եւ միանգամայն բացառիկ երեւոյթ համաշխարհային պատմութեան մէջ, սկսած Ճինկիզ Խանի ժամանակներից։ (Ե.Վ. Տարլէ, Եւրոպան Իմպերիալիզմի ժամանակաշրջանում, 1871–1919 թթ. Մոսկուա, Լենինկրատ, 1928, էջ 387, ռուսերէն)։

ՎԱՍԻԼ ԿՈԼԱՐՈՎ, պուլկարական եւ միջազգային բանուորական շարժման գործիչ տնտեսագէտ.– Հայ ժողովուրդը իզուր բազմիցս դիմեց այսպէս կոչուած քաղաքակիրթ պետութիւնների մարդկային զգացումներին։ Նրա այդ աղերսանքին հետեւեց նոր արիւնահեղութիւններ։ Վերջին անգամ եւրոպական պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը ձգտեց Անտանտի (Համաձայնականների) պետութիւններին ցուցաբերած օժանդակութեան դիմաց ձեռք բերել իր ազատագրութիւնն ու ապրելու իրաւունքը, սակայն նա խաբուեց իր սպասումների մէջ եւ կրկին զոհ գնաց մոլեռանդութեան։ (Վասիլ Կոլարով, Համաշխարհային կոմունիստական Ինտերնացիոնալիզմի 3–րդ վեհաժողովը, Պետրոկրատ, 1922, էջ 469, ռուսերէն)։

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ, ռուս գրող.– յիշողութիւնը յարութիւն է տալիս Հայաստանի 19–րդ դարի վերջին եւ 20–րդ դարի սկզբի ողբերգական պատմութեան, Կոստանդնուպոլսի, Սասունի կոտորածներին, «մեծ մարդասպանին», «Կուլտուրական Եւրոպայի» զզուելի անտարբերութեան, որով նա վերաբերուեց իր «քրիստոնեայ եղբայրների» կոտորածին, միապետական կառավարութեան կողմից Հայաստանի եկեղեցական գոյքերի թալանի ամօթալի գործին, վերջին տարիների (1918–1920 թթ.) թուրքական արշաւանքների սարսափներին, դժուար է յիշել ողբերգութիւնները, որ ապրել է այդ եռանդուն ժողովուրդը։ (Ռուս գրողները Հայաստանի մասին, 1946, էջ 115–116, ռուսերէն)։

ՕՐՋՈՆԻԿԻՁԷ, Գ.Կ., վրացի քաղաքական գործիչ.– Նոր պատմութեան մէջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք տուած լինեն այնպիսի մեծ զոհեր ինչպէս հայերը, եւ քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ թափուած լինեն այնքան արիւն, որքան Հայաստանում։ (Գ.Կ. Օրջոնիկիձէ, Ցօդուածներ եւ ճառեր, հատոր 1, Մոսկուա, 1956, էջ 45 ռուսերէն)։

ԿԻՐՈՎ Ս.Մ., ռուս քաղաքական գործիչ.– Աներեւակայելի սարսափներ եւ տառապանքներ ապրած հայ բնակչութեան բարբարոսաբար թափուած արիւնը որոշ հեռաւոր պատկերացում է տալիս հայ ժողովուրդի Գողգոթայի մասին։ «Ս.Մ. Կիրով, «Թերեք», օրաթերթ, 14 Փետրուար, 1916, ռուսերէն)։

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ, լեհ հրապարակախօս, արեւելագէտ.– Այխմանը եղել է ձեր ուշիմ աշակերտը, միայն թէ ինչ որ նա անում էր 1942–44 թուականներին հրեաների նկատմամբ, կրկնութիւնն էր աւելի մեծ աստիճանի վրայ այն բանին, որը քո հայրենակիցները գործել էին հայերի նկատմամբ դեռեւս 1915 թուականին։ Իսկ դա եղել է – խնդրում եմ յիշել – մարդկութեան գործունէութեան մէջ առաջին ծրագրուած, աշխատանքի կազմակերպման գիտական հիմքերի դրուած, ամբողջ ժողովրդի ոչնչացում։ («Նայիրի», թիւ 46–50, Մայիս, 1975)։

Ա.Ս. ՍԻԼԻՆ, խորհրդային պատմաբան.– Արեւմտեան Հայաստանի բնակիչներ՝ հայերը ենթարկուեցին անողոք կեղեքման եւ դաժան հետապնդումների, ոչ միայն տեղի թրքական իշխանութիւնների եւ աւատատէրերի, այլեւ մահմեդական տարագիրների կողմից, որոնք

այստեղ էին վերաբնակուել եւրոպական Թուրքիայի 1877–1878 թթ. ռուս-թրքական պատերազմից յետոյ։ (Ա.Ս. Սիլին, Գերմանիայի ծաւալապաշտութիւնը Մերձաւոր Արեւելքում. 19-րդ դարի վերջին. Մոսկուա, 1971, էջ 206–207. ռուսերէն)։

ԺՈԶԷՖ ԿՈՒԹՄԱՆՆ, ամերիկացի պատմաբան,– Ես նկատի ունեմ 30 տարի առաջ հայերի հանդէպ կատարուած թուրքական կոտորածները։ Սակայն ոմանք պէտք է ընդունեն, որ այդ մասին չեն մտահոգւում։ Ահա այդ է մեր ժամանակների ողբերգութիւնը։ Մենք շատ արագ ենք մոռանում։ Երէկ զոհ գնացին «միայն» հայերը, այսօր՝ «միայն» հրեաները, ինչպէս նաեւ լեհերը եւ այլ եւրոպական ժողովուրդներ, իսկ վաղը՞։

(The Beginnings of Genocide, an Account of the Armenian Massacres in World War I, by Joseph Guttman, AHRA, 1965)։

ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ, ֆրանսացի գրող, քաղաքական գործիչ.–Ցեղասպանութեան առաջին ոճիրն իր սեփական երկրում ապրող մի ժողովրդի դէմ գործուեց 20-րդ դարի սկզբին, 1914–18 թթ. պատերազմի ընթացքում։ Եւ այդ ոճիրը բոլորովին չդատապարտուեց։ (L'Humanite, 23 Ապրիլ, 1965 ֆրանսերէն)։

ԷԼԵՆԱ ԴԸ ԼԱ ՍՈՒՇԵՐ, ֆրանսացի պատմաբան.– 20-րդ դարի արշալոյսին հայերի ջարդը գլխաւոր մի փորձ էր զանգուածային այն սպանութիւնների, որոնք չուտով բարձրացուցին կառավարման արուեստի աստիճանին։ (Elena de la Souchere, Le Racisme en mille images, Փարիզ, 1967, էջ 217, ֆրանսերէն)։

ՖՈՒԱՏ ՀԱՖԻԶ, արաբ պատմաբան.– Հայերի 1915 թ. ցեղասպանութեան պատասխանատուութիւնը ընկնում է նախ եւ առաջ Օսմանեան պետութեան կառավարութեան վրայ եւ առաջին հերթին Թալեաթ փաշայի՝ –ներքին գործերի նախարարին, յետագայում վարչապետ– եւ նրա գործընկերների՝ Էնվէր փաշայի եւ Ճեմալ փաշայի վրայ։ Ֆուատ Հաֆիզ, Հայ ժողովուրդի Պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը, Գահիրէ, 1986, էջ 315, արաբերէն)։

ԽԷՑՐԻ ՀԱՄԱ, արաբ պատմաբան.– 1915–1918 թթ. ընթացքում թուրքերն իրագործեցին մօտ մէկ միլիոն հայերի կոտորածը եւ արտաքսեցին հարիւր հազարաւորների։ (Խէյրի Համա, Հայկական Հարցի լուսաբանումը «Ալ Մունատըլ». Դամասկոս, 1983, էջ 22. արաբերէն)։

ԱՄԻՆ ՍԱՅԻՏ, արաբ պատմաբան.– Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ պէյը ղեկավարեց հայերին ոչնչացնելու արշաւը։ Այդ արշաւի կազմակերպչի ծրագիրը կայանում էր նրանում, որ արտաքսի հայերին արեւելեան Անատոլիայի տարածքէն եւ զինուորների հսկողութեամբ նրանց հետիոտն քշի արաբական անապատ, որտեղ նրանց անխուսափելի մահ էր սպասում։ (Ամին Սայիտ, Արաբների ապստամբութիւնը 20-րդ դարում, Մոսկուա, 1964, էջ 79, ռուսերէն)։

ՔԵՄԱԼ ՄԱԶՀԱՐ ԱՀՄԷՏ, քիւրտ պատմաբան, հասարակական գործիչ,– Բազմաթիւ պատմական փաստեր ապացուցում են, որ կոտորածների չարագործ կազմակերպիչը եւ պատասխանատուն Բարձրագոյն Դուռն էր։ Հայերի ջարդը մի շարք շրջաններում իրագործւում էր թուրք ժանդարմների եւ ոստիկանութեան ձեռքով։ Ուրֆայի եւ Արաբկիրի հայերի բնաջնջման գործը յանձնարարուած էր 30 հազար ժանդարմների եւ ոստիկանների։ Հայկական արիւնահեղ կոտորածները հիմնականում ոչ միայն քրտերի կոյր ֆանատիզմի եւ յետամնացութեան արդիւնքն էին, այլեւ Օսմանեան կայսրութեան եւ տէրութիւնների կողմից նրբօրէն մշակուած մի ծրագրի հետեւանք...։ (Քեմալ Մազհար Ահմէտ, Քիւրտիստանը Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին. Պաղտատ, 1977, արաբերէն)։ Տես Հայ-Քրտական յարաբերութիւնների պատմութիւնից, ՀԽՍՀ ԳԱ, Գիտա-ինֆորմացիոն բիւլետէն, թիւ 8, Երեւան, 1983, էջ 23)։

ՈՒԻԼԻԷՄ ԴԱԼՐԻՄՊԼԷ, աւստրալիացի լրագրող.– Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում արեւելեան Թուրքիայում մէկ միլիոն հայերի կոտորածից յետոյ, միայն նրանց հնագոյն եկեղեցիներն են վկայում այն մասին, որ մի ժամանակ նրանք ապրել են այստեղ։ (Extra, 22 Ապրիլ, 1989)։

ԴԱՆԱ ՄԱԳԱԼՈՎԱ, չեխ կինեմատոգրաֆիստ.– Հայաստանը եւ հայ ժողովուրդին սիրում եմ վաղուց։ Սրանից չորս տարի առաջ Ց. Շտետինայի հետ եղանք Արեւմտեան Հայաստանում, ցանկանում էինք նիւթեր հաւաքել 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան մասին, սակայն մեր մտայղացումները յօդս ցնդեցին։ Թուրքական իշխանութիւնները մեզ ձերբակալեցին եւ երեք շաբաթ բանտում պահելուց յետոյ արտաքսեցին Թուրքիայից։ (Խորհրդային Հայաստան, 1989, Յունիս 20)։

ԺՈԶԷՖ ՖՐԱՆՉԵՍԿԻ, Փարիզի Ալֆորվիլի շրջանի քաղաքագլուխ.– Թրքական կառավարութիւնը մերժելով ընդունել 1915 թ. ցեղասպանութիւնը, ջնջում է Հայաստանի պատմական իրականութիւնը... Լռութեան դաւադրութիւնը չի կարող արդարացուել։ Բոլոր նրանց, ովքեր յամառում են լռութեամբ քօղարկել 1915 թ. ջարդերը, մենք ասում ենք համոզումով, «Զգաքե՞լ էք արդեօք ձեր սխալի ծանրութիւնը, ձեր բռնած դիրքը ոչ միայն չի խաղաղեցնում կրքերը, այլեւ ընդհակառակը, բորբոքում է դրանք»։ (Էջմիածին, 1984, թիւ 7–9, էջ 11–12)։

ՇԱՆԴՈՐ ՆՈՎՈԲԱ, հունգարացի լրագրող.– Տեղահանուածներն ամբողջ ճանապարհը ստիպուած էին անցնել ոտքով, ոտաբոպիկ, քարքարոտ ճանապարհներով, կիզիչ արեւի տակ, առանց տարրական սննդի։ Հասկանալի է, որ մեծ մասը չհասաւ վերջնակէտին։ Իսկ նրանք, ովքեր հասան, ցնցոտիների մէջ էին, գրեթէ մերկ, մինչեւ ոսկորները հիւծուած։ (Սովետական Հայաստան, 1986, թիւ 7, էջ 21)։

ՕՌԼԻՆ ԶԱԳՈՐՈՎ, պուլկար պատմաբան, հրապարակախօս,– 1870 թուականին, թուրքերի ընդհանուր թիւը հայերի ընդհանուր թուին գերազանցում էր ընդամէնը մէկ միլիոնով։ Այժմ այդ յարաբերակցութիւնը 6½ անգամով աւելին է։ Ուրեմն, բթամիտ կամ անազնիւ պէտք է լինել, չհասկանալու համար, որ այդ հրէշաւոր տարբերութիւնը առաջացել է ջարդերի հետեւանքով։ (Օռլին Զագորով, Ճշմարտութիւնը. Սոֆիա-Բրես, 1987, պուլկարերէն)։

ԴԵԼԶՕ ԲԱԼԱԲԱՆՈՎ, *պուլկար դիւանագէտ,– Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդէպ գործադրուող կոտորածների ու զանգուածային ցեղասպանութեան տարիներին երիտթուրքերի կառավարութիւնը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթութեան ամէն մի նիւթեղէն ապացոյց: Հէնց այդ քաղաքականութեան տրամաբանական հետեւանքն էր հայ ժողովրդի ցեղասպանութիւնն ու մշակոյթի, արուեստի շատ արժէքներ ոչնչացնելը:* (*Սովետական Հայաստան*, 1987, No. 4, էջ 25):

ՕԼԿԱ ՌՈՎԵՆԿԱ, *չեխ գրականագէտ, թարգմանիչ,– Եղեռնի կազմակերպիչները ենթադրում էին, որ հայ ժողովրդին ոչնչացնելուց յետոյ աշխարհը կը մոռանայ այդ դէպքերի մասին: Սակայն հայերը հակառակ ահաւոր տառապանքների, չյանձնուեցին, ժողովուրդը պահպանեց իր ոգու կորովը: Իսկ եղեռնի զոհերի յիշատակը ընդմիշտ կը պահպանուի մարդկութեան յիշողութեան մէջ:* (*Սովետական Հայաստան*, 1985, *թիւ* 8, էջ 7):

ՈՒ. ՏՐՈՒՄԲԵՆԵՐ, *ամերիկացի պատմաբան,– Իրականում տրամադրութեան տակ առկայ ապացոյցների մեծամասնութիւնը այն հետեւութեանն է բերում, որ արեւելեան նահանգներում հայ բնակչութեան սիստեմատիկ ջարդերը արդէն որոշուած էին «Իթթիհատ»ի վարչակարգի կողմից եւ յուզումները Վանում ու այլ վայրերում լոկ յարմար առիթ ծառայեցին զանգուածային տեղահանումների ծրագրի իրականացման եւ մեծ չափանիշով ոչնչացման համար:* (Trum-ener Ulrich. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, New Jersey, 1968, p. 203):

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՑԴԻՍ, *լիթվացի բանաստեղծ, հասարակական եւ պետական գործիչ,– Երկիր մոլորակի համար սահմռկեցուցիչ մի դաս եղաւ Առաջին Համաշխարհային Պատերազմը, եւ հէնց նոյն այդ ժամանակ էլ ծայր առաւ մի ողբերգութիւն, որպիսին մինչ այդ չէր տեսել աշխարհը՝ անզէն մարդկանց, կանանց, երեխաներին ու ծերունիների սառնարիւն, հետեւողական, բարբարոս դաժանութեամբ անհերեւակայելի մի ջարդ:* (*Սովետական Հայաստան*, 1985, *թիւ* 4, *Յունիս* 15):

ՔՐԻՍԹԸՖԲԸՐ ՈՒՈՔԸՐ, *անգլիացի պատմաբան,– Երբ ես սկսեցի հայերի ցեղասպանութեան վերաբերող նիւթերի ուսումնասիրութիւնը, ճիշդն ասած, պարզապէս ցանկանում էի լրացնել իմ գիտելիքների պակասը: Բայց երբ մտայ այդ ասպարէզը, տեսայ որ կայ մի, այսպէս կոչուած, «ծածկ» հայկական հարցի նկատմամբ. այդ «ծածկ»ը գոյութիւն ունէր ամէն տեղ, որտեղ ուսումնասիրում են Մերձաւոր Արեւելքի պատմութիւնը: Եւ ստեղծուեց անհրաժեշտութիւն ճեղքելու այդ «ծածկ»ը, բանալու հայկական հարցի նկատմամբ եղած անտարբերութեան, լռութեան քողը:* (*Խորհրդային Դպրոց*, 1989, *Յունիս* 15):

Ա. Ֆ. ՄԻԼԼԵՐ, *խորհրդային պատմաբան,– Այդ տարիներին, հայ ժողովուրդը ողբերգական իրադարձութիւններ ապրեց Թուրքիայում, Սուլթանական–Երիտթուրքական իշխանութիւնները, օգտուելով պատերազմից, որոշեցին ամբողջացնել արիւնոտ սուլթան Ապտուլ Համիտի սկսած չարագործութիւնը:* 1915 *թ. Մայիսին, ռուսական զօրքերի կողմից Վանի գրաւումից անմիջապէս յետոյ, Օսմանեան կառավարութիւնը օրէնք հրապարակեց, այսպէս կոչուած, տեղահանութեան մասին: Իրականում, տեղահանութիւնը փոխարինուեց անմարդկային կոտորածներով: Մէկուկէս միլիոնից աւելի հայեր վտարուեցին իրենց գիւղերից եւ քաղաքներից, եւ պարբերաբար քշուեցին Սիրիայի եւ Միջագետքի համակեդրոնացման ճամբարները:* (*Ա.Ֆ. Միլլեր, Թուրքիայի նորագոյն պատմութեան ուրուագծեր, Մոսկուա–Լենինկրատ*, 1948, էջ 63, *ռուսերէն*):

ՀԱՄԻՏ ԶԷՅՆԱԼԱՊԻՆ ՕՂԼԻ ԱԼԻԵՒ, *խորհրդային պատմաբան, ազգութեամբ ատրպէյճանցի,– «Տեղահանութեան» օրէնքը նշանակում էր՝ հայերին հարազատ վայրերից վտարումն ու նրանց զանգուածային կոտորածը, որին զոհ գնացին 1.5 միլիոն հայեր: «Տեղահանութիւնը» կատարուեց զինուորական իշխանութիւնների անմիջական հսկողութեամբ: Այն հապճեպ գործադրուելու հետեւանքով հայ բնակչութեան ունեցուածքը պետական մարմինների, ինչպէս նաեւ գերմանացի սպաների ձեռքն անցան չնչին գներով, իսկ շատ դէպքերում էլ պարզապէս ենթարկուեցին կողոպուտի: Տղամարդիկ տարագրուեցին կանանցից եւ երեխաներից անջատ, այդ իսկ պատճառով հազարաւոր ընտանիքներ նոյնիսկ չկարողացան իմանալ իրենց հարազատների ճակատագրի մասին: Այդ դժբախտները սննդից եւ բժշկական օգնութիւնից զուրկ լինելով, լեռնային ճանապարհներով խմբերով քշուեցին Սիրիայի եւ Միջագետքի «յատուկ ճամբարները»: Մեծ մասը զոհուեց ճանապարհներին սովից, ծառաւից, հիւանդութիւններից, ինչպէս նաեւ աւազակային յարձակումներից: Նրանք, ովքեր հասնում էին ճամբարները, մահանում էին վարակիչ հիւանդութիւններից:* (*Հ.Զ. Ալիեւ, Թուրքիան Երիտթուրքերի կառավարման ժամանակաշրջանում*, 1908–1918 *թթ. Մոսկուա*, 1972, էջ 277): (*Ռուսերէն*):

Ա.Դ. ՆՈՎԻՋԵԻ, *խորհրդային պատմաբան,– Հայերի հետապնդման քաղաքականութիւնը մեծ վնաս հասցրեց երկրին: Կոտորածին զոհ գնացին մօտ մէկուկէս միլիոն հայեր: Մէկ միլիոն* 200 *հազար տարագրուեցին Սիրիա եւ Իրաք. մեծ թիւով հայեր փախան Ռուսաստան, Իրան եւ այլ երկրներ: Հայերի հետապնդման քաղաքականութիւնը հասցրեց այն բանին, որ ամբողջ Արեւելեան Անատոլիան եւ այլ շրջաններ աւերուեցին եւ անմարդաբնակ դարձան:* (*Ա. Դ. Նովիչեւ, Թուրքիա, համառօտ պատմութիւն, Մոսկուա*, 1965, էջ 131, *ռուսերէն*):

ՄԻԽԱԼԻՍ ԽԱՐԱԼԱՊԻԴԻՍ, *ընկերաբան–քաղաքականագէտ, ժողովուրդների իրաւունքների եւ ազատութեան միջազգային ընկերութեան գործադիր կոմիտէի անդամ,– Մէկ ու կէս միլիոն հայեր եւ Սեւ Ծովի ափերի* 350 *հազար յոյն պոնտացիներ ոչնչացուեցին Օսմանեան պետութեան ու քեմալական շարժման կողմից սիստեմատիկ մշակուած ու ծրագրուած բռնութիւնների, կոտորածների, բռնագաղթերի ու ցեղասպանութեան հետեւանքով:* («*ՓԻՒՆԻԿ*», *Բ. տարի, թիւ* 5–14, 1991, *Յուլիս* 3):

Ե. ԳՐԱՆՏ, խորհրդային պատմաբան-լրագրող,- Զախողում կրելով հայկական ցեղասպանութեան հարցում համաշխարհային հանրութեան խաբելու գործում, Անքարան եւ նրա քարոզչական շրջանակները վերջերս փորձում են աշխարհը ցնցել սենսացիոն «մերկացումներով», իբր այդ նոյն տարիներին հայերն են իրականացրել խաղաղ թուրք բնակչութեան զանգուածային սպանութիւնները: (Խորհրդային Ռուսաստան (օրաթերթ), Փետրուար 18, 1987), (ռուսերէն):

Վ. ՍՈՖԻՆՍԿԻ, խորհրդային դիւանագէտ,- Թուրքիայի այն ժամանակուայ կառավարողների կողմից հայերի դէմ կատարուած հրէշային ցեղասպանութիւնը ոչինչով չի կարող արդարացուել: (Իզվեստիա (օրաթերթ), Նոյեմբեր 18, 1985, ռուսերէն):

Ս. ՄԻՆՑ, խորհրդային պատմաբան,- Արեւմտեան Հայաստանի բնակչութիւնը զոհ գնաց աշխարհի նոր շրջանին առաջին ցեղասպանութեան, որը կատարուեց երիտթուրքերի կառավարութեան կողմից, կայսերական Գերմանիայի բացայայտ թոյլտուութեամբ: (Ս. Ստեփանեան, Հայաստանը գերմանական իմպերիալիզմի քաղաքականութեան մէջ, Երեւան, 1975, էջ 3): (Ռուսերէն):

ՏԷՑՎԻՏ ՄԱՐՇԱԼ ԼԷՆԿ, անգլիացի պատմաբան, կովկասագէտ,- Առաւել ողբերգական ու սարսափելի էր քաղաքացիական հայ ազգաբնակչութեան վիճակուած ճակատագիրը: Երեխաները բռնի կերպով խլուել էին իրենց ընտանիքներից եւ ուղարկուել «որբանոցներ», որոնք ըստ էութեան գետնի մէջ փորուած փոսեր էին, ուր ողջ-ողջ նետում էին մանուկներին: Կանանց ու ծերունիներին հաւաքում էին քարաւաններում, ստիպելով ոտքով քալել հարիւրաւոր մղոններ Հալէպի եւ Սիրիայում կազմակերպուած համակեդրոնացման կէտերի ուղղութեամբ: Ճանապարհին նրանց սպասում էին մարդասպանները, որոնց կառավարութիւնը ձեռքի ազատութիւն էր տուել... մօտ մէկուկէս միլիոն արեւմտահայ ֆիզիքապէս ոչնչացուեց ընդհանուր երեք միլիոնից, որ ապրում էր Թուրքիայում պատերազմից առաջ: (David Marshall Lang, Armenia. Cradle of Civilization, Լոնտոն, 1980, էջ 288-289):

ԼՈՐՏ ՔԻՆՐՈՍ, անգլիացի պատմաբան,- Հայ ժողովուրդի մօտիկութիւնը ռուսներին կամ կովկասեան ճակատին, յարմար առիթ հանդիսացաւ այնպիսի ծաւալով հալածանքների համար, որոնք մեծապէս գերազանցում էին Ապտուլ Համիտի գազանութիւնները, եւ դա արուեց մէկ միլիոն հայերի տեղահանութեան միջոցով, որոնց կէսը զոհուեց: (Lord Kinros, The Ottoman Centuries, The Rise and the fall of the Ottoman Empire... Լոնտոն, 1977, էջ 607):

ՌԻՉԸՐՏ Ֆ. ՆԱՑՐՈԲ, ամերիկացի պատմաբան,- 19-րդ դարի վերջերին հայերը ենթարկուեցին Օսմանեան իշխանութիւնների գործադրած պարբերական կոտորածների: 1890 թուականների ահաբեկչական գործողութիւնների հետեւանքով, մօտ 100,000 հայեր արտագաղթեցին երկրից: Հայ ժողովուրդի պատմութեան մէջ, ծանրագոյն ողբերգութիւնը տեղի ունեցաւ 1915-1916 թթ., երբ Օսմանեան կառավարութիւնը, Ռուսաստանի հետ համագործակցելու մտավախութիւնից նախաձեռնեց ոչնչացնել եւ բռնի ուժով տեղահանել ամբողջ հայ բնակչութիւնը: Տեղահանուեցին մօտ 600,000 հայեր, որոնցից մեծ մասը հարկադրաբար քշուեցին դէպի Սիրիա, նոյնքան եւ նոյնիսկ աւելի թուով հայեր կոտորուեցին: (Turkey, a country study "Area handbook series", Edited by Richard F. Nyrop, Ուաշինկթըն, 1980, էջ 88): Ռիչըրտ Նայրոբն նշում է նաեւ, որ 1894-1895 թթ. կոտորածներին զոհ գացին 300,000 հայեր (էջ 39). իսկ 1915 թ., իր գրքի 42-րդ էջում, խօսելով հայկական կոտորածների մասին, մատնանշում է որ կոտորուել են մէկ միլիոն հայեր:

ՄԵՐԻ ՔԷՑ ԼԱՆԴՈՆ, ամերիկացի լրագրող,- Թուրքերի կողմից 1915-ին իրագործուած հայ ժողովրդի ցեղասպանութիւնը, որի հետեւանքով զոհուեց աւելի քան 1.5 միլիոն մարդ, մինչեւ հիմա պաշտօնապէս չի ճանաչուած որոշ կառավարութիւնների կողմից, այդ թուում եւ մեր կառավարութեան (ԱՄՆ-ի) կողմից: Բայց փաստը մնում է փաստ, մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմը, Թուրքիայի արեւելեան շրջաններում եւ Արարատ լեռան մերձակայքում բնակուող հայերի թիւը երկու միլիոնից աւելի էր: Այժմ այնտեղ իրականում հայեր չկան: Ո՞ւր են նրանք անհետացել: (City. Ապրիլ, 1980, Սան Ֆրանսիսքօ):

ՄԻՑՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ, յոյն գրող, գրականագէտ,- Ճակատագիրը հայերին դրել է դժուար մի տարածքի վրայ: Հնուց մինչեւ մեր օրերը, շատերը փորձեցին խժռել նրանց, եւ շատ անգամ խժռեցին, բայց բազմաթիւ շնորհներով օժտուած այս արթուն ցեղը կարողացաւ վերապրել: (Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայերը, Երեւան, 1984, էջ 5):

ԲԵՐԸՆԴԱ ՄԻՒՆԻԾ, գերմանացի գիտնական,- Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրէին, Օսմանեան կայսրութեան կառավարողները կազմակերպեցին 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, որին զոհ գնացին մօտ 1.5 միլիոն հայեր: Բազմաթիւ վաւերագրեր վկայում են այն մասին, որ այսպէս կոչուած «յառաջադէմ» թուրքերի կատարած դաժանութիւնները անհամեմատ գերազանցեցին սուլթանների կատարած բռնութիւններին եւ այդպիսով սահմանադրական Թուրքիան առաւել եւս հեռացաւ Եւրոպայից: «Զերքալօ Միրովոյ Փրեսսի», Օգոստոս, 1990): (Ռուսերէն):

ՖՐԱՆՔ ՈՒԵՊԵՐ, ամերիկացի պատմաբան,- Այնքան էլ հաւանական չէ Անտանտի (Համաձայնականների) փրոփականտիստների յաճախակի այն մեղադրանքները, որ գերմանացիներն են տուրք տուել եւ գործնականապէս կատարել պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայկական կոտորածները: Գերմանիայի մեղաւորութիւնը, որը բաւականին ծանր է, կայանում է նրանում, որ նա վճռականապէս եւ խստագոյնս չզսպեց իր դաշնակցին: (Frank G. Weber, Eagles on the Crescent, Նիւ Եորք-Լոնտոն, 1970, էջ 145):

ՃՈԶԷՖ Ռ. ՍԵՐԵԼ, հասարակական քաղաքական գործիչ, ԱՄՆ,- Ցեղասպանութիւն. ամենա-ահասարսուռ բառերից մէկը, մարդկային գիտակցութիւնը ցնցող մի ողբերգութիւն, վայրագութիւն, գազանու-

թիւն, որ աններելիօրէն յաճախակի է կիրառւում ժողովուրդների նկատմամբ՝ միմիայն նրանց ազգային եւ հաւատքային պատկանելիութեան համար...: Եւ ամենացայտուն օրինակը՝ մէկուկէս միլիոն հայերի ոչնչացումը քայքայուող Օսմանեան կայսրութիւնում, 75 տարի առաջ: (Երկիր Աւետեաց· Հոկտ· 8, 1990):

ՊԷԱ ՀՈԼՄԿՎԻՍՏ, չուէտացի կինոռեժիսոր, կինօ վաւերագրող.- Շատ եւրոպացիներ գիտէին Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հրեաներին վիճակուած ողբերգութեան մասին, բայց սակաւ էին տեղեակ հայերի ցեղասպանութեանը: Եւ մենք մեր առջեւ յստակ խնդիր դրեցինք՝ ստեղծել այնպիսի ֆիլմ, որը վերականգնէր ժողովուրդների մոռացուած յիշողութիւնը: Եւ շարժանկարի ենթավերնագիրը՝ «Մոռացուած Եղեռն· Երազանք Վերադարձի մասին, Հայեր» մեր այդ ձգտման վկայութիւնն է: (Հայրենիքի Ձայն, 1990, Յունուար, թիւ 1 (1274):

ԺՈՐԺ ՄԱՐՇԷ, Ֆրանսայի կոմունիստական կուսակցութեան գլխաւոր քարտուղար.- ...Սկսած 1920 թուականից, ֆրանսական կոմունիստական կուսակցութիւնը պարզ ու յստակ դիրքորոշում է ընդունել՝ արտայայտելով ի նպաստ հայ ժողովրդի դատի արդարացի լուծման, յայտարարելով, որ մոռացութիւնը դառնում է յանցագործութիւն այն պահից, երբ հարցը վերաբերում է 1915-ի ջարդերի քօղարկման, ամբողջ մի ժողովուրդի ոչնչացմանը՝ իր սեփական տարածքում...: (Armenia, 1977, No. 6-7, Մարսէյ):

ՄՈՆՐՕ ՖՐԻՄԷՆ, քաղաքական գործիչ, ԱՄՆ.- Այսօր (1980) մենք ցաւով ենք յիշում 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան ժամանակ մորթուած, սովամահ ու տանջամահ արուած մէկուկէս միլիոն հայերին: (Գրական Թերթ, 1990, Ապրիլ 27, թիւ 18 (2369):

ՋԻՄԻ ՔԱՐԹԸՐ, ԱՄՆ-ի նախագահ 1976-80.- Այժմ ընդհանրապէս ողջ աշխարհին յայտնի է, որ 1916 թ· նախորդած տարիներին եղել են փոխհամաձայնեցուած ջանքեր, բնաջնջելու հայ ժողովրդին· դա դեռեւս որեւէ ազգի բաժին ընկած մեծագոյն ողբերգութիւններից է: (Գրական Թերթ, 1990, Ապրիլ 27, թիւ 18 (2369):

ՋՈՐՋ ՊՈՒՇ, ԱՄՆ-ի փոխ նախագահ 1980-1988, նախագահ 1988-1992.- Կոտորածների այս 75-րդ տարեդարձին ես ցանկանում եմ միանալ հայերին եւ բոլոր ժողովուրդներին, նշելով 1990 թուականի Ապրիլ 24-ը, որպէս յիշատակի օր մէկ միլիոնից աւելի հայ զոհերի համար: Ես կոչ եմ անում բոլոր ժողովուրդներին ջանալ կանխել ապագայ ոճրագործութիւնները մարդկութեան դէմ, եւ իմ 1988 թուականի Յունիսի ելոյթն արտայայտում է իմ խոր զգացումները դէպի հայ ժողովուրդը եւ նրա կրած տառապանքը: (Գրական Թերթ, 1990, Ապրիլ 27, թիւ 18, (2369):

ԻՎ ԹԵՌՆՈՆ, ֆրանսիացի պատմաբան.- Պատմական ճշմարտութիւնը սակարկութեան առարկայ չէ: Չկայ մի այդպիսի ժամանակաշրջան, երբ չարժէ խօսել հայերի ցեղասպանութեան մասին: Դա կարող է վնաս հասցնել այդ քաղաքականութեան շահերին: Ցեղասպանութիւնը տեղի է ունեցել, որպէս ցեղասպանութիւն եւ հայ ազգը բնաջնջելու Օսմանեան

կառավարութեան հետեւողականութիւնը այդ հարցում ապացուցուած է: Որպէս ցեղասպանութիւն այն սպառնալիք է համայն մարդկութեանը, որովհետեւ պատմութեան մէջ չի կարելի հանդուրժել մի այնպիսի ոճրագործ պետութեան, որը կարող է բնաջնջել մի ժողովուրդ եւ այդ երեւոյթը խեղաթիւրել՝ ելնելով իր նեղ ու նենգ շահախնդրութիւնից եւ իրեն ներկայացնել որպէս տուժուած մի պետութիւն:

(Ives Ternon, La Verite de L'Histoire n'est pas Negociable. Հայերէն թարգմանութիւնը տե՛ս «Նոր Օր» եռօրեայ, Ապրիլ 23, 1994, էջ 5):

ԺԱՆ ՄԱՐԻ ԳԱՌԶՈՒ, ֆրանսիացի լրագրող, գրող, պատմաբան.- Այս տեղահանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցեղասպանութեան կիրառումը կեանքում, վիթխարի մի գործողութիւն, որում պարտադիր կարգով իրենց մասնակցութիւնն էին ունեցել պետութեան բոլոր պաշտօնական անձինք՝ ինչպէս քաղաքացիական, այնպէս էլ զինուորական: (Jean-Marie Carzou, Un genocide exemplaire. Armenie 1915. Paris, 1975, p. 123).

ՃՈՆ Մ· ՏՈՒԿԼԱՍ, ամերիկացի պատմաբան, հասարակական գործիչ.- Ցեղասպանութեան առաջին ամիսներին Թուրքիայի հայ բնակչութեան համարեա թէ կէսը ոչնչացուեց: Իսկ Հոկտեմբերի վերջերին, Անատոլիան եւ Կիլիկիան կատարելապէս մաքրազարդուեց հայերից: Վերապրողները քշուեցին Սիրիայի անապատները: Այս իւրայատուկ անապատը ընտրուած էր, որպէս առաւել տրամաբանական վայր, որտեղ վերջակէտ էր դրուելու նրանց գոյութեանը: Երբ Փետրուարին ծրագրւում էր ցեղասպանութեան հարցը, կանխատեսնուած էր նաեւ այն, որ վերապրողները, իհարկէ եթէ նրանց յաջողուէր վերապրելու երջանկութիւնը, մահանալու էին սովից, ուժասպառութիւնից եւ հիւանդութիւններից անապատ հասնելուց յետոյ: Թուրքերի կանխատեսումը ճիշդ դուրս եկաւ: (John M. Douglas, The Armenians, New York, 1992, p. 336):

ԻՍՐԱՑԷԼ ԶԱՐՆԻ, Երուսաղէմի ողջակիզման եւ ցեղասպանութեան ինստիտուտի տնօրէն.- «Անհրաժեշտ է կազմակերպել մի ֆորում, որպէսզի այդ ուռացողների առաջ բացայայտուի եւ ապացուցուի, թէ ինչպէս են նրանք վարկաբեկում, նուաստացնում եւ վիրաւորում իրենց զոհերին: Պէտք է մատնանշուի նրանց մոլեռանդութիւնը, որ նրանք ոտնահարում են մարդկային իրաւունքների երաշխիքը: Ցոյց տրուի թէ ինչպէս են նրանք փորձում առարկել, վերափոխել, կեղծել եւ աղաւաղել պատմական իրադարձութիւնների տարեգրութիւնը»: (Armenian Life, Weekly, May 25, 1994, p. 25, Los Angeles):

ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ 1894-1896 ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ, թուրք զինուորական, պատմաբան.- Անատոլիայից (իմա՝ Արեւմտեան Հայաստան, խօսքը 1894-96 թթ· կոտորածների մասին է: Ա.Փ.) հասած տեղեկութիւնները չափազանց աղէտալի էին: Ջարդը շարունակւում էր սոսկալի չափերով: Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնների տուած հրամաններով քրտերը յարձակուել էին գիւղերի վրայ, բայց ետ էին մղուել, որից յետոյ զինուորական ուժեր

ուղարկելու անհրաժեշտութիւն էր առաջացել։ Այդ ժամանակ զինուորները այրել էին գիւղերը եւ կոտորել բազմաթիւ մարդկանց։ Այս ջարդը բոլոր պարագաներում մի ահարկու եղեռն էր մարդկութեան դէմ։ Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը անկասկած, նոյն Ապտուլ Համիտ երկրորդն էր, որը ղեկավարում էր Եըլտըզի այդ հրոսակախումբը եւ կոտորում էր ոչ միայն հայերին, այլեւ դէպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը։ (Osman Nuri, Abdul Hamid Sani ve devri sultanati, Իսթանպուլ, 1327, էջ 828, 858, 866, արաբատառ թրքերէն)։

ՄԵՀՄԷՏ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱ, 1884–1912 թթ. չորս անգամ վարել է մեծ վէզիրի պաշտօնը.– Լոնտոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացուել են իրենց ապստամբութեան համար, իսկ Օսմանեան կայսրութեան պաշտօնեաները ենթարկուել են խիստ պարսաւանքի։ Հայերի ապստամբութիւնը գնահատուել է վատ կառավարման եւ յատկապէս կրօնական խտրականութեան հետեւանքով կառավարութեան կողմից հայերի հանդէպ ցուցադրուած դաժանութեան արդիւնք։ (Hatirati Sadri Esbak Kamil Pasa, Կոստանդինիա, 1329, էջ 181, արաբատառ թրքերէն)։

ՍԱՑԻԴ ՓԱՇԱ, ՄԵՀՄԷՏ ՇԱՓՈՒՐ ՁԵԼԵԲԻ, մեծ վէզիր.– Այս տարի (1896 թ.) «Համիտիէ» հեծելազնդերի զօրախաղերի ծախսերը եւ նրանց ռոճիկը ապահովելու համար ռազմական մինիստրութիւնը 35 հազար լիրա տրամադրելու զեկոյց էր ներկայացրել։ Ես չեմ հասկանում, թէ այս տարի ինչ դրդապատճառների հիման վրայ է ցանկութիւն առաջացել անցկացնել «Համիտիէ» հեծելազնդերի զօրախաղեր։ Հայերի աղէտից յետոյ, Անատոլիայի դրութիւնը բաւականին նրբացել է եւ եթէ քրտերը իրենց այս տեղաշարժերով բնակչութեան ունեցուածքին եւ անասուններին նոր բռնութիւններ գործադրեն, որը աւելի հաւանական է, դա առաջ կը բերի մի նոր աղէտ։ (Said pasanin hatirati, Իսթանպուլ, 1328 Հեճիրի թուական, հատոր 2, էջ 372, արաբատառ թրքերէն)։

1915-1916 ԹԹ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԴԱՄԱԴ ՖԵՐԻՏ ՓԱՇԱ, 1919 թ. մեծ վէզիր.– ...Հայերի կոտորածները ծնունդ չեն եղել ցեղային բախումների եւ կամ կրօնական մոլեռանդութեան։ Ես իմ առջեւ նպատակ եմ դնում փաստերը ձեռքիս ցոյց տալ ամբողջ աշխարհին, թէ ո՞ւմ վրայ է ընկնում իսկական պատասխանատուութիւնը այդ սարսափելի յանցագործութիւնների համար։ (Լոյտ Ճորճ, Ճշմարտութիւնը խաղաղութեան դաշնագրերի մասին, Հատոր 2, Մոսկուա, 1957, էջ 200, ռուսերէն)։

ՃԵԼԱԼ ՆՈՒՐԻ, երիտթուրքական գործիչ, իրաւաբան.– Բոլոր դէպքերում հայերի հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով...։ Թուրքերի մի շարք վատ սովորութիւնները բնատուր են եւ գալիս են անցեալի վնասակար բնազդից։ Մենք իւրայինների հանդէպ եւս զթութիւն ցուցաբերելու յատկութիւնը չունինք։ Թուրքերը, ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմիայնց նկատմամբ էլ դաժանութիւն են ցուցաբերում։ (Celal Nuri, Tarihi Istikbal, Istanbul, 1331, s. 184. Osmanli Imparatorlugunun

tarih-i tedennisi, Istanbul, 1913, s. 99, արաբատառ թրքերէն)։

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ ՄԵՀՄԷՏ, ներքին գործերի նախարար.– Ըստ էութեան, զինուորական նախագուշակական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք։ Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղութիւնը...։ Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամէն ինչ եւ յաջողւում է, աշխարհը ընդունում է այդ։ Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի եւ ես գիտեմ որ կը մեռնեմ դրա համար։ (Talaat Pasanin hatiralari, Իսթանպուլ, 1946, էջ 72–73։ Memoires of Halide Edip, Նիւ Եորք, Լոնտոն, էջ 387)։

ՃԵՄԱԼ ՓԱՇԱ, ծովային նախարար, թրքական 4-րդ բանակի հրամանատար.– Երիտթուրքերը դատապարտելով 1894–96 թթ. հայկական դէպքերը, այն համարեցին Ապտուլ Համիտի քաղաքական սխալը, քանի որ նա դաժան միջոցներով ձգտում էր երկարաձգել իր բռնապետութիւնը...։ Հայկական կոտորածների ընթացքում ես եւ այլ յեղափոխականներ գտնուելով Թուրքիայում նոյնպէս դատապարտեցինք Ապտուլ Համիտին, քանի որ նրա այդ քաղաքականութիւնը վնասաբեր էր ոչ միայն թուրքերի, այլեւ ամբողջ օսմանների համար։ (Behcet Cemal, Cemal Pasanin hatiralari, Անքարա, 1959, էջ 340)։

ՄԵՎԼԱՆ ԶԱԴԷ ՌԻՖԱԹ, թուրք հասարակական գործիչ, լրագրող, պատմաբան.– «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութիւնը որոշում կայացրեց (1915 թ.) ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպաննել եւ ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար նախագահութիւնը ստեղծեց Բեհէտտին Շէքիր, Դոկտ. Նազըմ եւ հանրակրթական նախարար Շիւքրի Պէյերից կազմուած մի յանձնաժողով՝ տալով «Երեքի Գործադիր կոմիտէ» անուանումը։ (Mevlan Zade Rifat, Turkiye inkilabinin ic yuzu, Ա. Հատոր, Հալէպ, 1929, էջ 108. արաբատառ թրքերէն)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԷՏԻՄ, Ապտուլ Համիտի քարտուղարներից.– Իմ տկար գրիչը անզօր է նկարագրել Տէր Զօրի դէպքերն ու ոճիրները, նրանց նմանները չկան պատմութեան գրքերում եւ չեն էլ լինի։ «Ալլահը ձեզ ներեց» ասելով, Եփրատի ափն անցկացրին քառասուն հազար դժբախտների եւ այնտեղ իսպառ կոտորեցին։ Փոսը լցրին տասը հազարից աւելի երեխաների, նաեւ թափեցին նրանց վրայ եւ այրեցին։ Աներեւակայելի ոճրագործութիւնների մի շղթայ։ (Մուսթաֆա Նէտիմ, «Հայ Եղեռնը. իմ վկայութիւններս, թուրքերէնից թարգմանեց Արշակ Ս. Շալճեան, Գահիրէ, 1925, Սոֆիա 1936)։

ՖԱԼԻՀ ՌԻՖԿԸ ԱԹԱԹ, երիտթուրքական գործիչ.– ...Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զօհրապն ու Վարդգէսը ճանապարհին սպաննուել են Զէրքէզ Ահմետ եւ Նազըմ չէթէների կողմից։ Ճեմալ Փաշան հրամայեց, որ երկուսն էլ՝ անմիջապէս ձերբակալուեն։ Սակայն Զէրքէզ Ահմէտը եւ Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստանպուլ, քանի որ Ստանպուլից հովանաւորում էին նրանց։

(Falih Rifki Atay, Zeytindagi, Իսթանպուլ, 1957, էջ 78–80)։

ՆԱՑԻՄ ՊԷՑ, երիտթուրքական գործիչ.– Հայոց եղերական տարագրութեան եւ սպանութեան խնդիրը, որ թուրք անունը մարդկութեան անէծքին արժանի կը դարձնէ, անանկ կը կարծեմ թէ համաշխարհային պատմութեան մինչեւ այսօր արձանագրած զարհուրելի դէպքերէն ոչ մէկուն կը նմանի։ Թուրքիոյ ընդարձակ հողամասին որ անկիւնն ալ որոնուի, որ ամենամութ խորշն ալ խուզարկուի, ամենանգութ կերպով խողխողուած հազարաւոր հայու դիակներ եւ կմախքներ պիտի գտնուին։ (Արամ Անտոնեան, Մեծ Ոճիրը, Հայկական Վերջին կոտորածները եւ Թալեաթ Փաշա, Պոսթըն, 1921, էջ 19–20)։

ՋԵԼԱԼ ՊԷՑ, Քոնիայի եւ այնուհետեւ Հալէպի նահանգապետ.– Հայերին տեղահանելու հրահանգը առնելուց յետոյ երբ հրաժարուել էր կատարել այն, հեռացուել էր պաշտօնից.–

«Ես այս նահանգի նահանգապետն եմ եւ չեմ կարող նրա դահիճը դառնալ։ (Ռուբէն Սահակեան, ցեղասպանութեան պատմութիւնից, Երեւան, 1990, էջ 20)։

ՇԵՐԻՖ ՓԱՇԱ, «Համաձայնութիւն եւ ազատութիւն» կուսակցութեան ղեկավարներից.– «Երբ որ մի ժողովրդի, որը կարող էր թուրքական կայսրութեան վերածննդի երաշխիքը հանդիսանալ, ոչ միայն կեղեքում են, այլեւ ոչնչացնում, նոյնիսկ անզգայ մարդու սիրտը կտոր-կտոր է լինում։ Ես ցանկանում եմ արտայայտել իմ զայրոյթը դահիճների դէմ եւ իմ կարեկցանքը՝ մեռնող ժողովրդին» (Ռ. Սահակեան, Ցեղասպանութեան պատմութիւնից, էջ 120–126)։

ԻՍՄԱՅԻԼ ՀԱՔԲԸ, ընդդիմադիր կուսակցութեան ղեկավարներից.– «Ամէն մի հալածանք, անկախ այն բանից, թէ բնակչութեանը որ խաւի դէմ է այն ուղղուած, աններելի յանցագործութիւն է։ Անտարբեր անցնել դրա կողքով, նշանակում է յանցագործութեան մեղսակիցը դառնալ։ Հեռաւոր ծայրամասերում սպաննում են հայերին։ Ամբողջ սրտով ես կարեկցում եմ մեր աղէտեալ հայրենակիցներին»։ (Ռ. Սահակեան, Ցեղասպանութեան պատմութիւնից, էջ 121)։

ՄՈՒՍԹԱՖԱ ԱՐԻՖ, 1918 թ. ներքին գործերի նախարար.– «Ցաւալի է, որ մեր այն ժամանակուայ ղեկավարները ներշնչուած աւազակութիւնից, տարագրութիւնը կիրարկեցին այնպիսի ձեւով, որ նոյնիսկ ամէնից յանդուգն եւ արիւնարբու աւազակները պէտք չէ կարողանային այդպէս ընել... Կառավարութիւնը, որ հրամայեց հայերին դէպի Տէր Զօր աքսորել, չէր էլ մտածել եւ նրանց արաբական ցեղերի մէջ տեղաւորելու եւ սնունդ հայթայթելու մասին»։ (La Renaissance, No. 6, (12, 14), 1918)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԱԶԸՄ ՓԱՇԱ, 1919 թ. կազմուած ռազմական ատեանի յանձնախմբի նախագահ.– «Իրականութիւնն այն է, որ տեղահանութեան քօղի տակ կոտորած են սարքել»։ (Takvimi Vekayi, 28 Յունիս, 1335 (Հեճիրի) / 1919, No. 3596, արաբատառ թուրքերէն)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՆԱԶՄԻ ՊԷՑ, 1919 թ., ռազմական ատեանի դատախազ.– Սահմանադրութեան հռչակումից յետոյ, «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» (Իթթիհատ վէ Թէրաքքը) կուսակցութեան թելադրանքով կատարուած սպանութիւնները, աւերուածութիւնները, վայրագութիւնները, չարաշահումները ծանր հետեւանքներ թողեցին ժողովրդի վրայ։ Օսմանեան պետութեան համար մեծ աղէտ եղան նաեւ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արիւնահեղութիւններն ու կոտորածները։ (Takvimi Vekayi, Ապրիլ 27, 1335/1919, թիւ 3540, արաբատառ թրքերէն)։

ԱՊՏՈՒԼ ՄԷՃԻՏ, թագաժառանգ, 1918–1924 թթ. եղել է խալիֆ.– «Կոտորածները ամենանշնջելի արատներն են, որոնք նսեմացրին մեր ազգն ու ժողովուրդը։ Կոտորածը Թալեաթի եւ Էնվէրի գործն էր»։ (La Renaissance, 18 Դեկտ. 1918)։

ԱԼԻ ՔԵՄԱԼ, Սապահ թերթի խմբագիր.– «Աշխարհ գիտէ եւ սա է ճշմարտութիւնը, որ հայերի կոտորածները կազմակերպուեցին կեդրոնական կոմիտէի հրամաններով։ Այս հրամանները հաղորդուեցին առանձին պատուիրակների միջոցով եւ գործադրուեցին աւազակների ձեռքով իր իսկ կենտկոմի հսկողութեամբ»։ (La Renaissance, 15 Դեկտ. 1918, թիւ 7)։

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼ-ԱԹԱԹՈՒՐՔ, հանրապետական Թուրքիայի առաջին նախագահ.– «Նախկին երիտթուրքական կուսակցութեան այդ մնացորդները, կուսակցութիւն՝ որը պէտք էր պատասխան տար մեր միլիոնաւոր քրիստոնեայ հպատակների կեանքի համար, որոնք անգթօրէն քշուեցին զանգուածաբար իրենց բնակավայրերից եւ ոչնչացուեցին...»։ (Los Angeles Examiner, 1926, Օգոստ. 1)։

ԱԼԻ ՖՈՒԱՏ ԷՐԴԷՆ, թուրք զօրավար, ականատես.– Հարիւր հազարաւոր մարդկանց, հազարաւոր քիլոմեթրերով հեռաւորութիւնների վրայ, առանց նախապատրաստման եւ կազմակերպման տարագրելը նմանուեց հնգոյն դարերում տեղի ունեցած ցեղերի գաղթին։ Ճանապարհները լցուեցին վարակիչ հիւանդութիւններով։ Գաղթականների թշուառ վիճակը շատ նպաստաւոր էր բծաւոր եւ որովայնային տիֆի տարածման համար»։ (Alu Fuad Erden, Birinci hunya harbinde Suria hatiralari, I cild, Իսթանպուլ, 1954, էջ 221)։

ՆԱԶԸՄ ՀԻԲՄԷԹ, թուրք գրող, հասարակական գործիչ.– «Թուրքերը մեծագոյն սխալ կատարեցին բնաջնջելով ազգաբնակչութեանը, Թուրքիայի ամենաշինարար ժողովրդին։ Դրանով թուրք ջարդարարները թուլացրին ամէնից առաջ իրենց երկիրը»։ (Նայիրի Զարեան, Երեւան, 1965, էջ 379)։

1994 Թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Արդի թուրքական պատմագրութիւնը, կառավարութիւնն ու պետական գործիչները պաշտօնապէս հերքում եւ ուրանում են Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները:

Այսպէս, դեռեւս իրենց յուշագրութիւններում Թալեաթը, Ջեմալը եւ այլ երիտթուրքական գործիչներ, յետագայում էլ թուրք պատմաբանները նշում են, որ երկրի ներսում առաջացած ապստամբութեան հետեւանքով կառավարութիւնը նախաձեռնեց հայերի տեղահանութիւնը, ոմանք էլ փորձում են ապացուցել, որ տեղահանութիւնը իրականացուել է Կովկասեան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով:

Աւելի ուշ սկսուեց խօսուել այն մասին, որ այդ տարիներին երկու ժողովուրդների միջեւ տեղի են ունեցել փոխադարձաբար սահմռկեցուցիչ դէպքեր եւ այդ սարսափելի բախումներին զոհ են գնացել ոչ միայն հայերը, այլեւ թուրքերը:

Իսկ 80-ական թուականներին թուրքերը աւելի առաջ գնալով աշխարհով մէկ սկսեցին յայտարարել թէ հայերն են կոտորել թուրքերին: Թուրքական մամուլն ու հեռուստատեսութիւնը նախաձեռնեցին ինչ որ «թուրքական եղբայրական գերեզմանների» յայտնաբերման եւ պեղումների մասին հաղորդումների կազմակերպումը: Այս կապակցութեամբ հրաւիրեցին մասնագէտներ, կազմակերպուեցին գիտաժողովներ, որպէսզի աշխարհով մէկ ապացուցեն, որ դրանք հայերի կողմից կոտորածի ենթարկուած թուրքեր են: Այնուհետեւ այդ «զոհերի» յիշատակին սկսեցին յուշարձաններ կառուցել մի շարք վայրերում:

Կեղծիքն ու խեղաթիւրումը այնքան ակնյայտ էր, որ այդ հարցին այդ օրերին (1987 թ. Փետրուար 18) անդրադարձաւ նաեւ «Սովետական

Ռոսիա» (Խորհրդային Ռուսաստան) պաշտօնաթերթը: Հրապարակուեց ծաւալուն մի յօդուած, որտեղ մատնանշւում էր հետեւեալը.

«Ձախողում կրելով հայկական ցեղասպանութեան հարցում համաշխարհային հանրութեանը խաբելու գործում, Անքարան եւ նրա քարոզչական ապարատը վերջերս փորձում են աշխարհը ցնցել սենսացիոն «մերկացումներով», իբր այդ նոյն տարիներին հայերն են իրականացրել խաղաղ թուրք բնակչութեան զանգուածային սպանութիւնները»:

Եւ զարմանալի չէ, որ նման քարոզչական գործարքները առաւել լայն ծաւալ են ստանում յատկապէս Ապրիլի 24-ի նախաշեմին: Կազմակերպւում են հեռուստատեսային բազմասերիանոց ֆիլմերի ցուցադրումներ, հրատարակւում են յատուկ գրքեր եւ առանձին յօդուածներ մամուլում:

Հարկ է նշել, որ 1994 թ. Ապրիլի 24-ի նախորդած օրերին թուրքական հեռուստատեսութիւնը սկսեց ցուցադրել հայերի եւ յոյների դէմ ատելութեան ոգով նկարահանուած «Ազատագրում», «Կենդանի Պատմութիւն» բազմասերիանոց ֆիլմերը: Լոյս տեսան մի շարք գրքեր, ինչպէս օրինակ Yuzyilinci yil (հարիւրերորդ տարի) համալսարանի դասախօսներից Հիւսէյն Ջելիքի նոր կեղծիքներով հրատարակած գիրքը, որի վերնագիրն էր «Ականատեսների աչքերով Վանի մէջ հայկական զուլումները», Եավուզ Էրջանի «Հայերն ու Իրանը» եւ այլ գրքեր: Մի խօսքով այս նկատառումներով միլիոններ են ծախսւում, որպէսզի քօղարկուեն 1915-16 թթ. Արեւմտեան Հայաստանում եւ առհասարակ ամբողջ Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանութիւնը: Թուրքիան եթէ այս 80 տարիների ընթացքում տարուած է հայերի ցեղասպանութիւնը հերքելու եւ չճանաչելու մոլուցքով, միւս կողմից աշխարհի առաջադէմ մարդկութիւնը կանգնած է խորին համոզմամբ ճշմարտութիւնը պաշտպանելու դիրքերում:

Այսպէս 1915 թ. Մեծ Եղեռնի դատապարտման հարցը միջազգային չափանիշներով լայն ծաւալ ստացաւ 1960-ական թուականներին՝ օրակարգի հարց դառնալով ոչ միայն հասարակական-քաղաքական, այլեւ պետական պաշտօնական շրջանակներում եւ միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններում:

1965 թ. Ապրիլի 24-ին, Մեծ Եղեռնի 50-ամեայ տարելիցի առթիւ, Հայաստանի մայրաքաղաքում հայ ժողովուրդը միասնաբար յայտնում է իր բուռն բողոքը 1915 թ. անմեղ զոհերի յիշատակին: Այն պետական մակարդակով դատապարտւում է նաեւ Ամերիկայի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի մի շարք երկրներում, հայերի մոռացուած ցեղասպանութիւնը բնութագրելով, որպէս ահաւոր յանցագործութիւն ուղղուած աշխարհի մարդկութեան դէմ:

Եւ ահա առաջին անգամ միջազգային չափանիշով այն դատապարտւում է 1965 թ. Յուլիսի 15-ին Հելսինքիում կայացած խաղաղութեան կողմնակիցների համաշխարհային քոնկրեսում, որտեղ ընդունւում է հետեւեալ սահմանումը.

«Ընթացիկ տարին 50-րդ տարելիցն է հայկական ջարդերի, որոնք Օսմանեան Թուրքիան կազմակերպել էր մի ամբողջ ժողովրդի բնաջնջման

միջոցով ազգային հարցը լուծելու նպատակով: Այդ ցեղասպանութիւնն արժեցաւ աւելի քան մէկուկէս միլիոն ազատատենչ հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի կեանքը»:[1]

Այնուհետեւ հայերի ցեղասպանութիւնը եւ ընդհանրապէս ռասիզմն ու ցեղասպանութիւնը օրակարգի նիւթ են դառնում միջազգային բարձր ատեաններում եւ խորհրդաժողովներում:

Այն լսւում է ՄԱԿ-ի մարդու իրաւունքների պաշտպանութեան յանձնաժողովում (1973, Ցուլիս), ԱՄՆ-ի Քոնկրեսում, ինչպէս նաեւ 1984 թ. Ապրիլի 13-16 Փարիզում գումարուած ժողովուրդների մշտական ատեանում: Չնայած այդ խորհրդաժողովներում խստօրէն դատապարտւում է ցեղասպանութեան ակտը, բայց գործնականում դեռեւս չի վաւերացւում: Այնուհանդերձ ցեղասպանութեան վերաբերող այս քննարկումները իզուր չեն անցնում: 1985 թ. Օգոստոսի 27-ին ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքների յանձնաժողովը կրկին օրակարգի նիւթ դարձնելով 1915 թ. հայերի ցեղասպանութեան հարցը, ի վերջոյ ընդունում է դրական որոշում:

Իսկ 1987 թ. Յունիսի 18-ին միջազգային չափանիշներով կատարւում է առաջին լուրջ քայլը, երբ Ֆրանսիայի Ստրասբուրկ քաղաքում Եւրոպական պառլամենտի հերթական նիստում ընդունւում է հայերի ցեղասպանիւնը դատապարտող հետեւեալ որոշումը.

«Եւրոպական Պառլամենտը այն կարծիքին է, որ Օսմանեան կայսրութեան տարածքում հաստատուած հայերի հետ 1915-1917 թթ. կատարուած ողբերգական դէպքերը իրենցից ներկայացնում են ցեղասպանութիւն՝ «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժելու» կոնվենցիայի համաձայն, որն ընդունուել է Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան գլխաւոր ասամպլիայի կողմից 1948 թ. Դեկտեմբերի 9-ին»:[2]

Դժբախտաբար յետագայում Եւրոպառլամենտի այս որոշումը քննարկման նիւթ չդարձաւ այդ խորհրդաժողովին մասնակցող երկրների կառավարութիւնների խորհրդաժողովում, որպէսզի այդ պետութիւններից իւրաքանչիւրը պաշտօնապէս ճանաչէր հայերի ցեղասպանութիւնը:

Այնուհանդերձ Եւրոպառլամենտի ընդունած որոշումից շատ կարճ ժամանակ յետոյ ցեղասպանութեան հարցը պետական մակարդակով առաջին անգամ քննարկման նիւթ է դառնում Հայաստանի Գերագոյն Խորհրդի նստաշրջանում եւ բուռն քննարկումներից յետոյ 1988 թ. Նոյեմբերի 22-ին ընդունւում է 1915 թ. հայերի ցեղասպանիւնը դատապարտող օրէնք:[3]

Եւ ահա 1994 թուականին, հայոց Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախաշեմին աշխարհի մի շարք երկրների խորհրդարաններում, առանձին պետական գործիչների եւ մտաւորականութեան ելոյթներում կրկին բուռն թափ է ստանում հայերի ցեղասպանութեան դատապարտման հարցը:

Մի կողմ թողնենք այն հարցը թէ այս պետութիւնները ինչ քաղաքական շահադիտական նկատառումներ ունեն այդ հարցը նման մակարդակով կրկին բարձրացնելու համար, մեզ համար կարեւորը այն է,

որ նրանք պետական մակարդակով, ի լուր աշխարհի եւ խորին համոզմամբ մէկ անգամ եւս յայտարարեցին եւ դատապարտեցին հայերի ցեղասպանութիւնը:

Եւ վերջապէս, շատ հաւանական է, որ Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցին աշխարհի առաջադէմ մարդկութիւնը, առանձին պետութիւնների կառավարութիւնները, 20-րդ դարի աւարտին, ի վերջոյ պաշտպանելով արդարութիւնն ու ճշմարտութիւնը, գործնական քայլերի դիմեն եւ միջազգային մասշտապով ճանաչեն 1915 թ. հայերի ցեղասպանիւնը:

Ստորեւ բերում ենք 1994 թուականին աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում Մեծ Եղեռնի յիշատակման եւ դատապարտման առթիւ եղած յայտարարութիւններից, ելոյթներից եւ բանաձեւերից առանձին հատուածներ:

ԹՈՒՐԿՈՒԹ ԷՕԶԱԼ.- Թուրքիայի նախկին նախագահ,- «Հայաստանը դեռեւս դաս չի վերցրել Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից նրան հասցուած պատժամիջոցից»: (Asbarez, April 24, 1993, p. 1):

ՆՈՒԶԷԹ ՔԱՆՏԵՄԻՐ.- Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ Թուրքիոյ դեսպան,- «Օսմանեան կայսրութեան անկման շրջանին տեղի ունեցած դէպքերը քաղաքացիական պատերազմ էին եւ ոչ թէ ցեղասպանութիւն, եւ հետեւանք էր հայերուն ու ռուսական բանակին միջեւ համագործակցութեան, որուն նպատակն էր ինքնավար Հայաստան մը կերտել Անատոլիոյ մէջ»: (Ասպարէզ, Մայիս 14, 1994):

ԹԱՆՍՈՒ ՉԻԼԼԷՐ.- Թուրքիայի վարչապետ,- «Այսօր յստակօրէն բացայայտ է, որ հայկական պնդումներն անհիմն են ու երեւակայական պատմական փաստերի տեսակէտով: Հայերը ոչ մէկ ձեւով չեն ենթարկուել ցեղասպանութեան: Հետեւաբար, Թուրքիան կամ Թուրքերը չեն կարող մեղադրուել մի բանում, որը տեղի չի ունեցել: Այս իսկ պատճառով, անիմաստ է նաեւ Թուրքիայից հատուցում պահանջելը կանխամտածուած նման առասպելի դիմաց»: («Նոր Օր» եռօրեայ, Օգոստոս 6, 1994):

ՊԻԼ ՔԼԻՆԹՐԸՆ.- ԱՄՆ-ի նախագահ,- «Այս հանդիսաւոր օրը ես միանում եմ համայն աշխարհի հայերի հետ յարգելու Օսմանեան կայսրութիւնում 1915 թուին կազմակերպուած հայկական ջարդերի զոհերի յիշատակը: Այդ ողբերգութեան հետեւանքները բոլորիս խորապէս յուզել են եւ մենք միասին սգում ենք այդքան շատ անմեղ կեանքերի ահաւոր կորուստը: Այդուհանդերձ, նոյնիսկ այդպիսի կործանարար իրադարձութիւնից յետոյ էլ հայկական հարուստ ու կենսունակ մշակոյթը շարունակել է ծաղկել: Արտասովոր ճկունութիւն եւ խիզախութիւն ցուցաբերելով՝ ամերիկահայերը խոշոր ներդրումներ են կատարել մեր երկրի յաջողութեան եւ զարգացման մէջ»: («Ազգ», Ապրիլ 26, 1994):

ՀԷՐՐԻ ԿԻԼՄԸՐ.- Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպան,- «Հայաստանը յաճախ եղել է ողբերգութիւնների եւ արցունքների երկիր: Բայց չնորհիւ հայաստանցիների եւ սփիւռքահայերի ծանր աշխատանքին, Հայաստանը կարող է նորից դառնալ խոստումի եւ յուսոյ երկիր: Ես յոյսով եմ, որ

ապագայի արցունքները կը լինեն ուրախութեան արցունքներ։ Ես յոյսով եմ եւ հաւատում եմ, որ մենք բոլորս կ'ապրենք, տեսնելու այդ օրը»։

(«Նոր Օր» եռօրեայ, Յունիս 18, 1994)։

«Գիտէի թէ Ապրիլ 24-ը կարեւոր թուական մըն է հայերու համար, եւ այս տարի առիթը ունեցայ զգացական կերպով ապրելու ինքս ալ։ Եւ մեծապէս զգացուած էի Հայկական Ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն նահատակներուն նուիրուած յուշակոթողին առջեւ»։

("Armenian Life, June 22, 1994, p. 6).

ԷՏՈՒԸՐՏ ՔԵՆԵՏԻ.- ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգից դեմոկրատ-սենաթը,- «Այսօր մենք կրկին խոնարհւում ենք մէկուկէս միլիոն հայերի յիշատակի առջեւ, որոնք զոհ գնացին դարասկզբին Օսմանեան կայսրութիւնում կազմակերպուած ցեղասպանութեանը...։ Ցանուն իրենց հաւատի հայերին վիճակուած հրէշաւոր տառապանքները, արիութիւնը, որով նրանք կրեցին այդ ողբերգութիւնը, աննախադէպ են մարդկութեան պատմութեան մէջ։ Ահա թէ ինչու ես պաշտպանում եմ Ապրիլի 24-ը հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի ազգային օր յայտարարելու գաղափարը»։ («Ազգ», Ապրիլ 23, 1994)։

ՌԱՊԸՐԹ ՏՈԼ.- ԱՄՆ-ի Քոնկրէսի սենաթը,- «Ես այսօր վեր կենալով միանում եմ իմ գործընկերներին խորը վշտակցութեամբ յիշելով հայերի ցեղասպանութեան ողբերգական իրադարձութիւնները։ Այդ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնն էր բայց ոչ վերջինը։ Մենք պէտք է գործադրենք մեր բոլոր հնարաւորութիւնները, որպէսզի բնաւ չկրկնուեն պատմութեան այդ աղէտները։ Սա է միակ ճանապարհը մեր յարգանքի տուրքը մատուցելու անցեալի ցեղասպանութեան զոհերին»։ ("Asbarez" daily April 30, 1994, p. 8-9)։

ՌԻՉԸՐՏ ԼԵՀՄԱՆ.- ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,-«1915-1923 թուականներին Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմից ցեղասպանութեան ենթարկուեց հայ ժողովուրդը։ Կոտորուեց մէկուկէս միլիոն մարդ։ Կանայք եւ երեխաներ։ Օսմանեան կայսրութեան կողմից էթնիկական այս ժողովրդի բնաջնջու-մը, իրօք որ ողբերգական կորուստ էր, որի հետեւանքով զոհուեց հայերի երկու-երրորդ մասը, որոնք բնակւում էին իրենց հայրենիքում։ ("Asbarez" daily, April 30, 1994, p. 8)։

ԷԼԹՈՆ ԿԱԼԵԿԼԻ.- ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,- «Առաջին Համաշխարհային Պատերազմի սկզբին Օսմանեան կայսրութիւնում ապրում էին 2.5 միլիոն հայեր։ Այսօր 80,000-ից էլ քիչ են մնացել Թուրքիայում, այն էլ մեծամասնութեամբ Ստանպուլում եւ Թուրքիայի Արեւմտեան մասում։ Հայերի նախկին բնօրրանը հան-դիսացող Արեւելեան նահանգները փաստօրէն մնացել են առանց հայերի։

Այսօր, յիշելով հայերի ցեղասպանութեան զոհերին, մենք երախտագիտութեամբ գնահատում ենք նաեւ մէկ միլիոն ամերիկահայերին, որոնք իրենց խորը ներդրումն ունեն այս երկրի բար-գաւաճման բնագաւառում»։ ("Asbarez" daily, April 30, 1994, p. 8)։

ՊԱՐՊԱՐԱ ՊՈՔՍԵՐ.- ԱՄՆ-ի Քոնկրէսի սենաթը,- «1915 թ. Օսմանեան կայսրութիւնը սկսեց ցեղասպանութեան արշաւ ծաւալել հայ ժողովրդի նկատմամբ։ Հայերը բռնի տեղահանութեան ենթարկուելով իրենց տներից կոտորուեցին միլիոններով։ Հայ ղեկավարները ձերբակալուեցին թուրքերի կողմից եւ սպաննուեցին զանգուածաբար։ Այդ սարսափներից վերապրողները՝ կանայք, երեխաները եւ ծերունիները պարտադրուեցին քայլել դէպի Սիրիայի անապատները։ Այդ բռնագաղթի ընթացքում, տանջանքից, սովից եւ հիւանդութիւնից զոհուեց մօտ մէկուկէս միլիոն մարդ»։ ("Asbarez" daily, April 30, 1994, p. 9)։

ՋԱՎԻԷ ԲԵՍԵՐԲԱ.- ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամ,- «Այսօր, ես պէտք է նախ հարց տամ. ի՞նչպէս կարելի է բառերով արտայայտել մէկուկէս միլիոն անմեղ մարդկանց ողբերգական կորուստը։ Այնուհանդերձ, ցեղասպանութեան իրական փաստը այնքան անըմբռնելի է, որ այն ակամայ ստիպում է արտայայտուել, յիշել եւ յարգել յիշատակը հայերի ողբերգութեան։ Լռել եւ ուրանալը առաւել ծանրացնում է մարդ-կութեան դէմ ուղղուած այդ ոճրագործութիւնը, որը գործադրուել է 1915-1923 թուականներին Օսմանեան կայսրութեան կողմից։ Միմիայն, այն դէպքում երբ բոլոր կողմերը կը ճանաչեն հայերի ցեղասպանութեան ծաւալն ու խորութիւնը, մենք կը կարողանանք հաստատել ճշմար-տութիւնն ու խաղաղութիւնը այդ տագնապալի տարածքում։ ("Asbarez" daily, April 30, 1994, p. 9)։

ՎԻԲ ՏԷՅՎԻՏ ԲՈՆԻԵՐ.- ԱՄՆ-ի Քոնկրէսի մեծամասնութեան պալատի անդամ,- «Քոնկրէսի մակարդակով ցեղասպանութեան նշումը յատկապէս անհրաժեշտ է այն միտումով, որ Թուրքիան յետագայ տարիներին մերժում է ընդունել այդ ահաւոր արարքները։ Որպէսզի կանխենք այդ մոլեգնութեան կրկնութիւնը, մենք երբեք չենք թոյլատրելու նրանց, որոնք ձգտում են թաքցնել հայերի ցեղասպանու-թիւնը կամ իրականացնել որեւէ այլ ցեղասպանութիւն։ Եւ քանի մենք շարունակենք միատեղ յիշել հայերի ցեղասպանութիւնը, նրանց երբեւէ չի յաջողուելու անելու այդ»։ ("Asbarez" daily, April 23, 1994։

ՄԱՐԻՕ ՔՈՒՕՄՕ.- Նիւ Եորքի նահանգի կառավարիչ,- «Այսպիսի առիթներով երբ կը համախմբուինք յիշատակելու Մեծ Եղեռնը, մենք պէտք է նաեւ պահ մը կանգ առնենք տօնելու հայկական ոգին վերապրումը։ Այդ ոգին գօրաւոր է այսօր որպէս կենսական մասը ներկայ Ամերիկայի եւ առաւել չափով պիտի գօրանայ յառաջիկայ տարիներուն։ Նահատակներու եւ վերապրողներու զաւակները, թոռներն ու ծոռները կենդանի վկաները կը հանդիսանան հայ ժողովուրդի քաջութեան եւ ապրելու անընկճելի կամքին։ Նաեւ, անոնք երաշխիքը կը ներկայացնեն ձեր ապագայ կարելիութիւններուն՝ ոչ միայն այս երկրին մէջ, այլեւ Մայր Հայրենիքին մէջ»։ («Նոր Օր» եռօրեայ, Մայիս 18, 1994։

ԱՆՆԱ ԻՇՈՒ.- ԱՄՆ-ի Քոնկրէսի ներկայացուցիչների պալատի անդամ,- «1915 թ. Ապրիլի 24-ը այն օրն էր, երբ հարիւրաւոր հայ ղեկավարներ ձերբակալուեցին եւ սպաննուեցին Ստանպուլում եւ այլ վայրերում։ Այդ իրադարձութեան 79-րդ տարելիցին մենք մեր յարգանքի

տուրքն ենք մատուցում այդ նահատակների, ինչպէս նաեւ Օսմանեան կայսրութեան կողմից կոտորածի ենթարկուած մէկուկէս միլիոն հայերի յիշատակին: Մենք անում ենք այս, որովհետեւ այդ մեր բարոյական պարտականութիւնն է աշխարհին յիշեցնելու, որ մի ծանր ողբերգութիւն տեղի ունեցաւ մեր ժողովրդի հանդէպ, որ հայերի կոտորածը մի աղէտ էր աշխարհի բոլոր ազգութիւնների համար, որ նման անակնկալ ագրեսիան ի վերջոյ հասցնում է դաժանութեան»: ("Asbarez" daily, April 30, 1994, p. 9):

ՃԻՄ ՔՈՍԹԱ.- Քալիֆորնիոյ նահանգի խորհրդաժողովի եւ Ծերակոյտի անդամ,- «Մենք ոչ միայն պէտք է ցեղասպանութեան ճանաչումը կատարենք իբրեւ ծրագրուած եղեռն, այլ նահատակները յիշելով եւ մեղաւորները դատապարտելով պէտք է աշխատինք անիրաւութեանց դէմ, որոնք կը խախտեն մարդկային հիմնական իրաւունքները»: («Ասպարէզ», Մայիս 11, 1994):

ՃԱՆ ԿԱՐԱՄԵՆՏԻ.- Քալիֆորնիոյ նահանգի կառավարիչի ընտրութեան դեմոկրատ թեկնածու,- «Ես կ'ընդունիմ հայկական ցեղասպանութեան ճանաչումը»: («Ասպարէզ», Մայիս 13, 1994):

* * *

Ա.Ա. ՆՈՒԿԻՆ.- «Վիպոր Ռոսիի» (Ռուսաստանի ընտրութիւն) ընտրական միաւորման պատգամաւոր,- «Աւարտուող 20-րդ դարը կարող է մարդկութեան պատմութեան մէջ մնալ, որպէս արիւնալի հարիւրամեակ, ամենասարսափելի պատերազմներով եւ ազգերի զանգուածային բնաջնջումներով: Այդ կարգի առաջին գործողութիւնը 1915 թուականի հայերի ցեղասպանութիւնն է: Օսմանեան կայսրութեան փանթուրքական կառավարութիւնը լիովին ոչնչացրեց Արեւմտեան Հայաստանի բնիկ ազգաբնակչութեանը»:

(1994 թ. Ապրիլի 20-ի Ռուսաստանի Պետական Տումայի նստաշրջանի սղագրական արձանագրութիւններից):

(Այս եւ յաջորդ նիւթերը տե՛ս «Ասպարէզ» Ապրիլ 26, Մայիս 4, 1994):

«Ռուսաստանի ֆեդերալ ժողովի Պետական Տուման ճանաչում է 1915 թ. Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցած պատահարը, որպէս ցեղասպանութիւն եւ դատապարտում է դրա կազմակերպիչներին: Ապրիլի 24-ը յայտարարւում է ցեղասպանութեան հայ նահատակների յիշատակի օր եւ միաժամանակ համերաշխութեան օր բոլոր ազգերի հետ, ովքեր մեր օրերին ենթարկուել են ցեղասպանութեան»:

(Այս յայտարարութիւնը քննարկման է ներկայացուել «Վիպոր Ռոսիի» միաւորման կողմից 1994 թ. Ապրիլի 20-ի Ռուսաստանի Պետական Տումայի նստաշրջանում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՒՑՔՈՅ.- ռուս քաղաքական գործիչ,- «Հայ ժողովրդի հետ միասին խորապէս սգում եմ 1915 թուականի հրէշաւոր ցեղասպանութեան զոհերի համար: Այդ ահաւոր չարագործութիւնը, որը դատապարտուել է բոլոր նրանց կողմից, ում թանկ են մարդասիրութեան եւ մարդու հանդէպ յարգանքի սկզբունքները, այսօր կրկին ստիպում է

խորհել եւ ամէն ինչ անել, որպէսզի նման բան այլեւս չկրկնուի:

Ռուսաստանը, Հայաստանի հետ իր բազմադարեան պատմական կապերի տրամաբանութեամբ, պէտք է յիշի եղբայրական քրիստոնեայ ժողովրդի հանդէպ ողբերգական դատը: Ժամանակն է, որ ռուսաստանեան ղեկավարութիւնը հասկանայ, որ Քրիստոսի հաւատով, պատմական եւ անխախտ բարեկամութեամբ ամրապնդուած եղբայրական ժողովուրդների միասնութիւնը, միայն այն ժամանակ է զօրաւոր, երբ ուժեղն օգնում է թոյլին, երբ փորձութեան ծանր ժամին մէկի վիշտը դառնում է միւսինը:

Այսօր, սգալով ձեզ հետ, հաւատում եմ, որ կը գայ ժամանակը, երբ կը դադարի արիւն հեղուել ձեր սրբազան եւ բազմաչարչար հողում: Հաւատում եմ, որ Հայաստանը եւ նրա աննման ու հպարտ ժողովուրդը կ'ապրեն խաղաղութեան պայմաններում, արժանապատիւօրէն եւ երջանիկ»:

Ա.Մ. ՏՈՐՈՎՍԿԻԽ.- Լիբերալ-ժողովրդավարական կուսակցութեան ներկայացուցիչ: Ցարգելի պատգամաւորներ, 1995 թ. Ապրիլի 24-ին հայ ժողովուրդը նշելու է հայկական ցեղասպանութեան 80-ամեայ տարելիցը, որն իրագործուել է Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմից:

Պատմական տեղեկանք: 1915 թուականն է. Առաջին Համաշխարհային Պատերազմ: Ռուսաստանը Անդրկովկասում պատերազմում է Թուրքիայի հետ, քանզի վերջինս հանդէս է գալիս Գերմանիայի կողմից:

Եւ ահաւասիկ, ռուսասիրական կողմնորոշումների համար, կարճ ժամանակաընթացքում ոչնչացուում է մէկ ու կէս միլիոն հայ: Հայերը վաղուց ի վեր ապրում էին ռուսական կայսրութեան կազմում, սակայն նրանց միւս մասը գտնուում էր Թուրքիայի հպատակութեան տակ: Հայերը մշտապէս ձգտել են ուղղափառ Ռուսաստանին, ցանկացել են ապրել մեր ժողովրդի հետ միասին: Վերը նշեալ պատճառներով թուրքական իշխանութիւնները իրագործեցին բարբարոսութեան այդ աքտը»:

(1994 թ. Ապրիլի 22-ի Ռուսաստանի Պետական Տումայի նստաշրջանի արձանագրութիւնից):

«Ի յիշատակ 1915-1916 թթ. հայկական Եղեռնի զոհերուն.

«20-րդ դարը նշանաւորուել է մարդկութեան ոգու եւ կամքի խոշորագոյն յաղթանակներով: Սակայն, այն կը մնայ նաեւ պատմութեան մէջ համաշխարհային պատերազմների արհաւիրքներով, բռնատիրական վարչակարգերով եւ մարդկութեան նկատմամբ նողկալի յանցագործութիւններով:

Ցեղասպանութեան յայտնութեան առաջին վկայութիւնը հայերի զանգուածային կոտորածներն ու բռնի տեղահանութիւններն էին Օսմանեան կայսրութիւնում 1915-16 թթ.: Արդիւնքում զոհուեց աւելի քան մէկ միլիոն մարդ եւ հասցուեց ահռելի մեծ վնաս աշխարհի ժողովրդների ընտանիքին:

Մարդկային խորը ցաւը, անկախ ազգութիւնից եւ հաւատից, զոհուածների եւ կամ աշխարհ չեկած բանաստեղծների, առեւտրականների, գիւղացիների եւ գեղանկարիչների հանդէպ ամենուրեք յաւերժական է:

Ռուսական Ֆեդերացիայի Պետական Դումայի նստաշրջանը, այդ ողբերգութեան յիշատակութեան 79-րդ տարելիցի նախօրէին, դատապարտելով հայերի ցեղասպանութիւնը արտայայտում է իր խորը ցաւակցութիւնները հայ ժողովրդին եւ կիսում է իր կարեկցանքը ցեղասպանութեան զոհ գնացած վերապրողներին, որոնք ապրում են ռուսական Ֆեդերացիայում եւ կամ ամբողջ աշխարհում:

Ցիշատակն ու խղճմտանքը մնալու է մեզ հետ առյաւէտ»:

(Յայտարարութիւնը ընդունուած է Ռուսաստանի Պետական Դումայի Ապրիլի 22-ի նիստում):

«1995 թ. Ապրիլի 24-ին հայ ժողովուրդը նշելու է հայկական ցեղասպանութեան 80-ամեակը, որն իրագործուել է Օսմանեան կայսրութիւնում, թուրքական կառավարութեան կողմից, Առաջին Համաշխարհայինի տարիներին: Ցաւօք հայերը Ռուսաստանում այդ ողբերգական տարելիցը նշում են միայնակ, կամ լաւագոյն դէպքում նրանց սգոյ միջոցառումներին, որպէս հրաւիրուածներ, մասնակցում են Ռուսաստանի միայն հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

Պաշտօնական Ռուսաստանը լռում է:

Եւ դա այն դէպքում, երբ հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմից իրագործուել է զուտ նրանց ռուսամէտ կողմնորոշումների համար:

Խորհրդային Միութիւնը ոչ միայն չդատապարտեց այս չարանենգ յանցագործութիւնը մարդկութեան դէմ, այլ նոյնիսկ դէմ քուէարկեց ՄԱԿ-ի ենթայանձնախմբի առաջարկին, ցեղասպանութեան դատապարտութեան առիթով եւ դրանով գրանցեց ռուսական դիւանագիտութեան պատմութեան ամենախայտառակ էջերից մէկը:

Արդ դատապարտելով հայերի ցեղասպանութիւնը, նախ եւ առաջ կը կատարենք մեր բարոյական եւ պատմական պարտքը մեր դաշնակցի հանդէպ, իսկ քաղաքական առումով, յստակութիւն կը մտցնենք ռուս-հայկական յարաբերութիւններու միջեւ:

(Ռուսաստանի Լիպերալ-Ժողովրդավարական Կուսակցութեան այս յայտարարութիւնը ընդունուած է 1994 թ. Ապրիլի 22-ին Ռուսաստանի Պետական Դումայի նստաշրջանում):

* * *

ԵՈՍԻ ՊԵՅԼԻՆ.- Իսրայէլի արտաքին գործերի փոխնախարար,- «Տիար նախագահ, խորհրդարանի անդամներ. հարցը, որ բերուեցաւ այս հարցաքննութեամբ եւ ինչ որ հետեւեցաւ անոր, հարց մըն է, որ մեզ կը հետապնդէ երկար տարիներէ ի վեր: Ըլլայ Եւրոխորհրդարանի մէջ, ըլլայ Եւրոպայի մէջ կամ ուրիշ տեղեր, երբեմն մինչեւ Միացեալ Նահանգներու մէջ թուրքերը կը փորձեն դէմ կենալ այս կամ այն յիշեցումներուն, ըլլայ թանգարաններու կամ այլ միջավայրերու մէջ, հայերու հանդէպ գործադրուած ջարդին, որ տեղի ունեցաւ թուրքերու ձեռքով, գրեթէ ութսուն տարիներ առաջ: ...Ատիկա իսկական ջարդ էր: Ցեղասպանութիւն էր: Եւ մենք պիտի քաջալերենք յիշատակութիւնը, որովհետեւ այս դէպքը այնպիսի պարագայ մըն է, զոր ամբողջ աշխարհը պէտք է յիշէ»:

(Հատուածը քաղուած է Իսրայէլի խորհրդարանի 209-րդ նիստից. բանաւոր հարցաքննութիւն թիւ 305): «Ասպարէզ», Մայիս 10, 1994:

«Մենք ամենուրեք հաստատակամօրէն կը պայքարենք այդ ժամանակներում տեղի ունեցած դէպքերն անտեսելու բոլոր փորձերի դէմ: Սիոնիզմ այստեղ գործ չունի: Մեզ համար ընդունելի չեն այն պարզունակ բացատրութիւնները, թէ կատարուածը պատերազմական իրավիճակով պայմանաւորուած դէպքեր էին: Ոչ, դա պատերազմ չէր, դա անկասկած կոտորած էր: Դա ցեղասպանութիւն էր, եւ մենք աջակցելու ենք, որ այդ դէպքերը յիշատակուեն, քանզի դրանք այնպիսիք են, որ աշխարհը պէտք է յիշի»:

(Հայաստանի մօտ Իսրայէլի դեսպան Պարուխ Պէն Ներիա, Մայիս 6 թուակիր ՀՀ արտաքին գործոց նախարար Վահան Փափազեանին ուղղուած նամակից, որտեղ մէջբերուած է Իսրայէլի արտաքին գործոց նախարար Եոսի Պէյլինի 1994 Ապրիլ 27-ին, Իսրայէլի խորհրդարանէն հայկական ցեղասպանութեան մասին ունեցած ելոյթէն վերոյիշեալ հատուածը):

* * *

«Ֆրանսիայի հանրապետութիւնը, ճանաչելով ցեղասպանութիւնը, որին 1915-1922 թթ. Օսմանեան կառավարութեան որոշումով, զոհ գնաց հայ ժողովուրդը, յանձն է առնում ազգային հոգի վրայ ամէն տարի նշել նրա յիշատակումը եւ աշխատել միջազգային հանրութեանը ճանաչել տալ մարդկութեան դէմ գործուած այդ ոճիրը»:

(Ֆրանսիայի խորհրդարանի համայնավար պատգամաւորական խմբակցութեան առաջարկը): («Ազգ», Ապրիլ 23, 1994):

ԼՈՒԻԶ ԱԼՊԵՐԹՈ ԼԱԳԱԺԷ.- Ուրուկուէյի հանրապետութեան նախագահ.- «Հայ ժողովուրդի դէմ գործուած ցեղասպանութեան ոգեկոչման այս ձեռնարկին մենք կը մասնակցինք հանրապետութեան կառավարութեան անունէն: Կը մասնակցինք ոչ միայն այն պատճառով, որ ազգովին կը դատապարտենք ամբողջ 20-րդ դարու ընթացքին տեղի ունեցած եւ տակաւին այսօր մեզի տառապանք պատճառող նմանօրինակ գործողութիւնները, որոնք կը շարունակուին Եւրոպայի, Ափրիկէի մէջ եւ այլուր, այլ մեծարելու համար հայ համայնքը, որուն այնքան պարտական է մեր երկիրը: Այն համայնքը, որ մեր երկրին տուած է իր ժողովուրդին տաղանդն ու աշխատանքը: Նոյնիսկ այսքան տխուր տարելիցի այս օրը մենք ուրախ ենք, որ մեր հայրենակից հայերը գտած են խաղաղութիւն, ազատութիւն եւ բարեացակամութիւն»:

(Հատուածը քաղուած է 1994 թ. Ապրիլի 24-ին Մոնթէվիտէօյի անկախութեան հրապարակում արտասանած ելոյթից): («Ասպարէզ», Մայիս 4, 1994):

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1· Տես «Էջմիածին» հանդէս 1965 Օգոստոս-Սեպտեմբեր, էջ 67-70:

2· Direction generale de L'information et des relations publiques. Division des publication et comptes rendues de presse. Strasbourg. le 16-19 Juin 1987. p. 41. Տե՛ս Ռուբէն Սահակեան, ցեղասպանութեան պատմութիւնից, Երեւան, 1990, էջ 322:

3· Տե՛ս «Սովետական Հայաստան» Յունուար 23, 1989:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՖԵՐՄԱՆՆԵՐԻ (16-18-րդ դդ.) 1

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱՊՏՈՒԼ ՀԱՄԻՏԻ ԲՈՒՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 17

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ... 34

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ 49

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 63

1994 Թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ 88



Աւետիս Փափազեանը հայ-թրքական յարաբերութիւններու միջնադարու մասնագէտ է. գիտական աւարտաճառը պաշտպանած է 1967 թ. Յուլիսին Մոսկուայի մէջ: Միջազգային ճանաչման արժանացած՝ հանրայայտ թրքագէտ Աննա Տվերիտինովայի ղեկավարութեամբ եւ 32 տարի շարունակաբար աշխատած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի մէջ: Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի մէջ դասաւանդած է նաեւ Թուրքիոյ պատմութիւնն ու օսմաներէն լեզուն (արաբատառ հին թուրքերէն):

Իր հրատարակութիւններուն մեծ մասը նուիրուած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի մասին միջնադարու թուրք պատմագիրներու հաղորդած նիւթերու ուսումնասիրութեան:

Հանդիսանալով օսմաներէնի գիտակ եւ աղբիւրագէտ-պատմաբան, վերջին տարիներուն ան զբաղած է նաեւ հայերու ցեղասպանութեան հարցերով եւ 1988 թ. հրատարակած է «Հայերի Ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» գիրքը եւ շարք մը շահեկան այլ յօդուածներ:

Գիտական զեկուցումներով մասնակցած է միջազգային գիտաժողովներու: